ԴԱՎԻԹ Ֆ. ԹԻՆՈՅԱՆ

# ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԻՇԽԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ

## 1320–1424 ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 2011

9(47.925)
Թ-61

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԴԱՎԻԹ Ֆ. ԹԻՆՈՅԱՆ

4562

# ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՆՔՆԻՇԽԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ 1320–1424 ԹԹ.

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
75

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
75

ԵՐԵՎԱՆ 2011

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Թ614

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ ՝ պ.գ.թ., դոցենտ Գ.Ս. Գրիգորյան**
**Գրախոս՝ պ.գ.թ., դոցենտ Գ.Ս. Հարությունյան**

Թ 614 Թինոյան Դ.Ֆ. Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320–1424 թթ./Դ.Ֆ. Թինոյան; Պատ. խմբ.՝ Գ.Ս. Գրիգորյան. – Եր.: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստ., 2011, էջ 195:

Մենագրությունը նվիրված է Կիլիկիայի հայոց պետության պատմությանը: Աշխատության մեջ հայկական և օտարալեզու աղբյուրների համադիր քննությամբ ներկայացվում է Կիլիկյան հայկական պետականության թուլացման և կործանման շրջանի (1320–1424 թթ.) նվազ ուսումնասիրված և հայ պատմագիտության մեջ վիճելի համարվող հիմնահարցերը: Աշխատությունը նախատեսված է պատմաբանների և ընթերցող լայն հանրության համար:

ISBN 978-99941-73-61-7

ՀՏԴ 941 (479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)

© Պատմության ինստիտուտ, 2011
© Դ.Ֆ. Թինոյան

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Շնորհիվ իր առանձնահատուկ աշխարհաքաղաքական դիրքի Կիլիկյան Հայոց պետությունը առանցքային տեղ է գրավել Եվրոպա–Ասիա–Աֆրիկա ռազմաքաղաքական, տնտեսական, մշակութային, փոխհարաբերություններում: Սակայն, եթե XIII դարում Կիլիկիայի իշխող վերնախավին հաջողվում էր սակավ կորուստների, դիվանագիտական նվազ զիջումների գնով հասնել պետության կենսունակության ապահովմանը, ապա իրավիճակը զգալիորեն փոխվեց XIV դարի սկզբից: Ըստ էության XIV դարի 20-ական թթ. սկսած կիլիկյան իշխող վերնախավի առջև մեկ գերնպատակ էր դրված՝ ապահովել պետության գոյությունը: Ռազմաքաղաքական իրավիճակը փոխվել էր ի վնաս Կիլիկիայի. ի տարբերություն XIII դարի, Հայոց թագավորությունը զրկվել էր իրական դաշնակցային օգնության հնարավորությունից՝ ինչպես մոնղոլական իլխանությունից, խաչակրաց պետություններից (որոնցից մնացել էր միայն Կիպրոսի թագավորությունը), այնպես էլ՝ արևմտաեվրոպական պետություններից: Այնուամենայնիվ, թագավորության իշխող վերնախավը փորձեց կասեցնել պետականության անկման գործընթացը, որը, մասամբ, նրան հաջողվեց: Հայոց թագավորության 1320–1375 թթ. պատմությունը թեև արժանացել է ուսումնասիրողների ուշադրությանը, այնուամենայնիվ կարծում ենք, որ այս շրջանի որոշ իրադարձություններ նվազ ուշադրության են արժանացել: Այդ առումով պակաս շահեկան վիճակում է գտնվում Կիլիկիայի XIV դարի վերջին քառորդի և XV դարի առաջին քառորդի պատմությունը, որը, գրեթե ուսումնասիրված չէ: Այս աշխատանքի հիմնական նպատակն է ուսումնասիրել Կիլիկիայի հայկական պետության քաղաքական պատմությունը 1320–1424 թթ., քանզի այս ժամանակահատվածը մի առանձին դարաշրջան է կազմում պետականության թուլացման և անկման առումով:

Հաշվի առնելով մեր առջև դրված խնդիրները ինչպես նաև

տարաբնույթ ռազմաքաղաքական իրողությունները՝ աշխատությունը բաժանել ենք երեք հատվածի:

Առաջինը ներառում է Լևոն IV-ի[1] գահակալման ժամանակաշրջանը, որի սկիզբը նշանավորվում է քաղաքական անկայունությամբ: Այս շրջանում են տեղի ունենում Օշին արքայի մահը, մոնղոլական իլխանության՝ Իկոնիայի տեղապահ Թամուրդաշի, ապա և մամլուքների արշավանքները, խնամակալական խորհրդի գործունեությունը: 1323 թ. հաշտությունը որոշակի խաղաղ գոյակցություն է ապահովում թագավորության համար. այդ հարաբերական անդորրը պահպանվում է ընդհուպ մինչև 1335 թ.: Այս տասներկու համեմատաբար խաղաղ տարիների զարգացումը խախտվում է 1335–1336 թթ. հայ-մամլուքյան նոր պատերազմով, որտեղ հայկական կողմը, զրկված լինելով Իլխանության և Արևմուտքի իրական օգնությունից, զրկվում է իր կենսական տարածքներից: Ժամանակաշրջանի ավարտը նշանավորվում է Լևոն IV-ի մահով և քաղաքական նոր իրավիճակի ստեղծմամբ:

Երկրորդն ընդգրկում է Կիլիկիայի թագավորության 1342–1375 թթ. պատմությունը: Այս փուլում քաղաքական անկայունությունն է՛լ ավելի է խորանում, և վերածում ներքաղաքական բախման, որի հետևանքով սպանվում է Գի թագավորը: Գաhի վրա հանձինս կողմնային ճյուղի՝ Նղրեցիների վերահաստատվում է Կոստանդին գունդստաբլի ընտանիքը: Կոստանդին II Նղրեցի Հեթումյանն իր գահակալության երկու տասնամյակների ընթացքում թե՛ ռազմական, թե՛ քաղաքական և թե՛ դիվանագիտական ջանքերով փորձում է կանխել պետության կործանումը, որը, սակայն, հանգեցնում է ընդամենը այդ գործընթացի դանդաղեցմանը: Այս փուլը շարունակվում է 1363–1365 թթ. գահակալական պայքարով, ապա և Կոստանդին III-ի գահակալմամբ (1365–1373 թթ.): Երկրորդ փուլն

[1] Առավել նախընտրելի ենք համարում Կիլիկիայի Հայոց թագավորության գահակալների հերթականությունը սկսել առաջին թագավորից, այն է՝ Լևոն I-ից (1198–1219 թթ.) Դ.Թ.:



ավարտվում է Լևոն Լուզինյանի իննամսյա գահակալությամբ, որի վերջն էլ ընդունված է համարել Կիլիկիայի Հայոց թագավորության կործանման թվական:

Աշխատության երրորդ հատվածում ուսումնասիրվում է 1375–1424 թթ. ժամանակահատվածը: Սսի գրավումից հետո անգամ Հայոց հոգևոր և աշխարհիկ վերնախավը պահպանեց իր իրավունքների որոշակի հատվածը: Կիլիկիայի Հայոց կաթողիկոսարանը գրեթե 70 տարի պահպանեց իր համահայկական նշանակությունը: Ավելին, Լեռնային Կիլիկիայում գոյատևող ավագանու մեջ առանձնանում էր նաև գերական, որը կրում էր «թագավոր» տիտղոսը: Սակայն այդ տիտղոսի գործածությունը հիմնականում սահմանափակվում էր հայկական միջավայրում: Դա էր պատճառը, որ օտարալեզու աղբյուրներում Կիլիկիայի լեռնային շրջաններում իշխած և իրեն Հայոց թագավոր համարող Կոստանդինի վերաբերյալ գրեթե տեղեկություններ չեն պահպանվել: Որպես ինքնիշխան կազմավորում, Կիլիկյան հայկական պետությունը փաստացի դադարեց գոյություն ունենալուց XV դարի 20-ական թթ., որն էլ համարել ենք այս հատվածի և աշխատության ավարտը:

XIV դարի և XV դարի առաջին քառորդի Կիլիկիայի պատմությունը լուսաբանելու համար ուսումնասիրության աղբյուր են հանդիսացել հայկական, արևմտյան և արաբական մի շարք սկզբնաղբյուրներ: Հայկական սկզբնաղբյուրներից այս շրջանի մասին արժեքավոր վկայություններ են պարունակում Սամուէլ Անեցու ժամանակագրությունը, առավել ստույգ՝ նրա Շարունակողի թողած սակավ, սակայն շատ արժեքավոր տեղեկությունները XV դարասկզբի վերաբերյալ:[2] Հատկապես կարևորվում է Սամուէլ Անեցու Շարունակողի տեղեկությունը Կոստանդինի վերաբերյալ, որին նա անվանում է «թագավոր»: Բավական ուշագրավ են տեղեկություն-

[2] Սամուէլի քահանայի Անեցւոյ, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, (այսուհետև՝ Սամուէլ Անեցի) Յառաջաբանով, համեմատութեամբ, յաւելուածներով եւ ծանօթութիւններով Ա. Տէր-Միքելեանի, Վաղարշապատ, 1893:

ները 1321–1322 թթ. և 1335–1337 թթ. մամլուքյան արշավանքների, ինչպես նաև Օշին պայլի սպանության մասին: XIV դարի 20-ական թթ. վերաբերյալ կարևոր սկզբնաղբյուր են XIII դարի ռազմական և քաղաքական ականավոր գործիչ Սմբատ Գունդստաբլի «Տարեգրքի» Շարունակողի տեղեկությունները:[3] Սմբատն իր աշխատությունը շարադրել է մինչև XIII դարի 70 թթ. կեսերը, որից հետո, մինչև 1330 թ., շարունակել է անհայտ հեղինակ: Ուշագրավ է շարահարողի կողմից Օշին Կոռիկոսցու և նրա եղբոր սպանության նկարագրությունը:

Նույն ժամանակաշրջանի, մասնավորապես, պետության խնամակալական խորհրդի գործունեության և 1321–1322 թթ. մամլուքյան արշավանքների մասին հետաքրքրական և միմյանց փոխլրացնող տեղեկություններ են պարունակում Բարսեղ Մաշկևորի և Ներսես Պալիանենցի վկայությունները:[4] Այս աշխատություններն առավել արժևորվում են հեղինակների՝ նկարագրած շրջանի ժամանակակիցը լինելու հանգամանքով: Հատկապես հետաքրքրական է Ն. Պալիանենցի հեղինակած հայոց արքաների ժամանակագրական ցանկը, որն ավարտվում է Կոստանդին II-ով: Ընդ որում, Ն. Պալիանենցը և՛ իր ժամանակագրական հատվածներում (որը վերաբերում է 1321–1322 թթ. մամլուքյան արշավանքին), և՛ արքայացանկում, չնայած ընդունված լատինամետ համարմանը, անկողմնակալ վերաբերմունք է ցուցաբերում պատմական փաստերի նկատմամբ:

XIV դարի 20–40-ական թթ. վերաբերյալ բավականին կարևոր տեղեկություններ են պարունակում Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները:[5] Ընդ որում, պետք է

[3] Տարեգիրք Սմբատայ Սպարապետի (այսուհետև՝ Սմբատ, Տարեգիրք), Փարիզ, 1859:

[4] Ղ. Ալիշան, Հայապատում (այսուհետև՝ Հայապատում), Վենետիկ, Ս. Ղազար, 1901:

[5] Ա. Մաթևոսյան, Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանա-



նշել, որ երկու ժամանակագիրներն էլ բարձր դիրքեր են գրավել կիլիկյան արքունիքում և բավական քաջատեղյակ են եղել քաղաքական անցուդարձերին: Մասնավորապես առավել արժանահիշատակ են նրանց տեղեկությունները 1321 թ. իրադարձությունների, 1335–1337 թթ. հայ-մամլուքյան պատերազմի և հաշտության մասին: Հեթում Ախտուց տերը, նույն ինքը՝ Հեթում Նղրեցին, XIV դարի երկրորդ տասնամյակից սկսած, կես դար շարունակ կիլիկյան արքունիքում վարել է ազդեցիկ պաշտոններ: 1320 թվականից նա եղել է մանկահասակ Լևոն IV-ի խնամակալներից մեկը: Մինչ այդ՝ Օշին թագավորի օրոք, նա եղել է արքունիքի ջամբռլայ, ընդ որում նա այդ պաշտոնին մնացել է ամբողջ 40 տարի, մինչև իր մահը (հավանաբար մահացել է 1350 թթ. երկրորդ կեսին): Այս ժամանակահատվածում նա ոչ միայն տեղյակ է եղել, այլև բազում անգամներ ինքն է լուծել պետության առաջնահերթ շատ խնդիրներ, կատարել է դիվանագիտական կարևորագույն հանձնառություններ: Նա, ըստ ամենայնի, փոքր դեր չի խաղացել նաև իր եղբորորդու՝ Կոստանդինի II-ի 1344 թ. իրագործած պետական հեղաշրջման գործում: Ցավոք, աշխատությունը ամբողջությամբ չի պահպանվել: Այդուամենայնիվ, հեղինակի տեղեկություններն ուշագրավ և կարևոր են ինչպես համեմատական, այնպես էլ՝ եզակի փաստերի առկայության առումով:

1369 թ. Սսի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին բավականաչափ արժեքավոր տեղեկություն կա Վասիլ Մարաջախտի թողած ժամանակագրության մեջ: Վասիլը Լիպարիտ սպարապետի եղբայրն էր և ազդեցիկ դիրք էր զբաղեցնում Կոստանդին III-ի արքունիքում: Նրա թողած ժամանակագրության հատվածները, բացառությամբ հետևյալ դրվագի, մեր աշխատության խնդիրների հետ քիչ աղերսներ ունեն: Ըստ հեղինակի՝ 1311 թ. տեղի է ունե-

կագրությունները (այսուհետև՝ Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները), Պատմա-բանասիրական հանդես, 1963, թիվ 4, էջ 183–202:

նում Լևոն II-ի դստեր՝ Ալիծի և վրաց արքայազն Դավթի ամուսնությունը: Վերջիններիս Օշին արքան, որպես ժառանգական տիրույթ, տալիս է Կապանի ամրոցը: Այս փաստը որոշակի պարզաբանումներ է մտցնում Կոստանդին III-ի և Լիպարիտի միջև առկա թշնամանքի հարցում, քանզի պարզ է դառնում, որ հայոց գահի նկատմամբ որոշակի իրավունքներ կարող էր ունենալ նաև վերջինս:

Կիլիկիայի մեզ հետաքրքրող շրջանի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություններ կան նաև XI–XVIII դարերի ժամանակագրության մեջ,[6] որը օգտակար է եղել, այլ աղբյուրների հետ համադրման ճանապարհով, իրականությունը պարզաբանելու համար:

Որպես դարաշրջանի իրավական հարաբերությունների կարևորագույն սկզբնաղբյուր՝ առանձնանում է Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրք»-ը:[7] Այն կատարել է թագավորության իրավական նորմերի ժողովածուի դեր և մեր աշխատանքում օգտագործվել է գահաժառանգման որոշ հիմնախնդիրների պարզաբանման համար:

1370 թ. Սսի վրա կատարված մամլուքյան արշավանքի վերաբերյալ ուշագրավ երկ է ստեղծել Հովհաննես Թլկուրանցին, որն իր «Տաղ քաջ Լիպարիտի» ստեղծագործության մեջ[8] գեղարվեստական ոճով նկարագրել է օտար նվաճողների դեմ Լիպարիտ սպարապետի հերոսական պայքարը, ապա և՝ մահը: Երկի գեղարվեստականությունը բնավ չի խանգարում այդ արշավանքի հետ կապված պատմական փաստերի լուսաբանմանը: Ընդ որում, դա միակ

[6] Ժամանակագրություն XI–XVIII դդ., Տպագրության պատրաստեց Նորայր եպիսկոպոս Պողարյան (այսուհետև՝ Ժամանակագրություն XI–XVIII դդ.), Բանբեր Մատենադարանի, 1969, թիվ 9, էջ 257–282:

[7] Դատաստանագիրք Սմբատ իշխանի (Գունդստաբլի), Կիլիկեան դատաստանագիրք XIII դարի (այսուհետև՝ Սմբատ, Դատաստանագիրք), Ձեռագրերի համեմատութեամբ լոյս ընծայեց Արսեն վարդապետ Ղլտճեան, Ս. Էջմիածին, 1918:

[8] Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, աշխատասիրությամբ Էմ. Պիվազյանի, Երևան, 1960:



պահպանված հայկական սկզբնաղբյուրն է, որը կարող է պատմական փաստեր հաղորդել XIV դարի 60-ական թթ. երկրորդ կեսի Կիլիկիայում տեղի ունեցած իրադարձությունների մասին:

Կիլիկիայի պատմության խնդրահարույց ժամանակաշրջանի վերաբերյալ կարևոր են նաև XIII–XVIII դդ. մանր ժամանակագրությունները[9] և XIV–XV դդ. հայերեն ձեռագրերի հիշատակարանները:[10] Մանր ժամանակագրությունները և ձեռագիր հիշատակարանները օգնել են մեզ՝ տվյալ շրջանի բազմաթիվ դեպքերի ժամանակագրությունը և փաստերի օբյեկտիվությունը ճշգրտելու առումով:

Հետազոտվող հիմնախնդիրների վերաբերյալ արժեքավոր են նաև եվրոպական սկզբնաղբյուրները: Սրանց մեջ, չնայած առկա կողմնակալ շարադրանքին, չափազանց կարևորվում է Հովհաննես Դարդելի ժամանակագրությունը:[11] Այն իր տեսակի մեջ գրեթե միակ ամբողջական շարադրանքն է XIV դարի առաջին քառորդից մինչև դարի երրորդ քառորդն ընկած շրջանի Կիլիկիայի պատմության ուսումնասիրման համար: Նրա տեղեկությունները հաճախ չեն հանդիպում այլ սկզբնաղբյուրներում, և դժվար է այդ տեղեկությունները ճշգրտել այլ աղբյուրների վկայությունների հետ համադրելու միջոցով: Ավելին, աշխատությունը շարադրված է կողմնակալ, հաճախ շատ հարցեր լուսաբանվում են զուտ քաղաքական նկատառումներով: Սակայն, այդ ամենը նաև օրինաչափ է, քանզի նա եղել է Լևոն Լուզինյանի խոստովանահայրը և փորձել ամեն կերպ դրական լույսի ներքո ներկայացնել վերջինիս: Այդու-

[9] Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ., կազմեց Վ. Հակոբյան, հ. I, Երևան, 1951, հ. II, Երևան, 1956:

[10] ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց Լ. Խաչիկյան, Երևան 1950 (այսուհետև՝ ԺԴ դարի հիշատակարաններ) ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Մասն առաջին (1401–1450), կազմեց Լ. Խաչիկյան, Երևան 1955 (այսուհետև՝ ԺԵ դարի հիշատակարաններ):

[11] Յովհաննու Դարդելի, Ժամանակագրութիւն Հայոց (այսուհետև՝ Դարդել), Ս. Պետերբուրգ, 1891:

հանդերձ, աշխատության պատմական արժեքը դրանից չի տուժում, նրա թողած պատմական փաստերը չափազանց արժեքավոր են և գրեթե եզակի են շատ հարցերի լուսաբանման առումով:

Արևմտյան սկզբնաղբյուրների թվում իրենց յուրահատուկ տեղն ունեն նաև Լևոն Լուզինյանին ու նրա ապօրինածին որդուն ուղղված Հռոմի պապի նամակները, որոնք հրատարակել է Ա. Տաուտուն,[12] ինչպես նաև, Ժ. Միշոյի հրատարակած հայկական և պապական աթոռի ղեկավարների միջև եղած նամակագրությունները:[13] 1335–1337 թթ. Հայոց արքունիքի կողմից ուղարկված դեսպանության մասին բավականին արժեքավոր տեղեկություն է թողել Ջակոբո դե Վերոնը, որն անցել է Սիրիայով և Եգիպտոսով:[14] Նա Կահիրեում հանդիպել է Հայոց արքայի պատվիրակներին և տեղեկացել հայերի կողմից հաշտության առաջարկի մասին:

Կիլիկիայի վերաբերյալ պակաս կարևոր չեն նաև արաբ հեղինակների թողած տեղեկությունները:[15] Այդ առումով ուշագրավ է Աբուլ Ֆիդայի աշխատությունը: Հեղինակը երկար ժամանակ եղել է Համայի կառավարիչը և մասնակցություն է ունեցել հայ-մամլուքյան քաղաքական գործընթացներին: Այս աշխատությունը առավել կարևորվում է այն հանգամանքով, որ Աբուլ Ֆիդան ոչ միայն եղել է նկարագրվող դեպքերի ժամանակակիցը, այլև XIV դարի 20–30-ական թթ. կատարված մամլուքյան արշավանքների կազմակերպիչներից մեկը: Այս չափազանց ուշագրավ աշխատությունն

[12] Aloysius L. Tăutu, Acta Pseudopontificum, Fontes, series III, volumen XIII, tomus II, Romae, 1971 (այսուհետև՝ Aloysius L. Tăutu ).

[13] Bibliotheque des Croisades, J.F. Michaud et Reinaud, t. I. (այսուհետև՝ Bibliotheque des Croisades), Paris, 1829.

[14] Martiniano Pelligrino Roncaglia. Masacres et deportations d'Arméniens au moyen âge d'après le Liber peregrinationis de Jacobo de Verone, 1335 (texte latin et version) «Հայկազեան հայագիտական Հանդէս», 1998, հ. ԺԸ:

[15] Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ Համավի, Աբուլ Ֆիդա, Իբն Շադդադ (այսուհետև՝ Արաբական աղբյուրները), Կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965:



ավարտվում է 1347 թ. մամլուքյան արշավանքի նկարագրությամբ:

XVIII դարի երկրորդ կեսից Հայոց, մասնավորապես Կիլիկիայի հայկական պետության պատմությունը գրավում է ուսումնասիրողների ուշադրությունը: XVIII դարի երկրորդ կեսին Վենետիկի Մխիթարյան միաբան Մ. Չամչյանցն օգտագործելով հայ և օտարալեզու բազմաթիվ սկզբնաղբյուրներ, Հայոց պատմության շարադրանքում ներկայացրեց նաև Կիլիկիայի հայկական պետության պատմությունը:[16] Հեղինակն իր աշխատության մեջ անդրադառնում է ռազմաքաղաքական, դիվանագիտական և դավանաբանական մի շարք հիմնախնդիրների: Մ. Չամչյանցի գործը, չնայած առկա մի շարք փաստական սխալներին, չի կորցրել իր արդիականությունը:

XIX դարի երկրորդ կեսին մեծ վերելք ապրեց եվրոպական արևելագիտությունը, մասնավորապես խաչակրաց արշավանքների ու պետությունների և Կիլիկիայի պատմության ուսումնասիրությունը: Եվրոպացի գիտնականներից առաջինները, ովքեր սկսեցին զբաղվել հայկական պետության պատմությամբ, Է. Դյուլորիեն և Վ. Լանգլուան էին: Հատկապես արժեքավոր են Վ. Լանգլուայի աշխատությունները, որտեղ հեղինակը՝ բազմաթիվ սկզբնաղբյուրների հիման վրա, համակողմանի վերլուծության է ենթարկում հասարակական-քաղաքական և դավանաբանական բազում խնդիրներ:[17] Այնուամենայնիվ, և՛ Դյուլորիեի,[18] և՛ Լանգլուայի աշխատություններում, մասնավորապես Կիլիկիայի XIV դարի պատմության հետ կապված, առկա են որոշակի թերություններ, որոնք առավելապես պայմանավորված են մինչ այդ շրջանառվող սկզբնաղբյուրների սակավությամբ:

[16] Միքայել Չամչեանց, Հայոց պատմութիւն (սկզբից մինչև 1784 թ.), հատոր Գ (այսուհետև՝ Չամչեանց), Երևան, 1984:

[17] V. Langlois, La tresor des chartes d'Arménie, Saint–Lazare1863. Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie, St. Petersbourg, 1860. V. Langlois, Numismatique de l'Arménie, Paris, 1855.

[18] E. Dulaurier, Recherches sur la Chronologie Arménienne, Paris, 1859.

Առկա աղբյուրագիտական հարուստ հենքով Կիլիկյան Հայոց պետության պատմությանն առաջին անգամ անդրադարձել է Վենետիկի Մխիթարյան միաբանության մեծանուն միաբան Ղևոնդ Ալիշանը: Այս իմաստով առանձնահատուկ է նրա «Սիսուան» աշխատությունը,[19] որտեղ լայնածավալ անդրադարձ է կատարվում նաև Կիլիկիայի աշխարհագրությանը: Չնայած աշխատության պատմական հատվածը վերաբերվում է միայն Լևոն I թագավորին, այնուամենայնիվ, Ղ. Ալիշանը ողջ աշխատության մեջ քննում է պետության գոյության ընթացքում տեղի ունեցած և՛ ռազմաքաղաքական, և՛ դիվանագիտական և՛ դավանաբանական կարևոր, մասնավորապես՝ XIV դարի շատ կնճռոտ հարցեր, որոնք, մինչ այդ, բավարար լուսաբանված չէին: Այս աշխատության նկատելի թերությունն այն է, որ հեղինակը, հաճախ հիշատակելով կարևորագույն փաստերը, անտեսում է սկզբնաղբյուրների հիշատակման անհրաժեշտությունը:

Կիլիկիայի քաղաքական ու կրոնական պատմությանն է անդրադարձել նաև ֆրանսիացի հետազոտող Ֆ. Տուրնըբիզը:[20] Լևոն Լուզինյան ժամանակաշրջանի վերաբերյալ՝ գիտությանը հայտնի, ինչպես նաև եվրոպական արխիվներում պահպանվող նյութերի հիման վրա աշխատություն է հրատարակել Կ. Բասմաջյանը:[21]

Հայոց եկեղեցուն նվիրված իր ստվարածավալ աշխատության մեջ Կիլիկիայում առկա դավանաբանական խնդիրներին բավականին մեծ տեղ է հատկացրել Մ. Օրմանյանը:[22] Նա անդրադարձել է նաև հայկական պետության քաղաքական պատմությանը: Հայոց

[19] Սիսուան եւ Լեւոն Մեծագործ (այսուհետև՝ Սիսուան), Վենետիկ, Մխիթ. հրատ., 1885:

[20] Fr. Tournebize, Histoire politique et religieuse de l'Arménie (այսուհետև՝ Tournebize), Paris, 1900.

[21] Կ. Բասմաճեան, Լեոն Ե. Լուսինեան վերջին թագաւոր Հայոց (այսուհետև՝ Կ. Բասմաճեան), Պարիս, 1908:

[22] Օրմանեան Մ., Ազգապատում, Հայ ուղղափառ եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը (այսուհետև՝ Օրմանեան) հ. Բ, Ս. էջմիածին, 2001:



թագավորության առևտրա-տնտեսական, ինչպես նաև քաղաքական բազում հարցեր շոշափել է ֆրանսիացի հետազոտող Ռ. Գրուսեն՝ Լևանտի երկրների պատմությանը նվիրված աշխատությունում:[23]

XX դարում առաջին անգամ կիլիկյան Հայոց թագավորության ամբողջական պատմությունն ուսումնասիրել է Գր. Միքայելյանը:[24] Հեղինակի աշխատությունն տեսակի, ծավալի, իր առջև դրված խնդիրների առումով եզակի է: Ուսումնասիրության մեջ ներկայացված են պետականության՝ ինչպես քաղաքական, տնտեսական, այնպես էլ՝ դավանաբանական ու մշակութային կարևոր անցուդարձերը: Գր. Միքայելյանն ուշադրություն է դարձրել նաև Հայոց թագավորության թուլացմանը նպաստող երևույթների վրա, իր տեսանկյունից վերլուծել ու մատնանշել է պետականության անկման պատճառները:

Կիլիկիայի XIV դարի որոշ ռազմաքաղաքական դեպքերի վերաբերյալ ուշագրավ է Ժ. Մաշոյի հեղինակած խաչակրաց արշավանքների մասին ստվարածավալ աշխատությունը,[25] որտեղ հեղինակն ներառել և ուսումնասիրել է արևմտյան բազմաթիվ սկզբնաղբյուրների տեղեկությունները:

XX դարի 30–40-ական թթ. սփյուռքում լայն տարածում գտավ ցեղասպանության հետևանքով հայաթափ եղած քաղաքների ու գավառների պատմության շարադրումը: Այդպիսի աշխատություններ ստեղծեցին նաև կիլիկիահայերը՝ Մ. Քելեշյանը,[26] Հ. Պողոսյանը:[27] Ավելի ուշ՝ Խորհրդային Հայաստանում, նմանատիպ աշխա-

[23] R. Grousset, L'Empire du Levant, Histoire de lq auestion d'Orient (այսուհետև՝ R. Grousset ), Paris, 1949.

[24] Г. Микаелян, История Киликийского Армянского государства (այսուհետև՝ Г. Микаелян), Ереван, 1952.

[25] J.F. Michaud. Histoire des croisades, t. V (այսուհետև՝ Histoire des croisades), Paris, 1828.

[26] Մ. Քելեշեան, Սիս Մատեան, Պեյրութ (այսուհետև՝ Մ. Քելեշեան) 1949:

[27] Յ. Պօղոսեան, Հաճընի ընդհանուր պատմութիւնը եւ շրջակայ Գօզան-Տաղի

տություն Զեյթունի մասին ստեղծեց Հ.Պողոսյանը:[28] Այս աշխատություններում առավել մեծ ուշադրություն էր դարձված բանավոր աղբյուրներին, բացի այդ, ըստ էության, հեղինակների ուշադրության կենտրոնում առավելապես XIX դարավերջի և XX դարասկզբի պատմությունն էր:

Կիլիկյան իշխանների և թագավորական ընտանիքների վերաբերյալ կարևորագույն աշխատություն է Ռուդտ Քոլլենբերգի հետազոտությունը:[29] Հեղինակը հետազոտության ընթացքում ներկայացնում է Հեթումյան և Լուզինյան ընտանիքների գրեթե բոլոր ճյուղավորումները ընդ որում, կատարում է համարձակ եզրահանգումներ և ենթադրություններ: Հայոց թագավորության XIV դարի պատմության մի շարք կնճռոտ հարցեր, այդ թվում՝ Գի Լուզինյանի գործունեության և հայ-բյուզանդական տարաբնույթ փոխհարաբերություններ վերաբերյալ, լուսաբանել է Հ. Բարթիկյանը:[30] Կիլիկիայի Հայոց թագավորության սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմության վերաբերյալ հիշատակման արժանի են Ս. Բոռնազյանի աշխատությունները:[31] Ուշագրավ է նաև Կ. Սեթոնի խմբագրությամբ «Խաչակիրների պատմությունը» աշխատությունը,[32] որտեղ ներկայացված է XIV–XVդդ Հռոդոսի հիվանդախնամների, Կիպրոսի թագավորության և մամլուքյան սուլթանության պատմությունը:

Վերջին տարիներին լույս տեսած հետազոտություններից իր ընդգրկումով արժեքավոր է Կ. Մութաֆյանի աշխատությունը:[33] Կիլիկիայի Հայոց պատմության ուսումնասիրությունների շարքում առանձնահատուկ տեղ ունի Լ. Տեր-Պետրոսյանի հեղինակած աշխատությունը, որտեղ ներկայացված են նաև մի շարք կարևոր աղբյուրներ: Այս երկհատոր ուսումնասիրության նշանակությունը կիլիկիագիտության համար խիստ կարևոր է:[34] Այն արժեքավոր է ոչ միայն հարուստ աղբյուրագիտական հենքով այլ նաև դրա հիման վրա կատարված հիմնավոր եզրահանգումներով:

Մեր աշխատության համար առանձնահատուկ նշանակություն ունի նաև դրամագիտությունը: Կիլիկյան թագավորությունում հատած դրամական նյութերի վերաբերյալ աշխատություններ են գրել Զարեհ (Պոլ) Պտուկյանը,[35] Ե. Ներսիսյանը,[36] Պ. Կարապետյանը,[37] Օ. Սեքուլյանը:[38] Առավել արժեքավոր է Զ. Պտուկյանի աշխատութ-

գիւղերը, Լօս Անճէլըս, 1942:

[28] Հ. Պողոսյան, Զեյթունի պատմությունը 1409–1921 թթ., Երևան, 1969:

[29] Rüdt Collenberg, The Rupenides, Hethumides and Lusignans. The structure of the Armeno-Cilician dynasties (այսուհետև՝ Rüdt Collenberg), Paris, 1964.

[30] Հ. Բարթիկյան, Գվիդոն Լուսինյանը Բյուզանդիայում և Կիլիկյան Հայաստանում, «Հայ-Բյուզանդական հետազոտություններ», h. Ա, Երևան, 2002, էջ 683–692, նույնի, Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդական կայսրության եկեղեցական փոխհարաբերությունները և դրանց քաղաքական ծալքերը, նշվ. աշխ., էջ 639–653:

[31] Բոռնազյան Ս., Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, Երևան, 1973, նույնի, Կիլիկյան հայկական թագավորության գոյամարտը XIV դարում և անկումը, Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ, Երևան, 1976, h. III, էջ 768–788:

[32] A History of the Crusades, Volume three. The Fourteenth and Fifteenth centuries, Kenneth M. Setton (այսուհետև՝ K. Setton), The University of Wisconsin, Press, 1975.



[33] Կ. Մութաֆյան, Կիլիկիան կայսրությունների խաչմերուկում, Երևան, 2001:

[34] Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ Հայերը, h. Ա, Ուսումնասիրություն եւ թարգմանություններ, Հայկական մատենաշար Գալուստ Կիւլպէնկեան հիմ նարկութեան, Երևան, 2005, h. Բ, Պատմա-քաղաքագիտական հետազոտություն, Երևան, 2007:

[35] Bedoukian P., Coinage of Cilician Armenia, New York, 1962, նույնի Կիլիկիոյ Կոստանդին Գ-Լեւոն Բռնակալ-Կոստանդին Գ-ի կարեւոր դրամագիտ մը, Հայկազեան Հայագիտական Հանդէս, 1972, h. Գ, էջ 151–183, նույնի Կիլիկեան Հայաստանի վերջին թագաւորներու պղինձէ դրամները, Հանդէս Ամսօրեայ, 1969, թիւ 7–9, սյուն 351–357:

[36] Եղիա Ներսէսեան, Հայկական դրամներու տեղաշարժն ու աճուրդները, Բազմավէպ, 1997, թիւ 1–4, էջ 96–114: Նույնի, Կոստանդին Գ-ի երկու թագուորինները, Բազմավէպ, 1998, 1–4, էջ 65–73: Նույնի Կիլիկեան Հայաստանի արաբերէնով կրկնադրոշմուած դրամները, Հայկազեան Հայագիտական Հանդէս, 2000, h. Ի, էջ 151–182:

[37] Պ. Կարապետեան, Այաս քաղաքի փողերանոցը եւ Լեւոն Ա արքայի պղինձէ դրամները, Հանդես Ամսօրեայ, թիւ 1–12, սյուն 221–226:

յունը, որտեղ հեղինակը դրամագիտական հետազոտությունների արդյունքում չափազանց կարևոր եզրահանգումներ է կատարում:

---

[38] Յ.Օ. Սեքուլեան, Այաս քաղաքին մէջ կոխուած հայ դրամներ, Հանդէս մսօրեայ, 968, թիւ 4–6, սյուն 213–218: Նույնի, Կիտա՞յ. Հանդէս Ամսօրեայ, 1973, թիւ 7–9, սյուն 327–331:



## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

## ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 1320–1342 ԹԹ.

### 1.1 Հայոց թագավորությունը Օշին պայլի կառավարման շրջանում

XIV դարասկիզբն աննպաստ դասավորվեց Կիլիկիայի Հայոց պետության համար: Սա պայմանավորված էր՝ ինչպես մոնղոլական հզորության անկման ու դրա հետ միաժամանակ մամլուքյան և կարամանյան օրավուր մեծացող ռազմաքաղաքական ազդեցության հետ, այնպես էլ՝ կիլիկյան դիվանագիտության որոշ ձախողումների հետ: XIII դարի երկրորդ կեսին կիլիկյան պետության գոյությունը մեծապես պայմանավորված էր հայ-մոնղոլական դաշինքով և բնական է, որ այժմ ռազմավարական առումով Հայոց թագավորության անվտանգության համակարգը կանգնեց վերափոխումների շեմին: Իլխանությունն անկում էր ապրում, որն արդյունքն էր ինչպես Եգիպտոս-Ոսկե Հորդա դաշնակցային հարաբերությունների,[39] այնպես էլ՝ իլխանների պետության ռազմաքաղաքական ավագանու անջատողական ձգտումների: Քաղաքական աննպաստ իրավիճակը ավելի խորացավ 1317 թվականից հետո, երբ Օլջեյթու իլխանին (1304–1317 թթ.) փոխարինեց նրա յոթնամյա որդի Աբու-Սայիդը (1317–1335 թթ.):[40] Այդ իրադարձությունները, անկասկած, պետք է ունենային իրենց հետևանքները նաև Կիլիկիայում. Անվտանգության համակարգի փլուզման պայմաններում երկրի հասարակական-քաղաքական վերնախավը երկփեղկվեց հակադիր՝ միարարների և հակամիարարների ճամբարների: Այդ

---

[39] Амин аль Холи, Связи между Нилом и Волгой в XIII–XIV вв. (այսուհետև՝ Амин аль Холи), Москва, 1962, стр. 15.

[40] Վրաց ժամանակագրություն 1207–1318 թթ., թարգմ. հին վրացերենից, առաջաբանը և ծանոթագրությունները Պարույր Մուրադյանի, Երևան, 1971, էջ 188:



4562

իրողությունն առավել ցայտուն դրսևորվեց Օշին թագավորի գահակալության շրջանում (1308–1320 թթ.): 1316 թ. Ադանայի եկեղեցական ժողովի ընդունած որոշումները խոր հակազդեցություն առաջ բերեցին ոչ միայն տիրող խավի՝ հոգևորականության և ազնվականության ստվար հատվածի, այլև, որն առավել նշանակալի է, հասարակ բնակչության մեջ: Ընդ որում, Կիլիկիայի Հայոց պատմության մեջ դա հասարակության ցածր խավի ընդվզման մեզ հայտնի առաջին փորձն էր: Միևնույն ժամանակ՝ առաջին անգամն էր, որ արքունիքն ամենախիստ միջոցներով ճնշեց այդ հակազդեցությունը:

Օշինն իր այդ քայլերով ձգտում էր արևմուտքից ստանալ օգնություն, որի շնորհիվ հնարավոր կլիներ կանխել պետությանը սպառնացող վտանգները: Սակայն, նրա ձեռնարկած քայլերը դրական արդյունքներ չտվեցին: Եվրոպայից ակնկալվող օգնությունն այդպես էլ չստացվեց: Բացի այդ, դեռևս Օշինի կենդանության օրոք, վերսկսվեցին հարևան մահմեդական պետությունների ավարառուական արշավանքները Կիլիկիա, որոնք հիմնականում տեղի ունեցան մամլուքյան սուլթանության հրահրմամբ: Այսպես, 1318 թ. կարամանյան թուրքմենները (որոնք արդեն XIII դարի երկրորդ կեսին դարձան Կիլիկիայի վտանգավոր հարևաններ) հասան մինչև Տարսոն, որտեղ միայն Օշին Կոռիկոսցուն երեք հարյուր մարտիկներով հաջողվեց կանգնեցնել նրանց և ջախջախել:[41] 1319 թ. մայիսին այս անգամ արդեն Հալեպի ամիրության զորքերն արշավեցին, և հասնելով Սիս՝ ավերեցին քաղաքը:[42] Լարված և թշնամական էին հարաբերությունները նաև միակ քրիստոնյա դրացի երկրի՝ Կիպրոսի թագավորության հետ: Դա պայմանավորված էր Օշինի քրոջ Զաբելի (Իզաբել) ամուսին Ամորի Լուզինյանի 1310 թ. տեղի ունեցած սպանությամբ: Կիպրոսի արքա Հենրի II-ը ոչ առանց հիմքի

[41] Սմբատ, Տարեգիրք, էջ 128, Fr. Tournebize, p. 648.

[42] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ մարաջախտի ժամանակագրությունները, էջ 192:



թշնամանքի դրսևորում էր համարում Ամորիի ընտանիքի ներկայությունը Կիլիկիայում: Ընդ որում, իրավիճակն այնքան սրվեց, որ 1318 թ. երկու բարեկամ երկրների միջև տեղի ունեցավ ռազմական բախում:[43] Ի վերջո, Հռոմի պապ Հովհաննես XXII-ի (1316–1334 թթ.) և Հռոդոսի ասպետների միջնորդությամբ, Օշինը մահվանից մի քանի ամիս առաջ հաշտվեց Կիպրոսի արքա Հուգոյի հետ:[44] Եվրոպայից օգնություն ստանալու Օշինի հույսը դրսևորվում էր ոչ միայն եկեղեցական և քաղաքական, այլ նաև ամուսնական հարցերում: 1316 թ. նա ամուսնացավ Հովհաննա (Ժաննա-Իրեն) Անժուացու հետ:[45]

1317 թ. Հովհաննես XXII-ը պապը դիմեց Հռոդոսի հիվանդախնամ ասպետներին՝ կոչ անելով օգնել Հայոց թագավորությանը:[46] Ըստ երևույթին հիվանդախնամները օժանդակություն ցուցաբերել են, որը սակայն ինչպես պարզ դարձավ կարճ ժամանակ անց անշահախնդիր չէր: 1320 թ. Օշին արքան մահվանից փոքր առաջ վերականգնեց հիվանդախնամների իրավունքներն Իսավրիայում, որից վերջիններս զրկվել էին ընդամենը մի քանի տարի առաջ: Սակայն, պետության արտաքին քաղաքական վիճակը շտկելու ուղղությամբ Օշինի գործադրած ջանքերը որևէ արդյունք չտվեցին:[47] Բացի այդ, երկիրը հայտնվեց նաև տնտեսական ճգնաժամի

[43] Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Ա, էջ 122:

[44] K. Setton, p. 289, p. 346.

[45] Ընդ որում, միջդինաստիական ամուսնությունները Կիլիկիայի հայկական ազնվականության և խաչակիրների միջև բավական տարածված են եղել (տե՛ս A.B. A De Bourbon. Prince de Conde. Lebanon's ten Armenian princesses (1186–1312), Հայկազեան Հայագիտական Հանդէս, 1977–1978, հ. Զ, էջ 159–168): Հովհաննան Տարանտոյի իշխան ու Լատինական կայսրության տիտղոսակիր թագավոր Ֆիլիպ Անժուացու և Նեապոլիտանական Սիցիլիայի թագավոր Ռոբերտ Անժուացու զարմուհին էր:

[46] Norman Housley, The Avignon papasy and the crusades 1305–1378, Clarendon press Oxford 1986, p. 289 (այսուհետև՝ N. Housley, The Avignon papasy).

[47] 1320 թ-ին ձախողվեց նաև Պուատյեի ժողովում ընդունված դեպի Սուրբ Երկիր ձեռնարկվող արշավանքը (տե՛ս Histoire des Croisades, t. V, p. 214).

մեջ:[48] Երկրի արտաքին քաղաքական իրավիճակը բավական դիպուկ նկարագրել է Մարինի Սանուտո Տորսելլո Ավագը: Վերջինս Կիլիկիայի չորս հարևաններին համեմատում է չորս գազանների հետ, որոնք հոշոտում են Հայոց թագավորությունը:[49] Ահա այսպիսին էր քաղաքական իրավիճակը Կիլիկիայում, երբ 1320 թ. հունիսի 19-ին,[50] դեռ քառասնամյակը չբոլորած Օշինը մահացավ:[51] Ըստ Հ. Դարդելի նրան թունավորել էին: Սակայն, այս ենթադրությունը, որևէ հիմք չունի և այլ աղբյուրների տեղեկություններով չի հիմնավորվում:

Օշինի մահը, այնուամենայնիվ, լուրջ հետևանքներ ունեցավ թագավորության համար: Նա, առաջին անգամ՝ նախքան Հովհաննա Անժուացին, ամուսնացած էր Զաբել Կոռիկոսցու՝ Հեթում պատմիչ Կոռիկոսցու դստեր հետ, որից նա ուներ միայն մեկ արու զավակ՝ Լևոնը, որը ծնվել էր 1308/1309 թթ.: Հովհաննայից նրա զավակներ ունենալու մասին մեզ հայտնի չէ: Լևոնը հոր մահվան ժամանակ ընդամենը 10–11 տարեկան էր, և իրավիճակը, մոտավորապես, կրկնվեց այնպես, ինչպես դրանից հարյուր տարի առաջ Լևոն I-ի մահվան ժամանակ: Սակայն, եթե այն ժամանակ Լեւոն I-ի հանձնարարությամբ ստեղծված խնամակալական խորհրդի կազմը փոփոխություններ չկրեց, ապա այժմ իրավիճակը մի փոքր այլ զարգացումներ ունեցավ:

Մահվանից առաջ արքան հաստատեց խնամակալական խորհրդի կազմը,[52] որի մեջ ընդգրկվեցին Հեթում Նղրեցի ջամբռլայը (նույն ինքը՝ Հեթում Ախտուց տերը),[53] Օշին և Կոստանդին Կոռիկոսցիները (վերջինս ավելի ուշ դարձավ գունդստաբլ):[54] Խնամակալական խորհուրդ ստեղծելով Օշին արքան փորձել էր պահպանել քաղաքական հավասարակշռության սկզբունքը:[55] Սակայն այստեղ շփոթություն գոյություն ունի, քանզի խնամալական խորհրդի կազմի մասին աղբյուրներում տվյալները հակասական են: Բարսեղ Մաշկևորն և Սամուէլ Անեցու Շարունակողը խնամակալական խորհրդի վերոհիշյալ երեք անդամների անուններն են նշում:[56] Դարդելն իր հերթին խոսում է Օշին ու Կոստանդին Կոռիկոսցիների և Հեթում ու Բալդուին եղբայրների մասին:[57] Հետազոտողներից Ղ. Ալիշանը հիշատակում է նրանցից չորսին՝ Օշին Կոռիկոսցուն, Հեթում և Բալդուին Նղրեցիներին ու Հեթում սենեսկալին:[58] Վ. Լանգլուան տալիս է Օշին Կոռիկոսցու, Հեթում ջամբռլայի ու Հեթում սենեսկալի անունները:[59] Առավել հավանական է Սամուէլ Անեցու Շարունակողի և Բարսեղ Մաշկևորի ցուցակը, իսկ Բալդուին մարաջախտը խորհրդի կազմի մեջ է ընդգրկվել հետագայում: Ինչ վերաբերում է Հեթում սենեսկալին, ապա նա, խորհրդում եղել է սկզբնական շրջանում, իսկ հետագայում[60] ինչ-ինչ պատճառներով դուրս է

[48] Ներսէսեան Ե., Կիլիկեան Հայաստանի Օշին թագաւորին դրամները, Բազմավէպ, 2005, թիւ 1–4, էջ 283:
[49] Bibliotheque des Croisades. Marin Sanuti, p. 192.
[50] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 192:
[51] Հեթում Նղիրցու պատմությունը, էջ 547: Օշինը և եղբայրը՝ Ալինախը ծնվել էին 1282 կամ 1283 թ.:
[52] Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 393:



[53] Ըստ Լ. Տեր-Պետրոսյանի Ախտուց տերը ստուգաբանվում է՝ որպես մեղքերի տեր (տե՛ս նույն տեղում, էջ 536):
[54] Կոստանդինը չի հիշատակվում Հեթում Ախտուց տիրոջ ժամանակագրության մեջ: Դա կարելի է բացատրել Նղրեցի և Կոռիկոսցի Հեթումյանների հարաբերությունների սառնությամբ:
[55] Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 398:
[56] Հայապատում, Բարսեղ Մաշկեւոր, Կիլիկիա առ Լեւոնի ի ապստակ եգիպտացւոյ յԱյաս, էջ 536, Սամուէլ Անեցի էջ 157:
[57] Դարդել, գլ. ԻԲ, էջ 28:
[58] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 558:
[59] V. Langlois, Essai historique et critique sur la constitution sociale et politique de l'Arménie, St. Petérsbourg, 1860, p. 57.
[60] Այդ է վկայում 1321 թ. Լևոն IV-ի Մոնպելիեի վաճառականներին տրված արտոնագիրը, որտեղ կա նաև Հեթում սենեսկալի անունը: Դրանից պարզ է դառնում, որ նա ևս ընդրկված է եղել խորհրդի կազմում (տե՛ս V. Langlois, Le tresor

մնացել խորհրդի կազմից, ուստի և այլևս չի հիշատակվում:
Այսպիսով, անչափահաս թագավորի և պետության խնամակալ
է դառնում Օշին Կոռիկոսցին՝ հանգուցյալ Օշին թագավորի անե-
րորդին: Խնամակալական խորհրդում են ընդգրկվում նաև Օշին
պայլի ավագ եղբայր Կոստանդինն ու Հեթում Նղրեցին:
1320 թ. դրությամբ արական ուղիղ գծով Հեթում I-ի սերունդնե-
րից, բացառությամբ անչափահաս Լևոնի, ոչ ոք, ողջ չէր մնացել:
Հեթումյաններից վերջինը՝ Օշին արքայի եղբայր Ալինախը, անժա-
ռանգ մահացել էր 1317 թ.: Սակայն, Լևոն II թագավորի զավակնե-
րից դեռևս կենդանի էր վերջինը՝ Զաբելը, որը 1293 թ. ամուսնացել
էր Կիպրոսի արքա Հուգո II Անտիոքացու (1267–1284 թթ.) կրտսեր
որդու՝ Ամորի Լուզինյանի հետ, որի սպանությունից հետո (1310 թ.)
իր հինգ որդիների հետ ապաստանել էր Կիլիկիայում:[61] Պետք է
նշել, որ մինչ Օշինի մահն անգամ Զաբելի դիրքերը Հայոց արքու-
նիքում բավականին ամուր էին: Նրա դուստր Ագնեսը ամուսնացած
էր իր եղբորորդու՝ պատանի թագավոր Լևոն III-ի (1304–1307 թթ.)
հետ: Օշինի մահվան ժամանակ նրա չորս որդիները՝ Գին, Հուգոն,
Հենրին և Ջիվանը, արդեն չափահաս էին, ուստի կարելի է կարծել,
որ նա իր որդիների հետ բավականաչափ իրական ուժ էր գահա-
ժառանգման և խնամակալական հարցերի լուծման գործում: Այս-
պես, 1321 թվագրվող հիշատակարանում գրիչ Վահանն ի թիվս
Լևոն թագավորի, նշում է նաև Զաբելին,[62] որը վկայում է նրա ունե-
ցած մեծ ազդեցության և դիրքի մասին: Կարծում ենք սակայն, որ
սխալ է Լուզինյանների և կոռիկոսցի պայլի հակադրումը դիտար-
կել որպես արտաքին քաղաքական երկու կողմնորոշումների բա-
խում. դա ընդամենը պայքար էր իշխանության համար: Ի վերջո,

des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens. Venise typographie Arménienne de Saint Lazare, 1863, p. 185).

[61] Sir George Hill, A History of Cyprus, Volume two, The frankish period, (1192–1432) (այսուհետև՝ G. Hill), Cambridge University, Press, 1948, p. 266.

[62] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 170:



1321 թ. հաղթող է դուրս գալիս Օշին Կոռիկոսցին, որն էլ իր ձեռ-
քում է կենտրոնացնում պետության կառավարման ղեկը: Այս
ընթացքում մինչ Կիլիկիայում տեղի էին ունենում ներքին խմորում-
ներ, արտաքին վտանգն ընդունել էր սպառնալի չափեր:
Դեռևս Օշին թագավորի կենդանության վերջին տարիներին
սկսվեցին հարևան մահմեդական պետությունների գրեթե անընդ-
մեջ հարձակումները Կիլիկիայի վրա, որոնք ընդհանուր առմամբ
շարունակվեցին մոտ երեք տարի: Հալեպի ամիրի զորքերը 1320 թ.
հարևան մահմեդական ենթակա ամիրությունների զորաջոկատնե-
րի հետ միացած, մամլուքյան սուլթան Մելիք ալ- Նասրի (ընդմի-
ջումներով կառավարել է 1293–1294 թթ., 1298–1308 թթ., 1309–
1340 թթ.) գիտությամբ, անցնելով Ջահան գետը, ներխուժեցին Կի-
լիկիա: Ճանապարհին հանդիպած բնակավայրերն ավերելով՝
նրանք շարժվեցին դեպի Սիս: Քաղաքը պաշարելուց և նրա ար-
վարձաններին տիրելուց հետո Հալեպի ամիրի զորքերը վերադար-
ձան նույն ճանապարհով: Նրանց նահանջի հիմնական պատճառ-
ները եղել են Ջահան գետն անզգուշորեն անցնելու ժամանակ
տված մեծ կորուստները:[63] Հակառակորդն առավել լուրջ կորուստ-
ներ ունեցավ հաջորդ արշավանքի ժամանակ: Տրիպոլիի ամիր
Կարդայը նույն թվականի հուլիսին, մամլուքյան արքունիքից ստա-
նալով ռազմական աջակցություն՝ 20 հազարանոց զորաբանակով
ներխուժեց Կիլիկիա: Մամլուքներին հաջողվեց գրավել Սսի ար-
քայական պալատը, ավերել քաղաքի շրջակայքը, ասպատակել
Մսիս-Մամեստիան, Ադանան և Տարսոնը: Ըստ արաբական աղբ-
յուրների, այդ ամենից հետո մամլուքները մեծ ավարով վերադար-
ձան:[64] Սակայն, Սմբատ Գունդստաբլի Շարունակողը, անդրադառ-
նալով մամլուքների 1320 թ. արշավանքին, շեշտում է հայերի կող-
մից թշնամուն ցույց տրված համառ դիմադրության մասին. «Ի թու-

[63] Արաբական աղբյուրները, էջ 246, տե՛ս նաև Միսուան, Ցանկ ժամանա-կագրական, էջ 553:

[64] Արաբական աղբյուրները, էջ 284, ծանոթ. 106:

ին 769 կոտորեցին զօրքն հայոց զզօրսն Մսրայ առաջեւ Բարիքարկու և ի սահմանս Այասու: Եւ խոցեալ յանօրինաց մեծ իշխանն տէր Կանչոյն պարոն Կիօռին և մեռաւ».[65] Պետք է նշել, որ վերոհիշյալ Կիօռինն Օշին Կոռիկոսցու եղբայրն էր:[66] Ամենևին հակված չենք պնդելու, որ հայկական զորքերին հաջողվել էր գլխովին ջախջախել հակառակորդին, առավել հավանական է, որ թշնամին, զգալի կորուստներ կրելով, ստիպված է եղել վերադառնալ Սև լեռներից այն կողմ:[67] Այնուամենայնիվ, արքայական պալատի գրավումն ու ավարառումը վկայում է արշավանքին հայկական կողմի անպատրաստ լինելու մասին: Անշուշտ, մամլուքների հաջողությանը նպաստեց նաև փաստացի անիշխանությունը, քանզի հենց այս արշավանքի ժամանակ մահանում է Օշին թագավորը, և երկրում քաղաքական ճգնաժամը խորանում է: Հաջորդ՝ 1321 թ. Կիլիկիայի հայության համար նույնպես բավականին ծանր տարի էր: Հենց այդ ժամանակ Օշին և Կոստանդին Կոռիկոսցիների ու Լուզինյանների միջև առճակատումը խորացավ՝ հակասությունների առիթ ծառայելով իշխանական միջավայրում: 1321 թ. փետրվարի 1-ին տեղի ունեցավ Լևոն IV-ի թագադրության հանդեսը:[68] Այդ իրադարձության ժամանակ էլ Կոռիկոսցի եղբայրների և Լուզինյանների

[65] Սմբատ, Տարեգիրք, էջ 128, Ե. Ներսեսյանի աշխատանքից բխում է, որ հայերը գլխովին ջախջախեցին հակառակորդին, որը տվեց 6000 սպանված (տե՛ս Ե. Ներսէսեան, Կիլիկեան Հայաստանի Օշին թագաւորին դրամները, Բազմավէպ, 2005, թիւ 1–4, էջ 269):

[66] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 198:

[67] Ռ. Էդվարդսը գտնում է, որ այս արշավանքի ժամանակ տեղի է ունեցել հարձակում Այասի վրա, որը հայերը հետ են մղել (տե՛ս. R.W. Edwards, The fortification of Armenian Cilicia (այսուհետև՝ R. Edwards), Dumbarton Oaks Library and collection, Washington D. C., 1987, p. 79):

[68] «Արհնեցին թագաւոր զԼեւոնն որդի Օշնին Ա ի փետրուարն», (Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 192): Է. Դյուլորիեն չնշելով աղբյուրը, 1322 թվականն է համարում Լեւոնի գահակալման առաջին տարին (տե՛ս E. Dulaurier, նշվ. աշխ, էջ 120): Կարծիք կա, որ Լեւոնը եղել է հոր՝ Օշինի գահակիցը (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 395):



պայքարում վերջնականապես հաղթող դուրս եկան խնամակալ եղբայրները, քանզի, նույն օրն, անչափահաս Լևոն IV-ը ամուսնացավ Օշին պայլի դստեր՝ Ալիծի հետ: Դրա շնորհիվ Օշինի դիրքերը առավել ամրապնդվեցին: Թագադրության և ամուսնության հանդեսներից հետո պայքարի հանգուցալուծումը երկար չտևեց. մեկ ամիս չանցած՝ 1321 թ. մարտի 3-ին, Զաբելը Այասում ձերբակալվեց:[69] Ըստ երևույթին, Զաբելի հետ կամ մի քիչ անց, ձերբակալվում են նաև նրա չորս որդիները (հինգերորդ որդին՝ Գին, գտնվում էր Բյուզանդիայում): 1323 թ., արդեն, Զաբելն ու իր ավագ որդիները՝ Հուգոն և Հենրին, սպանվում են բանտում, իսկ մյուս զավակները՝ անչափահաս Ջիվանն ու Բոհեմունդը, որոնք Օշինի համար որևէ իրական վտանգ չէին ներկայացնում, իշխանների խնդրանքով ազատվում են:[70]

Դեռ նոր էին ավարտվել 1320–1321 թթ. խժդժությունները, երբ Իլխանության Իկոնիայի տեղապահը՝ վեզիր Չոբանի որդի Թամուրդաշը, 1321 թ. նոյեմբերին մեծ զորքով ասպատակեց Կիլիկիան:[71] Ըստ Աբուլ Ֆիդայի, 1321 թ. Կիլիկիա արշավելուց առաջ, Թամուրդաշը դեսպան է ուղարկում Եգիպտոս:[72] Ցավոք, նա չի նշում, թե ի՞նչ նպատակով են այցելում, սակայն ենթադրելի է, որ այդ դեսպանության շրջանակներում եղել է նաև Կիլիկիայի դեմ համատեղ պայքարի ծրագրի մշակումը: Հակառակորդին դիմադրել չհաջողվեց. մանկահասակ թագավորը հարկադրված ապաստանեց Այասում: Թամուրդաշը մեկ ամիս ավերի ու կոտորածի մատնեց Կիլիկիան: Անշուշտ, տարօրինակ է, որ այս դեպքերի կապակցությամբ ո՛չ Սամուէլ Անեցու, ո՛չ Սմբատի շարունակողների և ո՛չ էլ այլ աղբյուրներում որևէ հիշատակում չկա Օշին Կոռիկոսցու

[69] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 192:

[70] Դարդել, գլ. ԻԳ, էջ 29:

[71] Սամուէլ Անեցի, էջ 158: Սմբատ, Տարեգիրք, էջ 128: Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 192:

[72] Արաբական աղբյուրները, էջ 247:

մասին, որն, ի պաշտոնե, կոչված էր կանգնել երկրի պաշտպանության գլուխ: Մնում է ենթադրել, որ Օշինը կա՛մ մանկահասակ արքայի պես ամրացել էր անառիկ ամրություններից մեկում, կա՛մ էլ, իբրև խնամակալ, արքայի հետ էր:

Թամուրդաշի հարձակումը, ի տարբերություն Հալեպի և Տրիպոլիի ամիրների արշավանքների, տարօրինակ էր, քանզի այն հակասում էր Կիլիկիայի թագավորության և Իլխանության դաշնակցային հարաբերություններին: Հարձակումը մոնղոլների դաշնակցի վրա կտրում էր նաև այն ձևական «դաշնակցային» նվազագույն կապերը, որոնք մինչ այդ, թեկուզև անվանապես, պահպանվում էին:

Այնուամենայնիվ, որքան էլ այդ արշավանքներն ավերիչ լինեին, դրանք 1322 թ. կազմակերպված մամլուքյան արշավանքի նախերգանքն էին: Հարձակմանը նախորդել է լրտեսական խիտ ցանցի ծավալումը Կիլիկիայում, որի մասին վկայում է Բարսեղ Մաշկևորը. «Որպէս տաճիկ լրտեսք՝ զգլխատոցն քակելով եւ վարսս կտրելով եւ զգեստս փոխելով, եւ լեզուաւ մերով խօսելով՝ թագուցանեն ծեւովն զքշնամութիւն, իսկ եթէ տանջանս ի վերայ հասուսցեն՝ վաղվաղակի յայտնի թագուցեալն»:[73] Իր հերթին Հայոց թագավորը, ըստ ամենայնի տեղեկացված լինելով նախապատրաստվող արշավանքի մասին, օգնության խնդրանքով դեսպանություն ուղարկեց Ֆրանսիա, որին ի պատասխան՝ Հռոմի պապը դիմեց Կիպրոսի և Կիլիկիայի միապետերին՝ կոչ անելով միասին դիմագրավել եգիպտական սպառնալիքին:[74]

Մամլուքյան արշավանքը սկսվեց 1322 թ. ապրիլին, որին ըստ Ներսես Պալիանենցի, միայն հեծելազորից մասնակցում էր 40 հազար զինյալ: Տարածված կարծիքի համաձայն մամլուքների ու նրանց դաշնակիցների անընդմեջ ասպատակություններն ու ավարառությունները պայմանավորված էին եվրոպական արքունիքների Լևոն IV-ի օգնության խնդրանքներով:[75] Դժվար է համաձայնվել այն մտքի հետ, որ անչափահաս Լևոն IV-ը կարող էր կապեր ունենալ արևմտյան պետությունների հետ, առանց Օշին պայլի գործուն մասնակցության: Իսկապես, Օշին Կոռիկոսցին կապեր ուներ եվրոպական արքունիքների և պապականության հետ: Սակայն, նույնիսկ եթե անտեսենք Արևմուտքի հետ կիլիկյան արքունիքի կապերն ու նրանից օգնության ակնկալիքը, բոլոր դեպքերում վճռորոշը մամլուքյան սուլթանության նվաճողական նկրտումներն էին: Սուլթանությանը պետք էր ընդամենն, առիթ (հաճախ այն կարող էր և չլինել)՝ մամլուքների գերիշխանությունն ընդունած Արևելյան Միջերկրածովյան ավազանի այս վերջին, բարեբեր ու տնտեսապես մրցունակ քրիստոնեական պետության ոչնչացման համար: Այդ ամենն առավել տեսանելի դարձավ 1322 թ. արշավանքի ժամանակ:

Հակառակորդի բանակի առաջին հարվածը, ինչպես և սպասվում էր, ուղղվեց Այասի վրա: Այն XIII դարի կեսից, առավելապես դարի 80-ական թթ-ից., Լևանտում խաչակրաց վերջին տիրույթների անկումից հետո դարձել էր տարանցիկ առևտրի կենտրոն: Այասի տնտեսական գերակայությունն ակնառու էր դառնում նաև այն հանգամանքով, որ հայ գահակալները, XIII դարի երկրորդ կեսից սկսած, հարկային ու մաքսային նորանոր արտոնություններ էին սահմանել առևտրականների, մասնավորապես վենետիկցիների և ջենովացիների համար, որոնց ձեռքին էր կենտրոնացված եվրոպական ինչպես առևտրական, այնպես էլ ռազմական նավատորմի հիմնական մասը: Այասը XIII դարի կեսերից մրցակցության մեջ մտնելով Ալեքսանդրիայի և Արևելյան Միջերկրածովի քրիստոնյաների ձեռքին գտնվող նավահանգիստների հետ, արդեն XIV դարի սկզբին այդ պայքարում հաղթող դուրս եկավ՝ դառնալով մամլուքների հերթական արշավանքի նշանակետը:

---

[73] Հայապատում, էջ 543:

[74] Histoire des croisades, t. V, p. 226–227.

[75] Г. Микаелян, стр. 447.

Քաղաքը պաշարվեց 1322 թ. ապրիլի վերջին, իսկ մայիսի 9-ին նրա վերջին հենակետը՝ ծովային ամրոցը, արդեն հակառակորդի ձեռքին էր։[76] Հատկանշական է, որ պաշարման ժամանակ օգնություն ստացվեց Կիպրոսի թագավորից, որը նոր էր հաշտվել Հայոց թագավորի հետ։[77] Կիպրական գալերները, պաշարման սկզբից օգնության հասնելով, քաղաքի բնակիչներին տեղափոխեցին Կիպրոս և Կոռիկոս։ Կարելի է ենթադրել, որ Կիպրոսի թագավորի օգնությունը ոչ այնքան Այասի հասարակ բնակչությանն էր ուղղված, որքան Այասում եղած եվրոպական, ինչպես նաև՝ կիպրական վաճառականությանը։ Հավելենք, որ Այասի անկումը ներկայացնող Ն. Պալիանենցը այն կապում է կիպրացիների տրամադրած նավերով նրա բնակիչների՝ քաղաքից հեռանալու և բերդը կրակի տալու հետ։[78] Բերդի հրդեհման փաստը հաստատում է նաև Աբուլ Ֆիդան։[79]

Ի մի բերելով առկա փաստերը՝ կարելի է պնդել, որ Այասում պետական մակարդակի պաշտպանության որևէ փորձ չի եղել։ Քաղաքը, կամ գոնե ամրոցը, հնարավոր էր պահպանել։ Այդ է հաստատում Ներսես Պալիանենցը՝ անուղղակիորեն դրանում մեղադրելով Կիպրոսի թագավորին, որը բերդի պաշտպաններին նահանջի հնարավորություն էր տվել։ Սակայն, եթե վերջիններիս հաջողվում է փրկվել, ապա քաղաքի բնակչությունը հիմնականում գերեվարվում է։ Մամլուքյան զորքերը Այասում լիովին բացահայտում են իրենց արշավանքի իրական նպատակը։ Գրավելով և ավերելով քաղաքը՝ նրանք քարուքանդ են անում նաև քաղաքի ամրությունները, արաբ պատմիչի խոսքերով նրանք «քանդեցին այնքան ինչքան, որ կարողացան քանդել»։[80]

Մամլուքները, Ամանոսի լեռները անցնելով, Այաս էին հասել ծովեզրյա շրջաններով՝ նպատակ ունենալով նվաճել Այասը։ Իրենց հիմնական նպատակին հասնելով՝ նրանք Ջահան գետի ափերով ուղղվում են դեպի հյուսիս։ Արաբ հեղինակը նշում է, որ Այասը գրավելուց հետո մամլուքները վերադառնում են։[81] Հակառակ այդ տեղեկությանը, Սմբատ Գունդստաբլի Շարունակողը տեղեկացնում է, որ թշնամին շարունակել է արշավանքը դեպի հյուսիս։ Ի վերջո, հակառակորդի առաջխաղացումը կանգնեցվում է Մսիսի մոտ, որտեղ անսպասելիորեն մամլուքների կայանատեղիի վրա են հարձակվում թագավորական զորքերը։ Գրոհի հանկարծակիության շնորհիվ մարտի սկիզբը հաջող է լինում հայերի համար, բայց նրա հետագա ընթացքը բավականին ծանր անդրադարձ ունեցավ հայկական կողմի վրա։ Թագավորական զորքերը զգալի կորուստներ են կրում, զոհվում են Ջլկոնց ամրոցի տեր Հեթումը, վերջինիս եղբայր Կոստանդինը, պարոն Վահրամ Լոռիկը, Օշին պայլի եղբոր՝ Կոստանդինի որդի՝ Օշինը[82] և շատ ասպետներ ու զինվորներ։ Հայտնի չէ ճակատամարտի արդյունքը, սակայն կարելի է կռահել, որ մամլուքները ևս մեծ կորուստներ են ունեցել և ստիպված են եղել նահանջել. հակառակ պարագայում Աբուլ Ֆիդան կանդրադառնար այս ճակատամարտին։ Ենթադրում ենք, որ վերջինս ուղղակիորեն չի ցանկացել գրի առնել Մսիսի մոտ մամլուքների կրած անհաջողությունը։

Ղ. Ալիշանի հեղինակած «Սիսուանում» մի վկայություն է պահպանվել 1323 թ. թուրքմենների արշավանքի և Մոլեվոնը գրավելու վերաբերյալ. «Յիշաւ (ասպատակ) արարեալ զօրացն թուրքաց՝ զՄլունն զամէն առ հասարակ ի մեծէ մինչև ցփոքունս գերեաց, եւ

---

[76] Արաբական աղբյուրները, էջ 247, տե՛ս նաև Սմբատ, Տարեգիրք, էջ 129, Հայապատում, էջ 532։

[77] G. Hill, p. 277, K. Setton, p. 289: Ըստ երևույթին այս օգնությունը նկատի ունի Բակուրանը, որը նշում է Կիպրոսի արքա Հենրիի կողմից ուղարկված օգնությունը 1322 թ. (տե՛ս Բակուրան, Կիպրոս կղզի, Նիկոսիա, 1903, էջ 112)։

[78] Հայապատում, էջ 532։

[79] Արաբական աղբյուրները, էջ 247։

[80] Նույն տեղում։

[81] Նույն տեղում։

[82] Սմբատ, Տարեգիրք, էջ 130։

իրով այրեաց...»:[83] Սակայն աշխատության ժամանակագրական ցանկում Ղ. Ալիշանը այդ արշավանքը վերագրում է մամլուքներին,[84] որն ըստ մեզ, շփոթմունքի արդյունք է: Մամլուքներն այդ ժամանակ չէին կարող հասնել երկրի արևմտյան շրջաններում գտնվող կիլիկյան Տավրոսի փեշերին: Փաստորեն մամլուքների արշավանքին հաջորդել է թուրքմենների արշավանքը, որն էլ ավելի է ծանրացրել թագավորության ներքին ու արտաքին դրությունը: Մոլեվոնի նման լեռնային ամրոցի անարգել գրավումը ևս վկայում է թագավորության կողմից սեփական տիրույթների պաշտպանությունն ապահովելու անկարողության մասին:

Այնուամենայնիվ նույն 1323 թ. առանց դաշնակիցների մնացած հայկական թագավորության կացությունը փոքր-ինչ բարելավվեց: Թեմուրդաշը, ի վերջո, ապստամբում է իր տիրոջ՝ իլխան Աբու Սայիդի դեմ, և պարտվելով, ստիպված փախչում է իր դաշնակցի՝ սուլթան Մելիք-Նասրի մոտ: Իլխանը, Թեմուրդաշին ենթակա սելջուկներով ու թաթարներով բնակեցված տարածքներում նոր ու հուսալի կառավարիչ է նշանակում: Արդյունքում Կիլիկիան առժամանակ ձերբազատվեց արևմուտքից և հյուսիսից սպառնացող վտանգներից: Հայկական պետության վիճակը բարելավվեց նաև դիվանագիտական ասպարեզում: Հռոմի պապ Հովհաննես XXII-ը քանիցս դիմեց Աբու-Սայիդին՝ կոչ անելով՝ օգնել դաշնակից Կիլիկիային: Պապն իր նամակներում շեշտում էր, որ մոնղոլները նաև հայերի հետ ունեն դաշնակցային հարաբերություններ:[85] Բացի այդ, քահանայապետը եվրոպական միապետներին կոչ արեց խաչակրաց նոր արշավանք սկսել, որի գաղափարը դեռևս թևածում էր

[83] Սիսուան, էջ 142:
[84] Նույն տեղում, էջ 558:
[85] Կիլիկյան Հայաստանը, որպես Իլխանությանը հարկատու երկիր, տարեկան վճարում էր 30 000 դինար հարկ (տե՛ս. Г.А. Дмитриев. Поземельные отношения в Киликийской Армении, Պատմա-բանասիրական հանդես, 1970, թիվ 2, էջ 116):



Եվրոպայում:[86]

Անշուշտ, Աբու-Սայիդը, որն Իլխանության վերջին զորեղ միապետն էր, քաջ գիտակցում էր իր պետության շահերը, որոնք, անգամ XIV դարի սկզբին, պահանջում էին Կիլիկիայի թագավորությունը պաշտպանել օրավուր հզորացող մամլուքյան սուլթանությունից: Նա Իլխանության արևմտյան սահմանները պաշտպանելու համար քսան հազարանոց զորամաս տեղադրեց սահմանային հյուսիս-արևմտյան շրջաններում: Միաժամանակ, Աբու-Սայիդն այդ զորամասին հրահանգեց Կիլիկիայի թագավորությանը սպառնացող վտանգի դեպքում անպատճառ օգնություն ցուցաբերել: Ավելին, Աբու-Սայիդը պատժիչ արշավանք ձեռնարկեց նաև դեպի Ասորիք:[87] Մամլուքյան սուլթանությանը ոչինչ չէր մնում, քան համաձայնվել Աբու-Սայիդի հաշտության առաջարկի հետ, մանավանդ, որ նրանք Այասի գրավումով լուծել էին իրենց կարևորագույն խնդիրներից մեկը:

Ցավոք, դա հայ-մոնղոլական արգասաբեր դաշնակցության վերջին ակորդն էր, որն այս կամ այն կերպ գործեց մինչև 1330 թթ. կեսերը՝ իլխանների պետության տրոհումը:[88] Այնուամենայնիվ, հայ-մոնղոլական դաշինքը վերջին անգամ անդառնալի կորուստներից փրկեց Հայոց թագավորությանը: Հայ-մամլուքյան հաշտության գործում նկատելի ավանդ ունեցավ նաև Բյուզանդական կայսրությունը, որն այդ ժամանակ մամլուքների դաշնակիցն էր: Օշինը

[86] Histoire des croisades, t. V, p. 227.
[87] «Յայսմ ամի էջ խանն Խազան բազում եւ անթիւ զաւրաւք յաշխարհն որ կոչի Շամբ, զի սոքաւք հատուցէ Աստուած զչարիս Իսմայելացոցն ի գլուխ իւրեանց առնուլ զվրէժ սրբութեան իւրոյ» (Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Կազմեց Հ. Յակովբոս, վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 790):
[88] Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք առաջին, Երևան, 1957, էջ 408: Տե՛ս նաև B. Spuler, The Muslim world, part II, Mongol period (այսուհետև՝ B. Spuler) Leiden, E.J. Brill, 1966, p. 40, Ira M. Lapidus, A History of islamic societies, Cambridge, 1990, p. 290.

և նորընտիր կաթողիկոս Կոստանդին Դ Լամբրոնացին (1323–1326 թթ.) 1323թ. նամակով դիմեցին բյուզանդական կողմին, առաջարկելով հանդես գալ որպես միջնորդ: Հայկական կողմը փոխարենն առաջարկեց գործուն քայլեր իրականացնել երկու եկեղեցիների միավորման հարցում:

Հաշտության կնքման նպատակով Կահիրե է մեկնում կաթողիկոս Կոստանդին Լամբրոնացին, որտեղ էլ նույն 1323 թ. կնքվում է հայ-մամլուքյան հաշտության համաձայնագիրը: Նրան Հալեպում, ապա և Կահիրեում, ընդունում են մեծ պատիվներով: Հաշտությունն առերևույթ բավականին նպաստավոր էր հայկական կողմի համար: Այն ոչ միայն տարածքային կորուստներ չէր ունենում, այլև՝ սուլթանությունը պարտավորվում էր վերականգնել բոլոր ամրությունները, որոնք ավերվել էին մամլուքյան ներխուժման հետևանքով: Այս հաշտությամբ Մելիք Նասըրը մասամբ հասավ իր նպատակին:[89] Վերականգնվող բերդերի և ամրությունների մեջ բացառություն էին արվում Այասի ամրությունների համար, որոնց վերականգնումից մամլուքները հրաժարվում են: Այդ պայմանագրով հայերը պարտավորվում են նաև տարեկան մեկ միլիոն երկու հարյուր հազար դիրհեմ հարկ վճարել,[90] որը հսկայական գումար էր: Այն կազմում էր Այասի բաժտան եկամուտների մոտ կեսը, ինչը մեծ հարված էր Կիլիկիայի տնտեսական կյանքի համար:

Ըստ Վ. Քյուրքչյանի, Այասում բնակվողները պարտավորվում են յուրաքանչյուր բնակչից, հօգուտ սուլթանության, տարեկան գանձել մեկ բյուզանդ ոսկի խարաջ:[91] Ցավոք, հեղինակը չի հայտնել այդ տեղեկության աղբյուրը, սակայն, կարելի է ենթադրել, որ խոսքը վերը հիշատակված հարկի մասին է:

---

[89] Աղազարմը կարծում է, որ այդ հաշտությամբ եգիպտացիները չհասան իրենց նպատակին (տե՛ս Աղազարմ Մ. Նազարեթ, Նօթեր եգիպտոսի հայ գաղութին վրայ, Գահիրէ, 1911, էջ 18):

[90] V. Langlois. La tresor des chartes, p. 232.

[91] Վ. Քիւրքչեան, Հայկական Կիլիկիա, Նիւ-Եորք, 1919, էջ 58:



Թե երկիրն որքան էր տուժել անընդմեջ արշավանքների հետևանքով, երևում է Բարսեղ Մաշկևոր վարդապետի թողած ձեռագրի հիշատակարանից. «Տէր խնամեսցէ զսակաւ ինչ մնացեալքս՝ սիրով և գթութեամբ, և աճեցուսցէ եւ բազմացուսցէ առաւել քան զչափն առաջին, եւ արասցէ մեզ դարձեալ տեսանել զաւերակսն եւ զանմարդաբնակսն՝ վերստին շինեալ եւ լցեալ բազում բնակչօք, մինչ զի ասիցեն՝ թէ, նեղ է մեզ տեղիս, ընդարձակեսցուք...»:[92] Այստեղ առավել ցայտուն զգացվում է հայրենասեր հոգևորականի հավատն ու հույսը՝ ամոքելու այդ խոր վերքերը:

Այնուամենայնիվ, այս պատերազմից Հայոց թագավորությունը դուրս եկավ նվազագույն կորուստներով: Բացի այդ, հաշտության ստորագրումը երկրի ղեկավարությանը՝ ավելի ստույգ Օշին պայլին հնարավորություն տվեց ներքաղաքական կյանքում առավել ակտիվ քայլեր կիրառել: Խոսքը ներքին ուժերի ճնշման մասին է: Ըստ երևույթին, Օշին թագավորի մահից հետո Սելևկիայից արևմուտք գտնվող տարածքը՝ Իսավրիան, որը դեռևս Լևոն I-ի ժամանակ տրվել էր հիվանդախնամ ասպետներին, դուրս էր եկել կենտրոնական իշխանության ենթակայությանից: Հարկ է նշել, որ դեռ Օշին թագավորը ևս ժամանակին վտարել էր նրանց Իսավրիայից,[93] Սակայն կարճ ժամանակ անց 1320 թ՝ մահվանից մի փոքր առաջ, Օշին արքան մահմեդականների դեմ պայքարում, օգնություն ցույց տալու պայմանով, Իսավրիայում կալվածքներ էր վերանվիրել հիվանդախնամներին,[94] այսպիսով կրկին վերականգնելով նրանց իրավունքներն այդ տարածաշրջանում: Ընդ որում, ասպետների ենթակայության տակ գտնվել է նաև Սելևկիա քաղաքը: Ղ. Ալիշանը, չնշելով իր օգտագործած աղբյուրը, գրում է. «...պայլն Օշին, որ զամենայն Իսաւրիա գրաւեաց՝ ընդ նմին եւ

---

[92] Հայապատում, էջ 536:

[93] T. S. R. Boase, The Cilician Kingdom of Armenia (այսուհետև՝ Boase) Scottish Academic press, Edinburgh, London, 1978, p. 124–125.

[94] Langlois, Essai historique, p. 33, K. Setton, p. 289.

զկալուածս ասպետացն նուաճէր կամ կապտէր, բայց ըստ ոմանց՝ նոյն ինքը թագաւորն Օշին գրաւեալ էր, եւ ասպետացն զինու զօրութեամբ հակառակեալ նմա. վասն որոյ միջնորդ եղեալ քահանայապետին՝ յորդորէր զՕշին դարձուցանել առ ասպետսն՝ եւ սոցա պատուիրէր պատկառ կալ պայմանացն՝ որովք շնորհեալ էին նոցա տեղիքն»:[95]

Այսպիսով, հայտնելով հանդերձ Սելևկիայից արևմուտք ընկած հողերն Օշին արքայի կողմից գրավվելու մասին,[96] Ղ. Ալիշանը կարծում է, որ Իսավրիան վերագրավողը եղել է Օշին պայլը: Ընդ որում, նա ավելացնում է, որ պայլը վերատիրում է Տարսոնին նույնպես:[97] Կարծում ենք, որ Օշին արքայի մահից հետո հիվանդախնամ ասպետները, որոնք, հավանաբար, միջամտել էին Կիլիկիայի ներքաղաքական պայքարին, զրկվել էին Իսավրիայում իրենց վերջին հենակետերից: Պետք է նշել նաև, որ հիվանդախնամները օգտվում էին նաև Կիպրոսի թագավոր Հենրիի հովանավորությունից և նրանց միջոցով կիպրական արքունիքը կիլիկյան ներքաղաքական կյանքին ներազդելու ծանրակշիռ լծակ ուներ: Տարսոնի վերագրավումը ևս պետք է վերագրել Օշին պայլին, քանզի Օշին արքան բնավ կարիք չէր ունենա վերագրավելու պետության կենտրոնական հատվածում գտնվող Տարսոնը: Այսպիսով, կարելի է մասամբ համաձայնել Ղ. Ալիշանի հետ. Օշին պայլը վերջնականապես վտարեց հիվանդախնամ ասպետներին Իսավրիայից: Ավելին, միևնույն ժամանակ ներքին խռովությունները ճնշելով, նա վերստին տիրեց Տարսոնին: Բանն այն է, որ 1323 թ. դեռևս բավական ակտիվ քաղաքական կշիռ ունեին Լուզինյանների կողմնակիցները, որոնց օգնում էին հիվանդախնամները: Տարսոնի գրավումը, որը նշում է Ղ. Ալիշանը և վերագրում Օշին պայլին, ամենայն հավանականությամբ, առնչվում է հենց Լուզինյանների կողմնակիցների դեմ պայքարին, քանզի այն չէր գրավվել ենթամլուքների արշավանքների ժամանակ: Այսպիսով, պետք է ենթադրել, որ Տարսոնի և Իսավրիայի վերագրավումները, կապված են եղել մեկ ընդհանուր ծախողված հեղաշրջման փորձի հետ:

Շարունակելով իշխանության ամրապնդման քաղաքականությունը, Օշինը հասավ նրան, որ նույն 1323 թ. Լևոն IV-ի հրամանագրով նրան շնորհվեց նաև Պծապեռոնը: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպես է մանկահասակ Լևոն IV-ը ստորագրել այդ հրամանագիրը, երբ իրական իշխանությունը պատկանում էր հենց Օշին պայլին: Օշին Կոռիկոսցու Իսավրիա կատարած արշավանքն առավել հավանական է նաև այն պատճառով, որ Իսավրիան արևմուտքից սահմանակից էր նրա տիրույթներին: Իսավրիայի վերանենթարկեցումով և Պապեռոնի շրջանին տիրելով՝ Օշինը տեր է դառնում թագավորության ողջ արևմտյան շրջաններին՝ ավելի ևս ամրապնդելով, իր առանց այն էլ ամուր, դիրքերը: Եվ բնավ էլ պատահական չեն նրա ունեցած պաշտոններն ու տիտղոսները՝ Կոռիկոսի կոմս, ավագ պարոն, թագադիր, Իսավրիայի տեր, ավագ պայլ:

Օշինը, միաժամանակ, փորձում է ամրապնդել կապերը արևմտաեվրոպական երկրների հետ: Մասնավորապես, նա դիվանագիտական սերտ կապեր է պահպանում եվրոպական միապետների և Հռոմի պապի հետ: Հովհաննես XXII-ը 1323 թ. ընդառաջելով Օշին Կոռիկոսցու խնդրանքին, Երուսաղեմի կաթոլիկ պատրիարքից պահանջում է պարզաբանել, թե արդյոք Կոռիկոսը հարմար է եպիսկոպոսական կենտրոն հաստատելու համար:[98] Իր այս քայլով Օշինը, անշուշտ, նպատակ ուներ, Լուզինյանների հետ մոտակա բախման ժամանակ ապահովել պապական աթոռի, եթե ոչ օժանդակությունը, ապա գոնե՝ չեզոքությունը: Նույն 1323 թ. Այասի ամ-

[95] Միսուան, էջ 287:

[96] Այսպես է կարծում նաև Ս. Բոռնազյանը, ինչը մեր կարծիքով հիմնավորված չէ (տե՛ս Ս. Բոռնազյան, «Խաչակիր օրդենների և Կիլիկյան Հայաստանի քաղաքական ու տնտեսական առնչությունների պատմությունից», Պատմա-բանասիրական հանդես, 1963, թիվ 3, էջ 178):

[97] Միսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 558:

[98] Միսուան, էջ 340:

րությունների վերականգնման համար Հռոմի պապից ստացվեց երեսուն հազար ֆլորին, և անմիջապես սկսվեց Այասի բուռն վերականգնումը, որն անչափ կարևոր էր պետության համար: Երկրի տնտեսությունը աստիճանաբար սկսեց վերականգնվել: Նույն տարին պապը նամակով դիմում է Օշինին, Լեւոնին և ազնվականներին՝ հայտնելով, որ Ֆրանսիայի արքա Կարլոս IV Գեղեցիկը (1322–1328 թթ.) շուտով արշավանք է պատրաստում դեպի Սուրբ Երկիր:[99] Մինչ այդ, միջազգային առևտրի բնագավառում շարունակելով հայոց արքաների քաղաքականությունը, Օշինը 1321 թ. առևտրական նոր պայմանագրեր կնքեց ինչպես Վենետիկի, այնպես էլ՝ Մոնպելիեի հետ:[100]

Ավագ պայլը մինչ այդ ամրապնդել էր իր դիրքերը նաև արքունիքում՝ 1321 թ. ամուսնանալով Օշին թագավորի երկրորդ կնոջ՝ Հովհաննայի հետ: Ահա հենց 1321 թվականից էլ պայլն իր քաղաքական հակառակորդների դեմ անցնում է հարձակման: Այդ փաստը հաստատում է նաև Լուզինյանների նկատմամբ կողմնակալ վերաբերմունք ունեցող Դարդելը. «Յորժամ պարոն Օշին էառ ի կնութիւն զբամբիշն (Հովհաննա Անժուացուն – Դ.Թ.) զառածաւ յանգթութիւն եւ զորս եղեալ էին ընդդէմ նորա՝ ետ սրախողխող առնել եւ զայլս հալածել յաշխարհէն»:[101] Այսպիսով, Օշինին հաջողվում է ասպարեզից հեռացնել իր քաղաքական հակառակորդներին և հաղթող դուրս գալ իշխանության համար մղվող պայքարում: Ընդորում, հակառակորդները թե՛ գահի նկատմամբ նկրտումներ ունեցող Լուզինյաններն էին ու նրանց համակիր հայ պարոններն ու հիվանդախնամ ասպետները և թե անձամբ իր՝ պայլի քաղաքական հակառակորդները: Ինչ վերաբերում է թագավորի հորաքրոջ ընտանիքին ապա նույն 1323 թ. Զաբելը և ավագ որդիները՝ Հուգոն և Հենրին սպանվում են: Ողջ մնացած Լուզինյան երկու երիտասարդ-

[99] V. Langlois, Essai historique, p. 34.

[100] Նույն տեղում, էջ 33:

[101] Դարդել, գլ. ԻԳ, էջ 28–29:



ները՝ Ջիվանը և Բոհեմունդը, հյուրընկալվում են Հռոդոսի հիվանդախնամ ասպետների մոտ: Դատելով եղած տվյալներից՝ Օշին պայլը հիմքեր ուներ զգուշանալու Զաբելից և Լուզինյաններից ընդհանրապես: Այստեղ պայքարը միայն անձնական՝ Լուզինյանների և Օշինի միջև պայքար չէր, այստեղ բախվում էին ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական շահեր:

Առաջինը դավանաբանական հանգամանքն էր: Արդեն նշել ենք, որ Օշինը որոշակի դիվանագիտական քայլերի շնորհիվ կարողացավ հասնել պապականության, գեթ առերևույթ բարյացակամության: Սակայն, պապական աթոռը պետք է շարունակեր Կիլիկիայում իր հիմնական հենարանը համարել կաթոլիկ իշխաններին, իսկ Կիլիկիայում Զաբելից ու նրա որդիներից բացի, առավել ազդեցիկ կաթոլիկ իշխաններ չկային: Օշինի քաղաքականությունը գործնականում հեռու էր կաթոլիկ եկեղեցու քաղաքականությունից: Սսի և Ադանայի ժողովներից անցել էին ոչ քիչ տարիներ, սակայն, դրանց որոշումների իրագործումն այդպես էլ մնում էր թղթի վրա: Սակայն պապական աթոռը ելնելով նաև սեփական շահերից հարկադրված էր հաշտվել ստեղծված իրականության և թագավորության փաստացի ղեկավարի առկայության հետ: Այստեղ, անշուշտ, պետք է նկատի ունենալ Հովհաննես XXII պապի քաղաքականությունն Արևելքում, որը Կիլիկիան դիտարկում էր որպես քրիստոնյաների արևելք հետագա հնարավոր վերադարձի հիմնական հենարան:[102] Ուստի և նա հարկադրված էր բավական զգուշավոր քաղաքականություն վարել Կիլիկիայում:[103]

Ներքաղաքական պայքարն ուներ իր հստակ տնտեսական և քաղաքական պատճառները: Պայմանականորեն ասված երկու հակամարտ խմբավորումների՝ միարարների և հակամիարարների

[102] Амин аль-Холи, стр. 14:

[103] Հովհաննես XXII-ից ավելի քան հարյուր թղթեր են հասել մեզ հասցեագրված Հայոց թագավորին, և կաթողիկոսին (տե՛ս Գ. Զարպհանալեան, Ուսումնասիրութիւնք հայ լեզուի եւ մատենագրութեան յԱրեւմուտս, Վենետիկ, 1895, էջ 19):

միջև միայն շղարշն էր դավանաբանականը: Նրանց մի ստվար մասը դավանաբանական հարցի լուծման երկու ուղղություններից որևէ մեկին էր հարում՝ տնտեսական կամ քաղաքական շահերից ելնելով: Կարելի է որոշակի համեմատություններ անել XVI դարի Ֆրանսիայի կաթոլիկ լիգայականների և հուգենոտների ու Կիլիկիայի XIV դարի սկզբի միարարների և հակամիարարների պայքարների միջև: Այս երկու պատմական ժամանակաշրջանում էլ դավանաբանական կնճիռները վաղուց դադարել էին բախումների պատճառներ լինելուց: Դավանանքը ծառայում էր միայն որպես արտաքին շղարշ՝ քաղաքական նպատակների իրականացման համար: Եվ ահա, Օշին պայլի, կամ որ այդ ժամանակ նույնն էր կենտրոնական իշխանության դեմ բարձրացված խռովությունը կամ ապստամբությունը, որի մասին մեզ հաղորդում է Հ. Դարդելը, նպատակ է ունեցել իշխանության բերել Լուզինյաններին: Սրան կհետևեր տնտեսական դաշտի վերաբաժանումը: Բացի այդ, Լուզինյանների և Օշինի պայքարի արդյունքում կարող էր երևան գալ նաև գահաժառանգման հարց: Օշին պայլն այդպիսի նպատակ՝ այսինքն, մանկահասակ Լևոնին ասպարեզից հեռացնելու խնդիր չուներ: Օշինը, եթե անգամ այդպիսի ցանկություն ունենար, ապա դա կաներ Լուզինյաններին չեզոքացնելուց հետո, որը նա չարեց: Բացի այդ, տվյալ պարագայում անիմաստ կլիներ նրա դստեր ամուսնությունը Լևոնի հետ: Ինչ վերաբերում է Լուզինյաններին, ապա վերջիններիս համար լիովին շահավետ կարող էր լինել մանկահասակ արքայի մահը, որը, կարող էր նրանց համար ճանապարհ հարթել դեպի գահ:

Օշինը չբավարարվեց միայն պապական աթոռի և մոնղոլների հետ սերտ շփումներով: Նույն 1323 թ. նա և նորընտիր կաթողիկոս Կոստանդինը նամակով դիմեցին Բյուզանդիային: Կոստանդնուպոլսի պատրիարքի պատասխանից պարզ է դառնում, որ հայոց արքունիքն օգնության խնդրանքով դիմել էր մամլուքներին դաշնակից կայսրությանը: Փոխարենը, արքունիքը և կաթողիկոսը խոստանում էին միավորել երկու եկեղեցիները: Բյուզանդական արքունիքը համաձայնվեց և իր պատվիրակներին ուղարկեց Եգիպտոս:[104] Սակայն, ինչպես հայտնի է, հայկական և հունական եկեղեցիների միությունն այդպես էլ տեղի չունեցավ:



Զաբելի և նրա որդիների սպանության լուրը Կիպրոսում թշնամաբար է ընդունվում: Թեև Կիպրոսի թագավոր Հենրի II-ը բնավ դժգոհ չէր իր քաղաքական հակառակորդների մահվան համար, սակայն, երկու երկրների հարաբերությունները շիկանում են մինչև բախման աստիճան:[105]

Այնուամենայնիվ, Հովհաննես XXII-ին հաջողվում է 1323 թ. հաշտեցնել երկու երկրների գահակալներին: Քահանայապետը կարողանում է ոչ միայն հաշտեցնել կողմերին, այլև հասնում է նրան, որ երկու պետությունների միջև կնքվում է դաշինք:[106] Այն փոխադարձ ռազմական օժանդակության պայմանագիր էր՝ ընդդեմ արտաքին վտանգի: Սակայն, ինչպես երևում է, այդ դաշինքը երկար չի գործել. Ղ. Ալիշանը, դարձյալ առանց աղբյուրը նշելու, «Սիսուան»-ի «Ժամանակագրական ցանկ»-ում 1327 թ. դիմաց նշում է. «Խնդակցի ընդ թագաւորին Կիպրոսի վասն հաշտութեանն ընդ Հայոց»:[107] Ցավոք, այլ տեղեկություններ չկան հայ-կիպրական այս լարված իրավիճակը պարզաբանելու համար: Կարելի է միայն ենթադրել, որ կիպրական արքունիքը շարունակում էր Կիլիկիայի կենտրոնական իշխանությունից դժգոհ տարրերին հովանավորելու քաղաքականությունը:

Զաբելի սպանությունից հետո սակայն քաղաքական պայքարը Կիլիկիայում չդադարեց: Հայ-կիպրական 1323 թ. հաշտությունից հետո քաղաքական լարվածությունը միարարների և հակա-

[104] Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկիայի Հայկական պետության եվ Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, «Հայ-Բյուզանդական հետազոտություններ», հ. Ա, էջ 35:

[105] Fr.Tournebize, p. 232.

[106] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 558, Boase, p. 127, Hill, p. 267:

[107] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 558:

միարարների ու այդ անվանումներով իրենց քաղաքական շահերը հետապնդող աշխարհիկ և հոգևոր վերնախավի միջև, ոչ միայն չթուլացավ, այլև՝ նոր թափ ստացավ:

Այս շրջանում Կիլիկիայի արքունիքի և Հռոմի պապի միջև շարունակվում էին ակտիվ նամակագրական և դիվանագիտական կապերը: Չնայած պաշտոնապես այդ նամակները հղված էին Լևոն IV-ին, և դրա պատասխանները գրված էին նույնպես նրա անունից, սակայն, դժվար չէ կարծել, որ այդ կապերը ևս գտնվում էին Օշին պայլի վերահսկողության ներքո:

Օշին պայլի կառավարումը, որն ընթացավ փոթորկուն քաղաքական պայքարում ընդհատվեց 1329 թ.: Այդ թվականին Լևոն IV-ը բոլորեց իր քսան տարին: Փաստորեն, նա արդեն չափահաս էր համարվում պետության կառավարման ղեկն իր ձեռքը վերցնելու համար: Օշին Կոռիկոսցին պետք է հրաժարվեր իր վրա դրված խնամակալի պարտականություններից և բավարարվեր միայն թագավորահայր պատվատիտղոսով:[108] Կարծում ենք, որ հենց այդպես էլ եղել էր, քանզի նրանք (այսինքն Օշին և Կոստանդին խնամակալ եղբայրները) Լեւոնին սպանելու և գահին տիրանալու ցանկություն ունենալու դեպքում, այդ կանեին ավելի վաղ:[109] Նման նախադեպ Կիլիկիայում եղել էր, երբ 1169 թ. մանկահասակ Ռուբենի «անսպասելի» մահն ապահովեց Մլեհի իշխանության գալը: Օշինը և եղբայրը պետք է որ հրաժարված լինեին պայլությունից: Դա էր ենթադրում նաև օրենքը, սակայն, իրենց հեղինակությամբ, ազդե-

---

[108] Լ. Տեր-Պետրոսյանի կարծիքով «…Բնական է ենթադրել, որ նա (Օշին պայլը – Դ.Թ.) միջոցներ պիտի ձեռնարկեր դրանք (իշխանությունը և ձեռք բերված հարստությունը – Դ.Թ.) պահպանելու համար՝ չխորշելով անգամ Լեւոնին գահընկեց անելու և Հայոց թագավորությանը տիրելու բռնի փորձից» (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 404):

[109] Հետաքրքիր է, որ 1330 թ. հիշատակվում է Օշինի և Կոստանդինի չորրորդ եղբայրը՝ Վասիլը, որը Լևոն IV-ի հետ 1330 թ. Երուսաղեմ է գնում. նա հիշատակվում է որպես Սիմոնկլայի տեր, արքայի քեռի, բողեր, Վասիլ (տե՛ս Հ.Թ. Սաւալանեանց, Երուսաղէմի պատմութիւն, հատոր I, Երուսաղէմ, 1931, էջ 513):



ցությամբ և զբաղեցրած պաշտոններով նրանք իրական խոչընդոտ էին երիտասարդ Լևոն IV-ի քաղաքականության ազատության համար: Եվ ահա. «Ի ՉՀԹ թվին առաքեաց թագաւորն Լեւոն զօրս ի յԱտանոյ՝ եւ ըմբռնեաց զՕշին տէրն Կոռիկօսու՝ եւ զեղբայր նորին զԿոստանդին գունդստապլն՝ եւ եսպան ի սադրելոյ իշխանացն՝ եւ ի քսու արանց՝ եթէ խորհեալ են բառնալ զքեզ՝ եւ ինքեանք թագաւորել…»:[110] Սմբատ Գունդստաբլի Շարունակողը որոշ մանրամասներ է հաղորդում եղբայրների ձերբակալման և մահապատժի վերաբերյալ. «Ի թուին 778 Յունվարի քսան եւ վեցն յանկարծ առաքեաց պատանին Լեւոն՝ թագաւորն հայոց, իշխանք սակավ հեծելով վասն բռնելոյ Գունդին Կոռիկոսոյ եւ իւր եղբօրն: Եւ դիպեցան յԱտանոյ սահմանքն Գունդին, որ առ թագաւորն երթայր հինգ մարդով, եւ բռնեցին զինքն եւ դարձուցին յետ, եւ դրին յարգելք ի յեկեղեցին սուրբ Մօրօթու ի մոտ Ատանոյ: Եւ գնաց հեծեալն ու բռնեց զեղբայրն Գունդին ի գեղն տղայ Լեւոնին զգունդստապլն, եւ բերին յԱտանայ, եւ մեկ օրն սպանին զերկուսն»:[111] Սմբատի Տարեգրքի Շարունակողի շարադրանքից պարզ նկատվում է, որ ո՛չ Կոստանդինը, ո՛չ էլ, առավել ևս Օշինը տեղյակ չեն եղել նախապատրաստվող ձերբակալությանը, քանզի շարադրողն ինքն է շեշտում ձերբակալության հանկարծակիությունը: Բացի այդ, Օշինը եթե տեղեկացված լիներ նախապատրաստվող իրադարձության մասին հինգ հոգով չէր ուղևորվի արքունիք:

Երկու հաղորդումների տարբերությունը, ինչպես տեսնում ենք, էական չէ: Դրանք վերաբերում են միայն եղբայրների առանձին ձերբակալությանը: Ինչ վերաբերում է հիշատակվող Սբ. Մօրօթու վանքին, ապա այդպիսի անվանումով հայկական վանք մեզ հայտ-

---

[110] Սամուէլ Անեցի, էջ 158, տե՛ս նաև Մանր ժամանակագրություններ, հ I, էջ 88, էջ 100:

[111] Սմբատ, Տարեգիրք, էջ 131, Պարզ չէ, թե որ աղբյուրից է վերցրել Օշինին թունավորումով սպանելու փաստը Կ. Մութաֆյանը (տե՛ս Կ. Մութաֆյան, նշվ. աշխ., էջ 464):

նի չէ: Ուստի մնում է համաձայնել Ղ. Ալիշանի այն ենթադրությանը, որ դա կարող է լինել միաբնակ աստրական վանական համալիր:[112]

Այդքան անսպասելի ձերբակալությունն ու հապշտապ մահապատիժը վկայում են, որ երկու հեղինակավոր պետական ու ռազմական գործիչների քաղաքական ասպարեզից հեռացման հապաղումը Լևոնի համար կարող էր անցանկալի հետևանքներ ունենալ: Այլապես այն մեղադրանքները, որ հնչեցին մահապատժից հետո կինչեին Սսում հրապարակավ՝ դատավարության ընթացքում կամ էլ հրապարակային մահապատժի ժամանակ՝ ինչպես և ընդունված էր: Սակայն, այդ ամենը տեղի չունեցավ, ավելին՝ նրանք սպանվեցին վանքում: Ուստի տեղի ունեցածը քաղաքական հեղաշրջում էր:

Հեղաշրջմանը նախորդող ժամանակահատվածում արքունիքում հավաքվել էին Օշինի անձնիշխան քաղաքականությունից դժգոհ իշխաններ, որոնց խորհուրդներով էլ, ինչպես նշում են պատմիչները այն կատարվեց:[113] Սամուէլ Անեցու Շարունակողի հիշատակած մեղադրանքից բացի, ըստ որի իբր Օշինը կամենում էր ինքը թագավորել, Հ. Դարդելն ավելացնում է. «...պատմեցին զչարութիւն և զնենգութիւն և զորս արարեալ էր պարոնին Օշնի (Օշին թագավորին) և թէ ո՛րպէս առեալ էր ի կնութիւն զդշխոյն Յովհաննա զմօրու արքայի, հարեալ ի սէր անդստին ի ժամանակէ անտի յորումած զնա ի Նէապոլսոյ ի Հայաստան. թէ այսու իսկ յաղագաւ՝ սպանեալ էր զհայրն արքայի, արբուցեալ նմա դեղ մահու, որպէս ասէր բան...»:[114] Փաստորեն, Օշին պայլին մեղադրանքներ էին առաջադրվում, որոնք ունեին ավելի քան տասնամյա վաղեմություն: Նախ, նա պղծել էր արքայական ընտանիքը՝ սիրահետելով Օշին արքայի կնոջը, ապա թունավորել էր արքային, ամուսնացել

[112] Սիսուան, էջ 260:
[113] Սամուէլ Անեցի, էջ 158, Դարդել, գլ. ԻԵ, էջ 30:
[114] Դարդել, գլ. ԻԵ, էջ 30:



թագուհու հետ, և նույնիսկ փորձել էր սպանել Լևոն IV-ին: Այդ ամենին, անշուշտ, պետք է ավելացնել ևս մեկ «հանցանք»՝ կատարված Օշին պայլի կողմից դա Զաբելի և նրա ավագ որդիների սպանությունն էր: Հավելենք, որ այս «հանցանքը» հայ աղբյուրների կողմից որպես այդպիսին չի ընկալվում: Դա ևս խոսում է Լուզինյանների նկատմամբ կատարված հաշվեհարդարի հայ իրականության մեջ ընկալելի լինելու մասին:

Սմբատ Գունդստաբլի Շարունակողը ևս Օշին պայլի հանցանքներին հավելում է հետևյալը. «...Պատճառք զայս դրին թէ՝ յետ մահուան Օշին թագաւորին շատ բերդեր ապրանք առին, որ չէր իրենց սահմանով ապրանք. եւ այլ շատ բան ասացին փոքր մարդիկն վասն նոցա, ինչվի սպանել տուին, որ զճշմարիտն Աստուած գիտէ»:[115]

Այստեղ պատմիչը նույնպես հաստատում է իր կասկածները այդ մեղադրանքների իրավացիության վերաբերյալ: Բացի այդ հաջորդ տողում նա հաստատում է այդ մեղադրանքների անհիմն լինելը՝ փորձելով արդարացնել Լևոն IV-ին թափված անմեղ արյան համար. «Եւ Լեւոն թագաւորն անմեղ է ի նոցա արենէն. որոց ողորմեսցի նոցա Աստուած»:[116] Իրոք, դժվար չէ նկատել այդ մեղադրանքների շինծու լինելը. նախ՝ դա հաստատում են իրենք՝ պատմիչները, արգահատելի խոսքեր ուղղելով այն իշխաններին, որոնց խորհուրդներով տեղի ունեցավ նշված սպանությունը:[117] Վերն արդեն նշվեց, որ 1320 թ. Օշին թագավորը մի քանի ամիս տևած հիվանդությունից հետո մահացավ: Ուստի արքայի թունավորման վարկածը շինծու է, մանավանդ, որ Օշին արքան ինքը մահվանից առաջ Օշին Կոռիկոսցուն նշանակել էր խնամակալ: Այդ փաստը խոսում է միայն թագավորի առ Օշին Կոռիկոսցին տածած վստահության մասին: Հովհաննա թագուհուն սիրահետելը դեռևս Օշին

[115] Սմբատ, Տարեգիրք, էջ 131:
[116] Նույն տեղում:
[117] Սամուէլ Անեցի, էջ 158:

արքայի կենդանության օրոք պետք է, որ հորինված լինի, որի համար հիմք է ծառայել նրա ամուսնությունն Օշին պայլի հետ: Օշինի թագավոր դառնալու իրական հնարավորությունների մասին վերն արդեն խոսել ենք և կարծում ենք, որ այդ մեղադրանքը ևս հիմնազուրկ է: Միակ իրական մեղադրանքը պետական բերդերի յուրացման փաստն էր: Հնարավոր է, որ Օշինը տիրած լիներ նաև այլ ամրոցների և տարածքների, սակայն, ցավոք, դրանք ճշտելու համար համապատասխան աղբյուրներ չկան:

Մահապատժից հետո, որն իրականացվեց 1329 թ. հունվարի 27-ին, Օշին Կոռիկոսցու գլուխը հանձնվեց մամլուքյան արքունիքի միհմանդար (արքունիքի ընդունելություններ կատարող գլխավոր պաշտոնյա) էմիր Շահաբադդին Ահմադ Մուհամմեդին: Վերջինս պայլի գլուխը ուղարկեց Կահիրե: Այս քայլով Լևոն IV-ը վերահաստատեց իր վասալական կախվածությունը մամլուքյան պետությունից:[118] Կոստանդին գունդստաբլի գլուխը ուղարկվեց Աբու-Սայիդ իլխանին՝ Թավրիզ:[119] Դրանով էլ Լևոնը ցուցադրեց իր հպատակությունն Իլխանությանը: Այդ քայլով Լևոն IV-ը հարևան երկու մահմեդական տերություններին հասկացրեց, որ Կիլիկիայի թագավորության արտաքին քաղաքականությունը փոփոխություններ չի կրում: Լևոնը, սակայն, չի բավարարվում միայն եղբայրների սպանությամբ: Նրա հրամանով սպանվում է նաև իր կինը՝ Օշին պայլի դուստր Ալիծ թագուհին: Սրանով Լևոնն ուզում էր ձերբազատվել նախորդ վարչակարգից մնացած վերջին անձից, որը հետագայում կարող էր ինչպես խժդժությունների, այնպես էլ իր քաղաքականությունից դժգոհ խմբավորման շարժիչ ուժ դառնալ: «Էսպան եւ

[118] Արաբական աղբյուրները, էջ 248, Սամուէլ Անեցի, էջ 158, Մանր ժամանակագրություններ, h. I, էջ 88: Բացի այդ, ինչպես գիտենք Լևոնը նաև ամենամյա հարկ էր վճարում Եգիպտոսին (տե՛ս Իբն Ի Բատուտա, Քաղեց և թարգմ. Հ. Աճառյանը, Երևան, 1940, էջ 9):

[119] Սամուէլ Անեցի, էջ 158:



զթագուհին իւր յաղագս աղտեղի գործոց նորա»:[120] Կարծում ենք, որ թագուհու անվայել կենսաձևի մասին մեղադրանքը ևս շինծու է եղել:

Հաջորդ տարի Լևոնը ուխտի գնաց Երուսաղեմ, այնուհետև մեկնեց Քրաք ամրոց: Այս ուխտագնացությունը, բացի «մեղքերի թողություն ստանալու» ակնկալիքից, ունեցել է նաև սուլթանին մեկ անգամ ևս իր հավատարմությունը հայտնելու նպատակ:[121] Սակայն, որքան էլ Լևոն IV-ը շրջակա մահմեդական տերություններին փորձեր համոզել, որ իր քաղաքականությունը անփոփոխ է մնացել, այնուամենայնիվ, ստիպված էր որոշակի վերակառուցումներ կատարել վարվող արտաքին քաղաքականության մեջ:

## 1.2. Հայոց թագավորությունը Լևոն IV-ի միանձնյա կառավարման շրջանում

Օշին Կոռիկոսցուն ասպարեզից հեռացնելով Լևոնը՝ ի դեմս
Լուզինյանների, կարողացավ գտնել քաղաքական հենարան: Չնա-
յած Կիլիկիայում տեղի ունեցած պետական հեղաշրջումը կաթոլիկ
երկրների կողմից չէր դատապարտվել, այնուամենայնիվ, սխալ է
միանշանակ պնդել, թե Օշին պայլը վարել է հակակաթոլիկ քաղա-
քականություն՝ իբրև դրանով փորձելով հաշտվել մամլուքյան սուլ-
թանության հետ:[122] Վերը շարադրածից արդեն պարզ է, որ Օշինը
բավական զգուշավոր քաղաքականություն էր վարում: Ըստ էութ-
յան ակնկալելով Եվրոպայի օգնությունը, նա շարունակեց Հայոց
արքաների որդեգրած արտաքին քաղաքականության նույն ուղե-
գիծը:

[120] Նույն տեղում:

[121] Տ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, Երուսաղէմ, 1931, էջ 512:

[122] Ա. Գալստյան, Կիլիկյան Հայոց թագավորության կործանման հարցի շուրջ. ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, N 9, էջ 54:

Միևնույն ժամանակ հիմնավորված չէ նաև այն կարծիքը, որ Օշինը սպանվեց միարարների խորհրդով,[123] քանզի նրա ներքին քաղաքականությունից դժգոհ էին և՛ իշխանները, և՛ ինքնուրույնության ձգտող Լևոնը:

Քաղաքական հենարան փնտրելով միարարների խմբավորման մեջ՝ Լևոնը, բնականաբար, պետք է ընդառաջ գնար նրանց ցանկություններին, որոնցից առաջինն էլ՝ Զաբել և Ամորի Լուզինյանների ողջ մնացած երեք որդիներից երկուսի՝ Ջիվանի և Բոհեմունդի վերադարձն էր Կիլիկիա: Դա տեղի ունեցավ 1330 թ. մամլուքների արշավանքից հետո: Լուզինյան եղբայրներին տրվեցին երկրի բարձրագույն պաշտոնները: Ջիվանը՝ որպես ավագ, նշանակվեց պայլ, այնուհետև գունդստաբլ, իսկ կրտսերը՝ Բոհեմունդը, ստացավ Օշին Կոռիկոսցու կալվածքները՝ Կոռիկոսի կոմսի տիտղոսի հետ միասին:

Լուզինյան եղբայրները, վերադառնալով Կիլիկիա, խնամիական կապերով առավել սերտ կապեր հաստատեցին երկրի վերնախավի հետ: Մասնավորապես Բոհեմունդն ամուսնացավ Բաղդուին Նղրեցի մարաջախտի դստեր՝ Էփեմիայի հետ: Իր հերթին ավագը՝ Ջիվանը, ամուսնացավ վրաց թագավորի դստեր՝ Սուլթանի հետ: 1331 թ. Լևոնն ինքը ամուսնացավ Սիցիլիայի արքա Ֆրեդերիկո II-ի դստեր՝ Կոնստանսի հետ:[124] Վերջինս եղել էր Կիպրոսի արքա Հենրիի կինը, և այրիանալով՝ վերադարձել էր Սիցիլիա: Այս քայլով Լևոնը ձգտում էր էլ ավելի ամուր կապերով կապվել եվրոպական արքունիքների հետ՝ փորձելով դրանով գտնել հենարան, երկրի ներքին և արտաքին կայունության համար: Սակայն, միայն դրանով չէր պայմանավորված Լևոնի ամուսնությունը: Հ. Դարդելը նշում է, որ Կիպրոսի Հենրի արքայի մահից հետո. «…թողեալ էր նմա (այսինքն Կոստանցիայի) ի տուայր կալուածս հողոյ, որ բերէին ամի եօթանասուն հազար արծաթոյ դահեկանս Կիպրոսի: Եւ վասն տուայրին այնորիկ խնդրեաց զնա Լեւոն ի կնութիւն…»:[125] Դա փոքր գումար չէր, մանավանդ, որ պետության ֆինանսական վիճակն անընդմեջ կրկնվող արշավանքների հետևանքով խիստ ծանրացել էր: Հետևաբար, Լևոնի հաշվենկատ ամուսնության մասին Հ. Դարդելի վերը նշված կարծիքը, ընդունելի է:

Կոստանդին սպարապետի սպանությունից մինչև Ջիվան Լուզինյանի սպարապետ նշանակվելը, այդ պաշտոնում հիշատակվում է Սմբատի որդի Լևոնը. «…ի թագաւորութեան Լեւոնի, եւ յասպարապետութեանն որդւոյ Սմբատա՝ Լեւոնի սրբասիրի և բարեպաշտի»:[126] Հիշյալ վկայությունը գրված է 1330 թ. մի Մաշտոցի հիշատակարանում: Ցավոք, այլ սկզբնաղբյուրներում Լևոն սպարապետի մասին որևէ հիշատակության չենք հանդիպում: Ավելին, նրա անունը բացակայում է նաև Սմբատ Գունդստաբլի Տարեգրքի Շարունակողի Հայոց սպարապետների ցանկում:[127] Սակայն ձեռագրի հիշատակարանում սպարապետի անձի հիշատակումը, որքան էլ որ արտառոց լինի, այնուամենայնիվ, կարծում ենք, որ այն ստույգ է: Միանգամայն հավանական է, որ մեկ կամ երկու տարի, մինչև Լուզինյան եղբայրների վերադարձը Կիլիկիա, սպարապետության պաշտոնը ստանձնած անձը ուղղակի հիշատակված չլինի Սմբատ Գունդստաբլի սպարապետների դասաշարում, մանավանդ, որ այն նաև թերի է:

Դեռևս Լևոն I-ի կառավարման շրջանից, ավելի քան հարյուր տարի, սպարապետության գործակալությունը գտնվում էր Հեթում-

[123] Ս. Բոռնազյան, Կիլիկյան Հայկական թագավորության գոյամարտը XIV դարում և անկումը, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 774:

[124] 1329–1330 թթ. երկու անգամ Սիցիլիա է մեկնում Հեթում Նղրեցին Լևոն թագավորի համար Սիցիլիայի Ֆրեդերիկո թագավորի դստրերից մեկի ձեռքը խնդրելու համար (տե՛ս Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 193):

[125] Դարդել, գլ ԻԴ, էջ 30:

[126] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 224:

[127] Սմբատ, Տարեգիրք էջ 137, Langlois, La tresor des chartes, p. 44, Ս. Բոռնազյան, Սոցիալ տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում, էջ 65:

յան ընտանիքի ձեռքում: Կոստանդին Խոռիկոսցուց հետո 1329 թ. ընթացքում այդ պաշտոնը վարել է վերոհիշյալ Լևոնը, որը, հաշվի առնելով ընդունված ավանդույթները, պետք է, որ նույն` Հեթումյանների արքայատոհմից սերած լիներ: Լևոնի անձը ճշտելու համար փաստեր չկան: Մնում է կարծել, որ նա Սմբատ անունով մեզ հայտնի երկու Հեթումյաններից կա՛մ Սմբատ թագավորի, կա՛մ էլ Սմբատ Գունդստաբլի թոռ Սմբատի որդին է եղել: Վերջին վարկածն առավել հավանական է, հաշվի առնելով, որ նշված անձի պապը և հայրը զբաղեցրել են սպարապետության պաշտոնը: Քանի որ Լևոն սպարապետի անվանն այլևս չենք հանդիպում, մնում է ենթադրել, որ նա պաշտոնավարել է մեկ-երկու տարի և պաշտոնանկ է արվել կամ սպանվել է մամլուքյան 1330 թ. արշավանքի ժամանակ:[128]

Օշինի սպանության հաջորդ տարում մամլուքները խախտում են 1323 թ. ի վեր պահպանվող խաղաղությունը:[129] Հակառակորդի զորքերի հարվածն, ինչպես և 1320 թթ., ուղղված էր Այասի դեմ: Հայկական արքունիքին հաջողվել էր շատ կարճ ժամանակամիջոցում վերականգնել Այասը: Քաղաքի վերականգնումից բացի, հաշվի առնելով մամլուքների արշավանքն Այասի վրա, պետք է ենթադրել, որ այն վերականգնել էր նաև իր առաջնակարգ դերը լևանտյան առևտրում: Սակայն, այս անգամ մամլուքներն Այասի մոտ լուրջ պարտություն են կրում` տալով ինկայական կորուստներ:[130] Սա հայկական զորքերի կողմից ձեռք բերված մեծ հաղթանակ էր, որը, սակայն, չփոխեց ո՛չ մամլուքյան սուլթանության մտադրությունը, և ո՛չ էլ փրկեց երկիրը հետագա ավերածություններից: Մամլուքյան զորքերի արշավանքը կրկնվեց հաջորդ` 1331

[128] Կարծում ենք, որ այս Լևոնը կարող էր լինել 1367 թ. հիշատակված Բագուն Բագունենց գունդստաբլի հայրը, որի անունը նույնպես Լևոն էր:
[129] Հ. Բարթիկյան, Նոր նյութեր Կիլիկիայի Հայկական պետության եվ Բյուզանդիայի փոխհարաբերությունների մասին, նշվ. աշխ., h. I, էջ 34:
[130] Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 558:



թ: Այս անգամ նրանց հաջողվեց տիրել նաև Այասին, որտեղից նրանք հեռացան` ավերելով և կողոպտելով այն: Դա ևս մեկ անգամ վկայում է, որ մամլուքներին անհանգստացնում էր ծովային առևտրի մեջ Ալեքսանդրիայի հետ մրցակցությունում Այասի աճող դերը:

Հենց մամլուքյան 1330–1331 թթ. արշավանքներն էլ արմատապես փոխեցին Լևոն IV-ի արտաքին քաղաքականությունը: Նա վերակառուցեց այն` մամլուքյան սուլթանության դեմ կազմակերպվելիք պաշտպանության հիմնադրույթի վրա:

Իլխանությունն, այդ ժամանակ, արդեն ոչնչով չէր կարող օգնել` դեռևս ձևականորեն իրեն դաշնակից համարվող, Հայոց թագավորությանը: Հայ-մոնղոլական դաշնակցության վերջին հույսերը մարեցին Աբու-Սայիդ իլխանի մահից հետո (1335 թ.), երբ Իլխանությունը մի քանի տարվա ընթացքում փաստացիորեն դադարեց գոյություն ունենալուց:[131]

Լևոնի շփումները պապական և, ընդհանրապես, եվրոպական արքունիքների հետ, սկսվել էին դեռևս 1320 թթ., սակայն, 1330–1331 թթ. մամլուքյան արշավանքները նրան ստիպեցին զինական և դրամական օգնության ակնկալիքով է՛լ ավելի ակտիվացնել դրանք: Մինչ այդ, դեռևս 1327 թ., Օշին պայլն ու Լևոնը, օգնության խնդրանքներով, երկու պատվիրակություն էին ուղարկել Ավինյոն:

Եվրոպական արքունիքներում այդ տարիներին խաչակրաց արշավանքի գաղափարը շարունակում էր գերիշխող մնալ: Փարիզում 1330 թ. հանդիպում են Ֆրանսիայի, Բոհեմիայի և Նավարրաի թագավորները, Բուրգունդիայի և Բրաբանտի դքսերը, որտեղ որոշվում է համատեղ արշավանք կազմակերպել դեպի Սուրբ Երկիր:[132] Հաջորդ` 1331 թ. Ֆրանսիայի արքա Ֆիլիպ VI Վալուան (1328–1350 թթ.) սկսում է արշավանքի նախապատրաստական աշխա-

[131] Լ. Բաբայան, Հայաստանի սոցիալ–տնտեսական և քաղաքական պատմությունը 13–14-րդ դարերում, Երևան, 1964, էջ 342:
[132] Histoire des croisades, t. V, p. 235.

տանքները:[133] Նույն՝ 1331 թ. մամլուքյան արշավանքի ժամանակ, Լևոնը Եվրոպա է ուղարկում հաջորդ պատվիրակությունը, որը ղեկավարում էր Մամեստիայի արքեպիսկոպոս Ստեփանոսը: Պատվիրակությունը սկզբում այցելում է Ավինյոն, որտեղ պապից ստանալով նամակներ՝ ուղղված Ֆրանսիայի արքա Ֆիլիպ VI Վալուային, ուղևորվում է Փարիզ:

Պետք է նշել, որ XIV դարի 30-ական թթ. սկզբին խաչակրաց արշավանք կազմակերպելու հնարավորությունները բավական իրական էին թվում: Ե՛վ Հովհաննես XXII-ը, որը պապական աթոռին բազմած ամենաեռանդուն հովվապետերից մեկն էր, և՛ Ֆիլիպ VI-ը լրջորեն նախապատրաստվում էին խաչակրաց արշավանքին: Այս անգամ Լևոն IV-ի պատվիրակները ձեռնունայն չեն վերադառնում. Ֆիլիպ VI-ը Լևոնին է տրամադրում տասը հազար ֆլորին: Արքան տրամադրում է նաև հազար ֆլորին՝ մամլուքների ավերածություններից տուժած ամրությունները վերականգնելու համար: Բացի այդ, Ֆրանսիայի թագավորը Լևոնին՝ «իր եղբորը», ուղղված նամակում հավաստում է իր հաստատակամությունը, որ «ուղարկելով հազար ֆլորին գումար, նպատակ ունի օգնել հայերին՝ վերականգնելու նրանց ամրությունները», «քանզի Ավետյաց երկիր արշավելու համար Կիլիկիան ամենահարմար հանգրվանն է»:[134] Պատվիրակները վերադարձին ևս մեկ անգամ տեսակցում են Հովհաննես XXII-ին, որը նորից հավաստում է՝ հայերին օգնելու հարցում պապական աթոռի վճռականությունը: Դեսպաններին ճանապարհելիս պապն իր կողմից 30 հազար ոսկի է տրամադրում նրանց: Անտարբեր չէր նաև Անգլիայի թագավոր Էդուարդ III-ը (1327–1377 թթ.), որը, նույն 1332 թ. Ֆրանսիայի արքայի հետ համատեղ, խաչակրաց արշավանք կազմակերպելու հանգամանքների ճշտման համար դեսպանություն է ուղարկում Փարիզ:[135] Նույն-

[133] Bibliotheque des croisades, t. II, Istoria di Matteo Villani, p. 624.

[134] V. Langlois, Essai historique, p. 34, Tournebize, p. 652.

[135] Bibliotheque des croisades, t. II, Chronique de Jean XXI, p. 883.



իսկ Շոտլանդիայի թագավոր Ուիլյամ (Գիյոմ) Դուգլասը հանդես եկավ արշավանք կազմակերպելու ծրագրով:[136]

Բացի կաթոլիկ եկեղեցու առաջնորդի քաղաքական սթափ հաշվարկներից, որը փորձում էր ցանկացած գնով նեցուկ լինել Արևելյան Միջերկրածովյան ավազանում վերջին մայրցամաքային քրիստոնյա պետությանը կարևոր դեր է խաղացել նաև կիլիկյան արքունիքի և հայ հոգևոր վերնախավի քաղաքականությունը: Անշուշտ, և՛ Լևոնը, և՛ Հակոբ Բ Տարսոնացի կաթողիկոսը (1327–1341 թթ., 1355–1359 թթ.), որոնք մեր պատմության մեջ հիշատակվում են որպես միարարներ, ունեին իրենց ուրույն քաղաքական ծրագրերը: Նրանք կարևորում էին պետության անվտանգությունը և դրան հասնելու համար պատրաստ էին նույնիսկ դավանաբանական զիջումների:

1332 թ. պապը դիմում է Ֆրանսիայի, Նավարրայի, Արագոնի, Չեխիայի և այլ պետությունների արքաներին՝ կոչ անելով օգնության գնալ Հայոց թագավորին: Այս չորս պետությունների առաջնորդները նույնիսկ համաձայնության են գալիս միմյանց հետ: Պապական նվիրակները ևս հրաման են ստանում քարոզելու խաչակրության գաղափարները եվրոպական երկրներում: Եվ իրոք, Արևմտյան Եվրոպայում ակտիվորեն ծավալվում է նոր խաչակրության գաղափարը: Թվում էր, որ նոր արշավանքի իրականացումը մոտ ապագայի խնդիր է:

Ինչպես արդեն վերը նշվեց, պետության ֆինանսական վիճակը նույնպես ծանր էր: Այսպես, 1332 թ. Հովհաննես XXII-ը դիմում է հիվանդախնամներին՝ կոչ անելով՝ գնել Կիլիկիայի արևմուտքում գտնվող Սիկ և Անտիոքեակ (Անտիոք Կրագյան) բերդաքաղաքները:[137] Պետք է նշել, որ այդ բերդաքաղաքների գնման առաջարկով առաջինը դիմել էր Հալեպի (Բերիայի) ամիրը, որին, սակայն, Լևո-

[136] Նույն տեղում, Gestes des Archeveques de Treves, p. 340.

[137] Tournebize, p. 652.

նը մերժել էր:[138]

Ղ. Ալիշանն այս փաստը բացատրում է դրանց Լևոնի բուն տիրույթներից կտրված լինելու հանգամանքով, քանի որ 1330–1331 թթ. արշավանքի ժամանակ Կալիկադնոսի հովիտը նվաճվել էր թուրքմենների կողմից: Այդ բերդերը, ի վերջո, գրավվեցին Կիպրոսի թագավոր Հուգո IV-ի (1324–1359 թթ.) կողմից, քանզի դրանք շատ հարմար ռազմական հենակետեր էին՝ կիլիկյան ծովափում հաստատվելու կիպրական թագավորի ծրագրի համար:[139] Այսպիսով, Կիլիկիայի Հայոց թագավորությունը Կալիկադնոս գետից արևմուտք ընկած տարածքները վերջնականապես կորցրեց 1330–1335 թթ. միջակայքում:

Կիլիկիայում իրենց քաղաքական նպատակներն իրագործելու համար հայկական արքունիքը և Հակոբ կաթողիկոսը դավանաբանական հարցերում զիջումներ կատարեցին: Ահա այդ ժամանակներից է ծավալվում այսպես կոչված աղթարմայությունը, որն առավելապես տարածում գտավ Կիլիկիայում:

Մ. Օրմանյանը տալիս է աղթարմայականների նկարագիրը, որոնք, ըստ էության, կաթոլիկ չէին (քանզի նրանցից վերցրել էին ընդամենը արարողակարգային մի քանի սովորույթներ), սակայն, մասամբ շեղված էին Հայ Առաքելական եկեղեցու կանոններից. «Այդ շփոթ եւ կէսառկէս կացութեան տրուեցաւ Աղթարմայ անունը, որ իսկապէս հռոմէադաւան ու կաթոլիկ ըլլալէ տարբեր իմաստ մը ունի, եւ լոկ հակամէտ եւ ջանացող ըլլալ կը նշանակէ, որ է տիրապէս անորոշ կացութիւն մը... Անոնք տիրապէս հռոմէադաւան չեղան... որովհետեւ Հայ եկեղեցիէն չելան, եւ ոչ ալ զայն հիմնապէս եւ ամբողջապէս այլայլել յաջողեցան... հայազգի եւ հայադաւան ըլլալէ չի դադրէցան, Հռոմէադաւան Հայեր չեղան ու չկոչուեցան, այլ իրենց անորոշ կացութեան յատկանիշն եղաւ Աղթարմայ կոչու-

138 Մ. Չամչեանց, էջ 333:
139 Hill, p. 298.



մը»:[140]
Այս պարագան ու դրան հաջորդած դավանաբանական երկ-
պառակությունները՝ բուն Հայաստանի առաքելական եկեղեցու և
Կիլիկիայում գտնվող Հայոց կաթողիկոսության կամ աղթարմայա-
կանների միջև, փոխադարձ մեղադրանքները և, դրանց գումարած՝
նաև միարար, կաթոլիկ կրոնավորների գործունեությունն ինչպես
Կիլիկիայում, այնպես էլ՝ փոքրասիական հայկական բնակավայրե-
րում, բացասական ազդեցություն են թողնում՝ առանց այդ էլ ար-
տաքին ուժերի կողմից ջլատված, ավատատիրական գժտություն-
ներից թուլացած Հայոց պետության վրա: Սակայն առավել վտան-
գավորը կաթոլիկ քարոզիչներն էին: Պետք է նշել, որ նրանց քայ-
քայիչ գործունեությունը հասկանում էին նաև այսպես կոչված
«աղթարմայության ներկայացուցիչները»՝ Լևոն IV-ը և կաթողիկոս
Հակոբ Անավարզեցին: 1330 թթ. առաջին կեսին, երբ Կիլիկիայում
մեծ չափերով ակտիվանում է կաթոլիկ քարոզիչների գործունեութ-
յունը, այստեղ հայտնվում են երկու հայ կաթոլիկ քարոզիչներ՝
Ներսես Պաղոնը՝ (նույն ինքը Պալիանենցը) Ուրմիայի եպիսկոպո-
սը և Սիմեոն բեկը՝ Կարինի եպիսկոպոսը: Նրանք քարոզում էին.
«Թէ հարկ է կրկին մկրտել եւ դրոշմել զամ[են] հայս լատինական
ծիսիւք, և վերստին ձեռնադրել զքահանայս նոցա և տալ պատա-
րագել լատին բարբառով...»:[141]
Նրանք բավականին մեծ հաջողություններ ունեցան ոչ միայն
հասարակ բնակչության, այլև հայ հոգևորականության շրջանում:
Հատկանշական է, որ այդ քարոզիչները գործում էին ծածուկ, որից
երևում է, որ նրանց գործունեությունն առնվազն չէր ոգեշնչվում իշ-
խանությունների կողմից: Եվ իրոք, նրանց ակտիվությունը լուրջ
անհանգստություն պատճառեց հայ աշխարհիկ և հոգևոր վերնա-
խավի մոտ:
«Զայսպիսի անկարգութիւն լուեալ եւ տեսեալ Յակոբ կաթողի-

140 Մ. Օրմանեան, սյուն 1850:
141 Մ. Չամչեանց, էջ 330:

կոս եւ Լեւոն արքայ, ոչ եւս կարացին իւանդուրժել. այլ՝ թագաւորական իշխանութեամբ արձակէալ սպասաւորս այսր եւ անդր, կալան զբազումս ի խռովարար անձանց անցի եւ եդին յարգելանս բանտի, եւ զայլս աքսորեցին, եւ հազիւ ուրեմն այսպիսի բռնութեամբ կարացին զիջուցանել զաղմուկ նոցա»։[142] Սակայն քարոզիչների խառնակչությունը դրանով չավարտվեց։ Հակոբ կաթողիկոսը նրանց իր մոտ հրավիրելով, փորձում է համոզել՝ վերամկրտվել հայկական ձևով։ Հրաժարվելուց հետո արքունիքը երկու եպիսկոպոսներին աքսորում է Կիլիկիայից։ Սակայն Ներսեսը Կիլիկիայից չի հեռանում, և անցնելով Կապանի գավառ՝ Կանչի բերդ, այստեղ նա սկսում է ծավալել ակտիվ քարոզչություն, ավելին, որոշ խառնակչություն է տարածում տեղի հայ հոգևորականության մեջ։ Ի վերջո Հակոբ կաթողիկոսին հաջողվում է Ներսեսին հեռացնել տալ նաև այստեղից և ապա նամակով դիմում է Հռոմի պապին՝ խնդրելով՝ զսպել միաբար քարոզիչներին։

Այս փաստերից, սակայն, չի կարելի ենթադրել, թե արքունիքը հակակաթոլիկ քաղաքականություն էր վարում։ Կարելի է դրան հակառակ փաստեր բերել։ Այսպես՝ Օշին պայլի սպանությունից հետո Լևոնն իր հարգանքն է ընդգծում հորաքրոջ՝ միարարների «նահատակ» առաջնորդի՝ Զաբելի նկատմամբ՝ նրան վերաթաղելով Դրազարկի արքայական դամբարանում։ Նույնիսկ ժամանակակիցներից ոմանք Հակոբ կաթողիկոսին ընկալում էին որպես Հռոմին ենթակա գործիչ. Հակոբ Քռնեցին այսպես է նկարագրում կաթողիկոսին. «Եւ ի կաթողիկոսութեան հայոց Տեառն Յակոբա. որ էր յոյժ հնազանդ եկեղեցոյն Հռոմա և հրամանակատար»։[143] Սխալ է Հակոբ Անավարզեցուն միանշանակ բնորոշել մեկ որպես միարար-

[142] Նույն տեղում, էջ 331։

[143] Marc Antoine van den Oudenrijn. Notes sur quelques ouvrages armèniens de provenance dominicaine, Բազմավէպ, 1951, թիվ 3–4, էջ 63։ Իր հերթին Ազիզ Աթիյան գտնում է, որ 1294–1441 թթ. պաշտոնավարած բոլոր 15 կաթողիկոսներն էլ միարարական ուղղության ներկայացուցիչներ են եղել, որը մեր կարծիքով խիստ չափազանցված է (տե՛ս Atiya Aziz, A History of Eastern Christianity, London, 1968, p. 334)։



ների պարագլուխ, մեկ այսպես կոչված «ազգայնական» խմբակցության ղեկավար։[144] Այդ ամենը զուտ դիվանագիտություն էր, որտեղ, ուզեր, թե չուզեր, պետք է մասնակցություն ունենար նաև Հայոց եկեղեցին։ Բացի այդ, 1330-ական թթ. առաջին կեսն իրավամբ կարելի է համարել հայ-կաթոլիկ շփումների ակտիվ շրջան։

Անշուշտ, այդ համատեքստում պետք է դիտել 1333 թ. հայ-վենետիկյան առևտրային պայմանագիրը, որով ոչ միայն վերահաստատվեցին վենետիկցի առևտրականների հետ նախկինում կնքված համաձայնագրերը, այլև տրվեցին նոր արտոնություններ։[145]

Ի մի բերելով եղած տվյալները՝ կարծում ենք, որ Լևոն IV-ի արտաքին քաղաքականությունը կրում էր փոխլրացնող բնույթ. այն ուղղված էր եվրոպական երկրներից օժանդակության ստացմանը, սակայն, միևնույն ժամանակ, հնարավորի սահմաններում փորձ էր արվում երկրի հոգևոր կյանքը զերծ պահել կաթոլիկ եկեղեցու անմիջական միջամտությունից։ Իսկ Եվրոպա-Արևելք փոխհարաբերություններում հավասարակշռությունը պահպանվում էր նաև մամլուքյան սուլթանությանը և Իլխանությանը տված Լևոնի հնազանդության հավաստիացումներով։

1335 թ. դրությամբ Մերձավոր Արևելքում խաչակրաց արշավանքի մասին լուրերը բավականին տարածված էին։ Չնայած որ արշավանքի հոգևոր հայր Հովհաննես XXII-ը մահացավ 1334 թ. դեկտեմբերին, այնուամենայնիվ, նախապատրաստական աշխատանքները շարունակվում էին ֆրանսիական արքունիքի ղեկավարությամբ։[146] Ֆիլիպ VI-ին օգնելու նպատակով նախապատրաստ-

[144] Vahan M. Kurkjian, A History of Armenia (այսուհետև՝ V. Kurkjian) Armenian General benevolent union of America, New York, 1959, p. 256.

[145] Հարկ է նշել, որ մինչ այդ՝ մասնավորապես 1330-ական թթ. սկզբներին Կիլիկիայի և Վենետիկի հարաբերությունները այնքան էլ հարթ չէին (տե՛ս Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 121)։

[146] K. Setton, p. 50–54.

վում էր նաև բյուզանդական արքունիքը:[147] Ֆիլիպին դրամով, զինվորներով, և նավատորմով օգնություն են խոստանում Արագոնի, Մայորկայի, Հունգարիայի թագավորները և իտալական հանրապետությունները:[148] Անգլիայի արքան նույնպես, համատեղ արշավանքի ծրագիր մշակելու համար 1334 և 1336 թթ. դեսպանություններ է ուղարկում Փարիզ:[149] Արևելքում տարածված լուրերի մասին է վկայում Երուսաղեմում 1335 թ. ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարան, որտեղ գրիչն արձանագրում է. «Բայց լսեցաք համբաւ բարի, թէ Ֆռանգ ազգն շարժի վասն տեղացս տէրունի՝ Երուսաղէմայ սուրբ քաղաքի...»:[150] Բնական է, որ այդ լուրերը տարածվում էին նաև Եգիպտոսում, Ասորիքի և Փոքր Ասիայի մահմեդական պետություններում, ուստի՝ ամենևին էլ անսպասելի չէր նախահարձակ լինելու նրանց ձգտումը, իսկ նախահարձակ նրանք կարող էին լինել Արևելյան Միջերկրածովյան ավազանի միակ ցամաքային քրիստոնյա պետության՝ Կիլիկիայի Հայոց թագավորության վրա: Նույն գրիչը 1335 թ. դիմաց նշում է նաև, որ «զխատի մի տաճկնին այասցիք կոտրել էն»:[151] Մի փոքր անց նկարագրելով Երուսաղեմում տիրող հայերի և ընդհանրապես քրիստոնյաների նկատմամբ ատելության մթնոլորտը, գրում է. «Կու հաչէն՝ թէ ձեր այասցիք զխատին (դատավոր – Դ.Թ.) եւ զդանշմնէրն սպանել են, ամմէնք զքէն ի ձեզ պիտի հանէք»:[152] Ղ. Ալիշանը, մեջբերելով նույն հեղինակի խոսքերը, գրում է. «յամին 1335 կոտորէցին (այասցիները) զմշակս եւ զատրուկս այլադէնս որ 'ի սահմանս իւրեանց»:[153] Փաստորեն այասցիները կոտորել էին մահմեդական դատարանի դատավորներին և դատական համակարգի մյուս աշխատողներին,

[147] Նույն տեղում, էջ 53, Histoire des croisades, t. V, p. 235–236.
[148] Նույն տեղում, էջ 237:
[149] Bibliotheque des croisades, t. II, Chronique de Jean XXI, p. 883.
[150] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 273:
[151] Նույն տեղում, էջ 274:
[152] Նույն տեղում, էջ 275 :
[153] Սիսուան, էջ 392: «Հայ-Վենետում» Ղ. Ալիշանը նշում է, որ հայերը կոտորեցին



իսկ, ինչպես հայտնի է, յուրաքանչյուր համայնք Այասում ուներ իր դատարանը: Նույն գրիչը հիշատակարանի սկզբում նշում է. «յանաւրէն ազգն Իսմայէլի յարեան ի վերա երկիրս Կիլիկէի, եւ զամէնն ի սուր մաշեցին սռւսերի, եւ զայլն ի Մսըր վարեցին գերի, եւ զկէսն՝ իյերկիրն Խարամանի»:[154] Այստեղից Ղ. Ալիշանը ենթադրում է, որ Այասի բնակիչներն այդ արշավանքների պատճառով են զայրացել և կոտորել մահմեդականներին: Յու. Բարսեղովը կարծում է, որ մահմեդականների կոտորածին նախորդել են մամլուքների կողմից հովանավորվող ծովահենների սաստկացող ավարառությունները, որից էլ բարկացած այասցիները կոտորել են քաղաքի մահմեդականներին:[155]

Դժվար է որոշակի որևէ կարծիք հայտնել այասցիների նման գործելակերպի մասին: Ինչ վերաբերվում է կարամանցիների և մամլուքների (առավել ստույգ՝ Հալեպի ամիրության) 1335 թ. կատարած արշավանքին, ապա դա հաճախակի կրկնվող ավարառուական ասպատակություններից մեկն էր, որը ուղղակիորեն կապված էր խաչակրաց արշավանքի մասին տարածվող լուրերի հետ:

Ինչևէ, անկախ Այասում տեղի ունեցած դեպքերի իրական պատճառներից, դա մամլուքյան սուլթանության համար արշավանք կազմակերպելու հարմար առիթ դարձավ:

Մամլուքների արշավանքը տեղի ունեցավ 1335 թ. մայիսին: Զորքերն առաջնորդում էր Հալեպի ամիր Ալթուն-Բուղան: Ինչպես երևում է «Սիսուանում» մեջ բերված ձեռագրից և Հեթում Նղրեցու

բոլոր այլազգիներին (տե՛ս Հայ-Վենետ, էջ124): Է. Աշթորը հիմնվելով արաբական մի շարք աղբյուրների վրա նշում է, որ այասցիները վրեժ լուծեցին մամլուքներից, կրակի տալով մոտ երկու հազար մահմեդական վաճառականների, որոնք գտնվում էին Այասում (տե՛ս E. Ashtor, Levant trade, in the Later Midlle ages, New Jersey, 1983, p. 56).
[154] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 273:
[155] Ю.Г. Барсегов, Борьба Киликийской Армении против пиратства, Պատմաբանասիրական հանդես, 1973, թիվ 3, էջ 84:

ժամանակագրությունից,[156] Հալեպի ամիրն անցնում է գրեթե ամբողջ Դաշտային Կիլիկիայով, գրավում և ավերում է Ադանան: Այստեղից կարելի է ենթադրել, որ նրանք ճանապարհին, եթե ոչ գրավում, ապա ավերածությունների են ենթարկում Ջահանի գետահովտի բնակավայրերը:

Առավել կործանարար էր հաջորդ տարի կազմակերպված արշավանքը: Այս անգամ մամլուքները, ի տարբերություն նախորդ արշավանքի, որոշել էին տնտեսապես ամայացնել և քայքայել թագավորության կենսատու երակները՝ Սեյհան և Ջահան գետերի գետահովիտները: Հալեպի ամիրյության զորքերը հասնում են մինչև Տարսոն, որը, սակայն, նրանց չի հաջողվում գրավել: Բարձրանալով Սեյհանի հովտով՝ նրանք մտնում են Լեռնային Կիլիկիա, որտեղ էլ գրավում են Մոլևոն բերդը: Միևնույն ժամանակ հյուսիսարևմուտքից տեղի է ունենում նաև կարամանցիների ներխուժումը, որոնք ավերածություններ են կատարում Կիլիկիայի արևմտյան շրջաններում՝ Կյուդնոսի գետահովտում: Բացառված չէ, որ Մոլևոնը նվաճվում է Հալեպի ամիրության և կարամանցիների համատեղ ուժերով:

Այս արշավանքը, սակայն, հաջորդ խոշոր արշավանքի սկիզբն էր միայն: Դա հասկանում էր նաև հայկական արքունիքը, ուստի նույն 1335 թ. Եվրոպա ուղարկվեցին երկու պատվիրակություններ, որոնցից մեկը ղեկավարում էր Կոռիկոսի կոմս Բոհեմունդ Լուզինյանը: Երկու դեսպանություններն էլ Եվրոպա են մեկնում 1335 թ. աշնանը՝ մամլուքյան արշավանքից հետո (ըստ երևույթին մամլուքները իրենց զորքերը պետք է որ հետ քաշած լինեին ձմեռելու համար): Բոհեմունդն իր հետ Փարիզ է տանում Բենեդիկտոս XII պապի (1334–1342 թթ.) Ֆիլիպ VI-ին հղած նամակները: Արդեն հաջորդ՝ 1336 թ. մարտին Ֆիլիպը խոստանում է դաշնակիցների հետ նույն թվականի օգոստոսին սկսել խաչակրաց արշավանքը: Երկ-

[156] Սիսուան, էջ 142: Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 193:



բորդ դեսպանությունը ուղևորվում է Լոնդոն, ուր 1335 թ. դեկտեմբերին ընդունվում է Անգլիայի թագավոր Էդուարդ III-ի կողմից: Անգլիայի օգնությունը սահմանափակվում է միայն Հայոց թագավորի դեսպանին տրված դրամական օժանդակությամբ:

Լևոն IV-ի արքունիքը սոսկ եվրոպական պետությունների հետ չէ, որ փորձում է բանակցել անելանելի ռազմաքաղաքական իրավիճակից ելք գտնելու համար: 1335 թ. աշնանը Լևոնը, Մխիթար Գռներցի եպիսկոպոսի գլխավորությամբ, պատվիրակություն է ուղարկում սուլթան Մելիք-Նասրի մոտ,[157] իսկ Պետրոս Խպաէնցի ղեկավարությամբ՝ Հալեպի ամիր Ալթուն Բուղայի մոտ: Ղ. Ալիշանը հաղորդում է միայն Ալթուն Բուղայի ներկայացրած պահանջը, այն է՝ վճարել վեց հարյուր հազար դրամի չափով հարկ: Ինչ վերաբերվում է սուլթանի մոտ ուղարկված պատվիրակությանը, ապա, ինչպես հաղորդում է 1335 թ. աշնանը Եգիպտոսում գտնվող Ջակոբո դե Վերոնը, նրանց չեն թողնում Գիզայից այն կողմ անցնել «Սուլթանը մերժել է ընդունել պատվիրակներին, քանի որ խաչակրաց արշավանքի լուր է ստանում: Զայրացած սուլթանը մերժում է Հայոց թագավորի խաղաղության առաջարկը և սկսում իր ամբողջ ուժերը կենտրոնացնել Հայաստանը ոչնչացնելու համար»:[158] Մերժումից հետո էլ Մելիք Նասըրը սկսում է նախապատրաստվել հաջորդ տարի Կիլիկիա արշավելուն. «Ով եղբարք, ի չար խապընոյս, որ կու ասեն, թէ սուլտնայ տղան բազում զաւրաւք ի վերայ Սսո կու երթայ…»:[159]

[157] Պատվիրակության մեջ է եղել նաև Հեթում Նղրեցին, որի մասին վերջինս նշում է իր թողած ժամանակագրությունում (տե՛ս Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 194):

[158] Massacres et deportations d'Arméniens au moyen-â ge d'après le Liber Peregrinationis de Jacobo de Verone, 1335 (texte latin et version Martiniano Pelligrino Roncaglia), Հայկազեան Հայագիտական Հանդէս, Պէյրութ 1998, հ. ԺԸ, էջ 227–232:

[159] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 275: Այս արշավանքների կապակցությամբ Կ. Մութաֆյանը գտնում է, որ քանզի պայմանագրի առկայությունը կաշկանդում էր սուլթանին, ապա նման գործողությունների համար նա օգտագործում էր իր

1336 թ. երկար սպասված խաչակրաց արշավանքի առումով յուրօրինակ հուսախաբություն ապրեց հայկական դիվանագիտությունը... այն տեղի չունեցավ:

Իրականում Ֆիլիպ VI-ը լրջորեն նախապատրաստվել էր դրան, հավաքվել էին նյութական զգալի միջոցներ և մարդկային ուժեր, նավատորմ: Նախատեսված արշավանքից մի քանի ամիս առաջ Ֆիլիպը նախապատրաստական վերջին աշխատանքներին հետևելու համար, այցելեց Ֆրանսիայի հարավ: Սակայն շատ չանցած խիստ լարվեցին առանց այդ էլ անկայուն ֆրանս-անգլիական հարաբերությունները, որն արդեն հաջորդ տարի վերաճեց Հարյուրամյա պատերազմի:[160] Հռոդոսի ասպետներն իրենց հերթին այդ ժամանակ զբաղված էին հունական արքիպելագոսում ընթացող պայքարով,[161] ուստի, նրանք ևս անկարող էին օգնել Լևոն IV-ին: Այսպիսով, խաչակրաց արշավանքի վերջին իրական հնարավորությունն ի չիք դարձավ: Կիլիկիայի Հայոց թագավորությանը մնում էր հուսալ միայն սեփական ուժերի վրա:

Այսպիսի անհուսալի իրավիճակում հայտնված Կիլիկիայի վրա 1336 թ. հունիսին տեղի ունեցավ նոր, մամլուքների առավել կազմակերպված հարձակումը:[162] Դրան, ինչպես տեսանք վերը, Հալեպի ամիրության զորքերից բացի մասնակցում էին նաև եգիպտական մամլուքների զորքերը՝ Մելիք Նասրի որդու հրամանատարությամբ: Դատելով հիշատակագրություններից՝ արշավանքը եղել է անսպասելի. Դրան անպատրաստ է գտնվել ինչպես բանակը, այնպես էլ՝ արքունիքը: Դատելով Վասիլ գրագրի թողած հիշատակարանից՝ Լևոն IV-ը որոշակի երաշխիքներ էր ստացել սուլթանությունից. «...անօրէն Նայիպն Հալպայ Ալթուն Պուղայն, իբրեւ զռափսակ եւ զանձն առաջին, խաբեալ զարքայն Հայոց Լեւոն բազում բանիւք եւ անհոգ ցուցեալ, եւ արքայն անհոգ նստեալ յԱտանայ, եւ աշխարհն ամենայն անհոգ, ամէն մարդ ի յիւր տուն ու յիւր գործն, վստահ ի սուլտանին ամանաթն, եւ ի յայն, որ մեր դեսպաններն մնալովն առ սուլտանին եւ առ անօրէն ամիրայս»:[163] Ըստ հիշատակագրի՝ գաղտնիության պայմաններում է անցել նաև Հալեպի ամիրի զորքերի տեղաշարժը. «Եւ սա (Ալթուն-Բուղան) խաբէութեամբ առեալ զՀալպայ հեծեալն, անուանելով թէ յԵփրատ ի ճանապարհ կու երթամ, ու յիշուից յերկիրս ի ԻՁ մայիսի, ի հիգշաբթի, յաւուր համբարձման Փրկչին»:[164] Շրջանցելով Ճկեր գավառի ամրությունները՝ մամլուքները շուտով հայտնվում են Մամեստիայում, ապա՝ Ադանայում: Ճանապարհին նրանք որևէ դիմադրության չեն հանդիպում, քանզի Սամուէլ Անեցու Շարունակողը գրում է, որ մամլուքներն, անցնելով սահմանը, մեկ օրում հասան Մամեստիա և Ադանա:[165]

Այդչափ սրընթաց երթի պատճառը Ադանայում գտնվող Լևոն թագավորին ձերբակալելու ցանկությունն էր: Մամլուքներին հաջողվում է առանց դիմադրության հանդիպելու հասնել Տարսոն: Թագավորը հազիվհազ կարողանում է խույս տալ գերությունից: Ամենայն հավանականությամբ, միևնույն ժամանակ էլ տեղի է ունենում կարամանցիների արշավանքը: Վերջիններս ինչպես նշում է հիշատակագիրը. «մտեալ էին ընդ երկիրս Կիլիկւց եւ բազում վնաս գործեցին՝ի տեղիս տեղիս»:[166] Մամլուքներին հաջողվեց առանց որևէ լուրջ դիմադրության գրավել ամբողջ Դաշտային Կիլիկիան: Այսպիսի հեշտ հաղթանակ Կիլիկիայում նրանք դեռ չէին

---

ստորականերին (իմա Հալեպի ամիրին), (տե՛ս Կ. Մութաֆյան, նշվ. աշխ., էջ 465): Սակայն, ինչպես տեսանք, արշավանքը պիտի ղեկավարեր սուլթանի որդին և 1337 թ. հաշտությունն էլ, առանց ավելորդ ձևականությունները պահպանելու կնքվեց հենց մամլուքյան Եգիպտոսի հետ:

[160] Histoire des croisades, t. V, p. 247.

[161] K. Setton, p. 293.

[162] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 193:



[163] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 294–295:

[164] Նույն տեղում, էջ 295:

[165] Սամուէլ Անեցի, էջ 159:

[166] Սիսուան, էջ 295:

ունեցել: Այդ ամենից հետո, ինչպես գրում է Սամուէլ Անեցու Շարունակողը մամլուքները «...բազմօք զօրօք` յաւուրս հնձոց` ի տօնի համբարձմանն Քրիստոսի... սփռեցան ընդ քաղաքս և ընդ գիւղս մինչ ի Տարսոն` և գտեալ զամենեսեան յանհոգս` և ի խաղաղ ժամանակի. մինչ զի ի տեղիս տեղիս հարսանիս առնէին և խրախճանային. և յանխնայ կոտորեցին զբազումս սրով, զեկեղեցականս և զաշխարհականս` զայր եւ զկին, և զմանկունս և հրդեհեալ այրեցին զտունս եւ զապարանս` զեկեղեցիս և զարտորայս` և առեալ զառ և զաւար և գերեալ զարս և զկանայս և զորդիս. և զոսկի և զարծաթ երկրիս անթիւ և անհամարս: Նաև զբազմութիւն յոյժ անբան կենդանեաց. ուրախութեամբ հանեալ տարան յաշխարհն իւրեանց»:[167]

Դրսից որևէ օժանդակություն չստանալով (չնայած դեռ չէր ստացվել խաչակրաց արշավանքի չիրականանալու մասին լուրը)` Լևոն IV-ը, որն այս արշավանքի ընթացքում հարկադրված էր տեղից տեղ տեղափոխվելով փրկել իր անձը, փորձում է հաշտության բանակցություններ սկսել:

Պատվիրակությունը Բալդուին Նղրեցի մարաջախտի ղեկավարությամբ ուղևորվում է Եգիպտոս,[168] Մելիք Նասըրի մոտ: Սակայն Հալեպում պատվիրակության անդամները` արքայական դռնապան Սիր Սիրունը, արքունիքի թղթագիր Վասիլը և Բալդուին մարաջախտը ձերբակալվում են: Վերջինս գերության մեջ էլ մահանում է. «Եւ յետ բազում տանջանացն ի զընդանն` է ամսոյն հասեալ վախճան մարաջախտուն»:[169] Զնդանում մահանում է նաև պատվիրակության մյուս անդամը` արքունի դռնապան Սիր Սիրունը: Միայն Վասիլն է, որ այս դեպքերից մեկ տարի անց ազատվում

[167] Սամուէլ Անեցի, էջ 159–16: Եգիպտական արշավանքների մասին տե՛ս նաև ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 283:
[168] Առաջին պատվիրակությունը, որն ուղարկեց Լևոնը, ղեկավարում էր Հեթում Նղրեցի ջամբռլայը, որին, սակայն, Մելիք Նասըը հետ է ուղարկում (տե՛ս Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 194):
[169] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 295:



և վերադառնում է հայրենիք: Անշուշտ, Հալեպի ամիրի այս գործողությունը Կահիրեից ստացած հրահանգի հիման վրա կատարած քայլ էր, որը հետագայում սպասվելիք հաշտության ժամանակ է՛լ ավելի զիջող կդարձներ Լևոն IV-ին:

Այս ամոթալի ձերբակալությունից հետո Ալթուն Բուղան, մեկ անգամ ևս արշավում է Կիլիկիա ու գրավում ճկերում գտնվող Բալդուին Նղրեցու տոհմական ամրոցը` Նղիրը: Ինչպես երևում է, այս անգամ Լևոնը, այնուամենայնիվ, փորձեց որոշ դիմադրություն կազմակերպել. «ու կուզէր սուլտանն, զոր Ջահան կտրէր, ու շատ ջանաց արքայն (Լեւոն IV-ը) վասն փրկութեան երկրի ու չկարաց»:[170]

Ի վերջո, գտնելով որ Հայոց թագավորության զինական ներու-
ծը հաղթահարված է, մամլուքները համաձայնում են խաղաղութ-
յան: Բանակցությունների ընթացքում սուլթանը պահանջում է վեց
հարյուր հազար դրամի չափով հարկ, որը, ճիշտ է պատկառելի
գումար էր, սակայն, Լևոն IV-ը համաձայնվում է վճարել: Հաջորդ
պահանջը լինում է մամլուք սուլթանների XIII դարավերջի և XIV
դարի ա ռաջին քառորդի նվիրական նպատակը` Ջահան գետից
արևելք ընկած բոլոր բերդերի և բնակավայրերի հանձնումը: Այս
պահանջն արդեն բավական ծանր հետևանքներով էր հղի Հայոց
թագավորության համար, ուստի, Լևոնը որոշում է պատվիրակութ-
յուն ուղարկել Եգիպտոս, ինչպես պատվիրակության անդամ
Վասիլն է գրում. «Ուզելով ամանաթ, որ ինքն` արքայն երթայր առ
ինքն (Մելիք Նասըրի մոտ) վասն փրկութեան երկրին»:[171]

Լևոնը ոչ մի կերպ չէր համաձայնվում Ջահանի ձախափընյակը զիջելու մտքի հետ` ըստ երևույթին, հույս ունենալով ժամանակ ձգել մինչև Ֆիլիպ VI-ի խոստացված խաչակրաց արշավանքի իրականացումը[172] Այդ պատճառով էր, որ 1337թ. Հալեպի ամիրը

[170] Նույն տեղում:
[171] Նույն տեղում:
[172] Կարելի է համաձայնվել Հ. Տեր-Ղազարյանի այն մտքի հետ, որ այս ծանր

մեկ անգամ ևս արշավանք կազմակերպեց: Այն նույնպես, ծանր հետևանքներ ունեցավ երկրի համար. «...ու աւերեցին զերկիրս՝ զլեառն ու զդաշտս, ու արին բազում սպանում, ու առին անբաւ ծառայս՝ զլեառն ու զդաշտն ու արիւն բազում սպանումն, ու առին անբաւ ծառայս ու առու, կու կորսնէր երկիր»:[173] Իրավիճակի ծանր կացությունը Լևոնին հարկադրեց համաձայնել մամլուքների պայմաններին:

Հաշտության պայմանագրով սուլթանությանն էր զիջվում Սև լեռներից մինչև Ջահան գետն ընկած ամբողջ տարածքը, որը թագավորության առավել բարեբեր և տնտեսապես զարգացած շրջանն էր:[174] Բացի այդ, երկրի հյուսիս-արևմտյան շրջաններում կարամանցիներին զիջվեցին որոշ տարածքներ:[175]

Այս հաշտությունը թե՛ տնտեսական և թե՛ ռազմաքաղաքական առումներով ծանր հետևանքներ ունեցավ Կիլիկիայի Հայոց պետության հետագա ճակատագրի համար: Նախ՝ պետությունը զրկվեց այնպիսի խոշոր տնտեսական կենտրոնից, ինչպիսին Այասն էր,[176] որտեղով իրականացվում էր արտաքին առևտրի մեծագույն մասը: Այստեղից էր սկիզբ առնում Այաս-Թավրիզ միջազ-

պայմաններով հայկական Կիլիկիան արդեն իսկ մեռնելու էր դատապարտված (տե՛ս Յ. Տեր-Ղազարեան, Հայկական Կիլիկիա, տեղագրութիւն, Անթիլիաս, 1966, էջ 288):

[173] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 295:

[174] Այս հաշտությունը Մ. Ճևահիրճյանը անվանում է «ամոթալի», յուրօրինակ համադրում կատարելով 363 թ. Պարսկա-հռոմեական «Ամոթալի հաշտության» հետ, որը կարծում ենք տեղին չէ (տե՛ս Մ.Հ. Ճևահիրճյան, Կիլիկիայի Ակներ վանքի տեղադրությունը, Պատմա-բանասիրական հանդես, 1982 թիվ 3, էջ 126):

[175] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 193:

[176] Պ. Կարապետյանը և Սեքուլյանը պնդում են, որ Այասում ինչպես Տարսոնում և Սսում դրամահատարան է եղել (տե՛ս Սեքուլեան, Այաս քաղաքին մէջ կոխուած դրամներ. Հանդէս Ամսօրեայ, 1968, թիւ 4–6 սյուն 214, Պ. Կարապետեան, Այաս քաղաքի փողերանոցը եւ Լեւոն Ա արքայի պղինձ դրամները, Հանդէս Ամսօրեայ,



գային նշանակություն ունեցող առևտրական ուղին:[177] Դա ամենամեծ հարվածն էր Հայոց պետականության կենսունակությանը: Թագավորությունը զրկվեց Արևելյան Միջերկրածովյան ավազանի ամենահարմար ծովածոցից՝ Հայկական ծոցից:

Ոչ պակաս կարևոր էին նաև ռազմաքաղաքական կորուստները, որն ունեցավ Կիլիկիան այդ հաշտության հետևանքով: Եթե մինչ այդ Կիլիկիան պաշտպանված էր Սև լեռների բնական պատնեշներով և Ասորվոց ու Ամանոսյան լեռնաշղթաներով, ապա այժմ սահմանն անցնում էր Ջահան գետով: Այլևս բնական պատնեշ գոյություն չուներ նոր ասպատակությունների առաջն առնելու համար: Նոր սահմանագատումը պետության՝ առավել բարեբեր Դաշտային Կիլիկիայի սահմանների մոտ ևս ծանր հեռանկար էր խոստանում, քանզի երկրի դաշտային՝ բարեբեր շրջանների բնակչությունը ոչնչով ապահովագրված չէր մամլուքյան նորանոր հարձակումներից և ասպատակություններից: Փլուզվեց նաև երկրի հարավ-արևելյան սահմանների պաշտպանության համար նախատեսված բերդերի համակարգը: Մամլուքներին անցան Թիլ-Համդունը, Սարվանդիքարը, Հարունիան և այլն: Հեթում Ախտեցու վկայությունից պարզ է դառնում, որ հյուսիսում զիջումներ արվեցին նաև կարամանցիներին: Մասնավորապես, նրանց տրվեցին Դեղնքարը և մի շարք այլ բերդեր:[178] Ցավոք, հնարավոր չէ պարզել հյուսիսում կորսված տարածքների իրական չափը:

Մամլուքների արշավանքը չափազանց ծանր հետևանքներ ունեցավ նաև երկրի մնացյալ շրջանների համար, որոնք, ճիշտ է մնացին թագավորության սահմաններում, սակայն եռամյա պատերազմների ընթացքում այնքան էին ավերվել ու ամայացել, որ,

1988, թիւ 1–12, սյուն 224):

[177] E. Ashtor, p. 56, Я. Манандян, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен, Ереван, 1954, стр. 288.

[178] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 193:

այլևս երբեք, նախկին վիճակին չհասան: Միայն երկրի հյուսիս-արևմտյան լեռնային շրջանները զերծ մնացին ավերածություններից, որոնց թվում էր Սիսը: Այս շրջանները, սակայն, պետության ողնաշարի` Դաշտային Կիլիկիայի ավերվելուց հետո, ունակ չէին իրենց վրա կրելու պետության հետագա տնտեսական և քաղաքական կյանքի ծանրությունը:

«Եւ ի սոյն ամի տագնապ մեծ էր յերկիրս Կիլիկիոյ յահէ անօրինացն, ի սրոյ, ի գերութենէ եւ ի սովոյ, որ չմնաց շէն յետ ի բերդերոյն, զոր մնացին, ոչ մարդութիւն յետ այնոց, որ ի բերդերն ի փախուստ էին ակն ունելոյ ողորմութեան աստուծոյ»:[179] Ահա այսպես է նկարագրում Կիլիկիայում տիրող մթնոլորտը` 1337թ. գերությունից վերադարձած Վասիլ թղթագրի պատվերով գրված ձեռագիր մատյանի գրիչը:

Բացի տարածքային զիջումներից, հաշտության պայմանագրով Լևոն IV-ը պարտավորվում էր վճարել Կիլիկիայից պատերազմի ընթացքում վտարված մահմեդական առևտրականների կրած կորուստները: Սակայն առավել կարևոր էր պայմանագրով նախատեսված մյուս կետը, համաձայն որի, երդվելով Աստվածաշնչի վրա, Լևոն IV-ը պարտավորվում էր` այլևս հարաբերություններ չպահպանել Հռոմի պապի և, որն առավել կարևոր է, ֆրանսիական արքունիքի հետ: Հատկապես Ֆրանսիայի արքայի հիշատակումը պարզ վկայում է, թե Եգիպտոսում որչափ էին անհանգստացած Ֆիլիպի VI-ի` խաչակրաց արշավանք կազմակերպելու լուրերից: Ճիշտ է, այդ արշավանքը չկայացավ, քանզի ինչպես նշվեց նույն 1337 թ. բռնկվեց Հարյուրամյա պատերազմն Անգլիայի և Ֆրանսիայի միջև, սակայն, հայ-մամլուքյան հաշտության պայմանագրի կնքման շրջանում դեռ չէին մարել հնարավոր խաչակրաց արշավանքի վերաբերյալ հույսերը:

Չնայած Լևոն IV-ի երդմանը, հաշտության կնքման հաջորդ

[179] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 296:



տարին, իսկ վերսկսվում են հայ-եվրոպական հարաբերությունները: Արդեն 1338 թ. մայիսին Հռոմի պապ Բենեդիկտոս XII-ը նամակ է հղում Լևոնին, որտեղ հույս է հայտնում եվրոպական օգնության վերաբերյալ: Միևնույն ժամանակ, պապը հայոց թագավորին ազատում է Աստավածաշնչի վրա տված երդումից:

Այդ շրջանում, ընդհուպ մինչև 1342 թ., Լևոնը շարունակում էր հարաբերություններ պահպանել Վենետիկի, Անգլիայի հետ, և դա բնականաբար չէր կարող առիթներ չտալ մամլուքներին` խախտելու հաշտության պայմանները: Մ. Օրմանյանը, չնշելով աղբյուրը, գրում է 1340 թ. նախապատրաստվող մամլուքյան արշավանքի մասին: Այդ արշավանքը հիշատակվում է նաև «Recueil des Historiens des Croisades» ժողովածուի հայկական բաժնում, ուր նշված է, որ Մելիք Նասրը տասնվեց հազարանոց հեծելազորով ներխուժեց Կիլիկիա, ամայացրեց երկիրն ու ավերեց տասնվեց ամրոցներ:[180]

«...1340-ին ատենները ազդարար արշաւանք մը հասաւ Կիլիկիոյ կողմերը, որ սահմանագըլուխին վրայ 16 բերդեր և աւաններ զարկաւ, եւ աւելին ալ սպառնացաւ ընել, (Մելիք Նասըրը – Դ.Թ.) եթէ Կիլիկեցիք ճշդիւ եւ խստիւ չի յարգեն հաշտութեան գլխաւոր պայմանը»:[181] Ահա այս փաստով է պարզաբանում Մ. Օրմանյանը Հակոբ կաթողիկոսի հրաժարումը կաթողիկոսությունից (որն, ամեն դեպքում, մեր կարծիքով պարտադրանքի հետևանք է եղել)` նշելով. «եպիսկոպոսներ եւ իշխաններ իրարմե զատուեցան քանի որ վերջինները բուն կամ կէս Լատիններ էին (այստեղ Մ. Օրմանյանը անշուշտ նկատի ունի Լուզինյան եղբայրներին – Դ.Թ.), մինչ եպիսկոպոսներուն սիրտին մեջ չէր կրնար բոլորովին մարած ըլլալ ազգային եկեղեցւոյ զգացումը; Հակառակութեան հետեւանքը եղաւ Յակոբի կաթողիկոսութենէն դադարելը, եւ նոր կաթողիկոսի ընտ-

[180] Recueil des Historiens des Croisades. Documents Arméniens (այսուհետև` Recueil des Historiens), t. 1, Paris, 1863, p. 701.

[181] Մ. Օրմանեան, սյուն 1857:

րութիւնը»։[182] Ըստ Մ. Օրմանյանի, կաթողիկոսը փորձում է Լեւոնին համոզել դադարեցնել հայ-եվրոպական հարաբերությունները, որին, նոր արշավանքի ահից, սկզբում արքան համաձայնվում է, սակայն, հետագայում արքունիքի լատինամետ տարրերի ազդեցության տակ, ստիպված է լինում վերանայել այդ քաղաքականությունը՝ Հակոբին հեռացնելով կաթողիկոսական աթոռից: Ղ. Ալիշանը և Մ.Չամչյանցը գտնում են, որ Հակոբը աթոռից հրաժարվում է ներքին վեճերի պատճառով:[183] Դժվար է միանշանակ համաձայնել Մ. Օրմանյանի կարծիքի հետ, սակայն, մի բանում կարելի է համաձայնել, որ սպասվելիք արշավանքը, թողած կլինի իր ազդեցությունը Հակոբ Անավարզեցուն գահընկեց անելու գործում:

Ցավոք, հայտնի չէ Մ. Օրմանյանի հիշատակած 1340 թ. արշավանքի հետագա շարունակությունը, արդյո՞ք հակառակորդը բավարարվեց՝ ավերելով ու կողոպտելով երկիրը: Այնուամենայնիվ, չբացառելով մամլուքյան նոր արշավանքի հնարավորությունը,[184] որի մասին այլ տեղեկություններ չկան, պետք է նշել, որ այն էական ազդեցություն չթողեց Լեւոնի վարած քաղաքականության վրա:

1340 թ. հավանական արշավանքի հետ է կապված նաև նույն թվականին Բենեդիկտոս XII-ի մոտ ուղարկված Լեւոն IV-ի պատվիրակությունը՝ Դանիել Մինոր՝ ֆրանցիսկյան կրոնավորի և Թորոս Միքայելյանց պալատական պաշտոնյայի մասնակցությամբ:[185] Սակայն, Լեւոնի դեսպանությունը Ավինյոնում լավ ընդունելության չի արժանանում: Պատվիրակները, որոնք փաստորեն մեկնել էին

[182] Նույն տեղում, սյուն 1858:

[183] Սիսուան, էջ 147, Մ. Չամչեանց, էջ 339:

[184] 1340 թ. դիմաց Մ. Չամչյանցը եւս նշում է մամլուքների արշավանքի մասին, որոնք ներխուժելով Կիլիկիա, նոր ավերածություններ են գործում: Ըստ երևույթին Մ. Օրմանյանը 1340 թ. արշավանքի փաստը վերցրել է Մ. Չամչյանցից (տե՛ս Մ. Չամչեանց, էջ 339):

[185] Վերջինս 1314 թ. մոնպելիեցիներին տրված արտոնագրում հիշատակվում է,



մամլուքյան ներխուժման սպառնալիքի շրջանում, արքայի անունից հատուկ խնդրում են պապին՝ արագացնել Արևմուտքի զինական օժանդակությունը: Հայկական արքունիքում, անկախ Լուզինյան եղբայրների և լատինամետ այլ տարրերի ազդեցությունից, այնուամենայնիվ, հույսեր էին կապում եվրոպական օժանդակության հետ, ոչ թե այն պատճառով, որ ճիշտ չէին գնահատում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրությունը, այլ որովհետև դաշնակիցներ ընտրելու հարցում այլընտրանք չկար:

Բենեդիկտոս XII-ը այս անգամ առավել վճռական պահանջ է ներկայացնում, քան՝ իր նախորդները: Նա հայ պատվիրակներին է ներկայացնում Ներսես Պալիանենցի և Սիմեոն Բեկի (որոնք, այդ ժամանակ հալածվելով Կիլիկիայում, անցել էին Կիպրոս, այդտեղից էլ՝ Ավինյոն) կողմից կազմված Հայոց եկեղեցու «մոլորությունների» 117 կետից բաղկացած ցանկը՝ պահանջելով Լեւոն IV-ից՝ անհապաղ վերացնել հայկական եկեղեցում գոյություն ունեցող «մոլորությունները», որով, իրականում, տեղի կունենար երկու եկեղեցիների միավորումը պապականության գերագահության ներքո: Դրանից հետո էր միայն պապը խոստանում զինական օժանդակություն: Բենեդիկտոսի այս պատասխանը կարելի է մեկնաբանել Հայոց թագավորության ծանր իրավիճակով, որին, անշուշտ, նա քաջածանոթ էր: Սակայն, դժվար է չհամաձայնվել նաև Մ. Օրմանյանի հետ, ըստ որի «...Բենեդիկտոս կրօնամոլ նպատակին հետ, ճարտար խուսափողութեան ձեւ մըն ալ կը գործածէր, վասնզի Արեւելքի քրիստոնեաներուն օգնութեան երթալու եռանդը մարած էր, եւ արեւմտեան իշխաններէն ոչ ոք նոր խաչակրութեան կը յորդորուէր, եւ ամէնքը ներքին պայքարներով զբաղուած էին»։[186]

Լեւոնը պապի պահանջները քննարկելու համար նոր եկեղեցական ժողով է գումարում, ապա և մեղադրանքների վերաբերյալ

որպես Այասի բաժտան գլխավոր (տե՛ս V. Langlois, Lettres..., p. 178).

[186] Մ. Օրմանեան, սյուն 2180:

նույն՝ Դանիել Մինորի հետ բացատրություն է ուղարկում Ավինյոն, որի մեջ հերքվում են Հայոց եկեղեցուն առաջադրվող մեղադրանքները: Թագավորը նաև խնդրում է արագացնել օգնությունն «Արևելքի քրիստոնյաներին»:[187] Նոր պատասխանը, որ 1342 թ. սկզբներին տրվեց Լևոնի պատվիրակներին, է՛լ ավելի խիստ էր: Պապը պահանջում էր՝ անհապաղ հրավիրել եկեղեցական նոր ժողով և «117 գլուխները մէկիկ մէկիկ նկատողութեան առնեն, եւ իւրաքանչիւրին մասին իրենց լիակատար հպատակութիւնը յայտնեն»:[188] Փաստորեն, Դանիել Մինորի պատվիրակությունը երկրորդ անգամ ձեռնունայն վերադարձավ Կիլիկիա: Հենց ա՛յս պատվիրակության վերադարձից առաջ էլ մահանում է Լևոն IV-ը,[189] որով էլ, փաստորեն, վերջ է գտնում Հեթումյան ընտանիքի ավագ ճյուղի իշխանությունը Կիլիկիայում:

[187] Recueil des historiens, p. 702, Fr. Tournebize, p. 650.

[188] Մ. Օրմանեան, սյուն 1865:

[189] Հեթում պատմիչի ժամանակագրության շարունակողը Լևոնին տալիս է թագավորության 21 տարի, մյուս շարունակողը տալիս է ավելի կոնկրետ՝ մինչև 1341 թ. (տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. I, էջ 88): Ֆ. Տուրնեբիզը կարծում է, որ Լևոն IV-ը մահացել է 1341 թ. վերջին կամ 1342 թ. սկզբին (տե՛ս Fr. Tournebize, p. 659), Հեթում Նղրեցին նշում է 1341 թ. օգոստոսի 27-ը, որը առավել արժանահավատ է (տե՛ս Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 193): Ըստ ոմանց, Լևոն IV-ը սպանվում է (տե՛ս Ա. Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Երևան, h. I, 1957, էջ 181, V. Kurkjiian, p. 257, R. Grousset, p. 402, J. De Morgan, Histoire du peuple Armenien depuise les temps les plus recules de ses annales jusqu'a nos jours, Paris, 1929, Ս. Պողոսյան, Կիլիկիայի հայկական թագավորության անկման մասին, Բանբեր Երևանի Համալսարանի, 1974, 1, էջ 161): Ա. Սուքիասյանը նույնիսկ կարծիք է հայտնել, որ Լևոն IV-ը սպանվել է ժողովրդական հուզման ժամանակ (տե՛ս Ա. Սուքիասյան, Կիլիկիայի հայկական պետության և իրավունքի պատմություն (XI–XIV դդ.), (այսուհետև՝ Ա. Սուքիասյան) Երևան, 1978, էջ 94): Ս. Բոռնազյանը իր հերթին կարծում է, որ Լևոնը սպանվեց պապի կողմնակիցների ձեռքով, իր անբավարար «լատինամետության» պատճառով (տե՛ս Ս. Բոռնազյան, Կիլիկյան Հայկական թագավորության գոյամարտը XIV դարում և անկումը, Հայ ժողովրդի պատմություն, h. III, էջ 776): Սակայն, այս տեսակետները որևէ աղբյուրով հիմնավորված չեն:



# ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ԿԻԼԻԿԻՈ ՀԱՅՈՑ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ 1342–1375 ԹԹ.

## 2.1. Գի Լուզինյանի գահակալությունը

Լևոն IV-ը, ըստ Հ. Դարդելի, դեռ կենդանության ժամանակ, հրաման արձակեց՝ իր մահից հետո թագավոր օծել հորաքրոջ ավագ որդուն՝ Գի Լուզինյանին:[190]

«Եւ զի մեռաւ անորդի, հրաման ետ ի կենդանութեան անդ իւրում զի թագաւորութիւն Հայոց զկնի մահուան իւրոյ անցցէ յեւրեցն յորդիս Զապել տիկնոջ քեռ հօր իւրոյ Օշին արքայի»:[191] Դարդելի տեղեկությունը չժխտելով հանդերձ, այնուամենայնիվ, նշենք, որ կտակի գոյությունը այլ աղբյուրներով հաստատված չէ, իսկ Դարդելը, որը, փաստորեն, Լեւոն Լուզինյանի կենսագիրն է եղել, ամեն կերպ փորձել է օրինականացնել Լուզինյանների իրավունքները հայոց գահի նկատմամբ:[192] Ժամանակաշրջանի պետական կարգավիճակ ունեցող օրենքների ժողովածուներից Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագիրքը» արքայի՝ արու զավակ չունենալու դեպքում, իրավական այլ լուծում է առաջարկում. «Եւ թէ

[190] Հայ իրականության մեջ գործածվել է նաև անվան Գուիդոն տարբերակը (տե՛ս Սիսուան, էջ 559): Օ. Սեքուլյանը կարծում է, որ «Գի» անվան հետ միաժամանակ կարող էր օգտագործված լինել նաև անվան «Կիտ» - տարբերակը (տե՛ս Սեքուլեան, «Կիտա՞յ», Հանդէս Ամսօրեայ, 1973, թիւ 7–9, սյուն 327):

[191] Դարդել, գլ. Իե, էջ 31: Լ. Տեր-Պետրոսյանը նշում է, որ համաձայն Հակոբ Սսեցու, Լևոն IV-ը ունեցել է Հեթում անունով որդի: Ամենայն հավանականությամբ վերջինս կամ ապօրինածին է եղել, կամ էլ 1342 թ. արդեն մահացած է եղել, որի պատճառով էլ չի ժառանգել գահը (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ էջ 408):

[192] Ժ. Դեդեյանը գտնում է, որ Գին գահ է բարձրացել արքունիքի լատինամետ խմբավորման աջակցությամբ (տե՛ս Gerard Dedeyan, Histoire des Armeniens, Toulouse 1982, p. 312, տե՛ս նաև Seta B. Dadoyan, The Armenian Catholicosate from Cilicia to Antelias, Antelias, 2003, p. 46):

որդիքն մեռել լինին թագաւորին, նա որդոց որդիքն ժառանգեն զթագաւորութիւն եւ ոչ դստերացն, զի քանի որձ դասուն ժառանգքն բաւեն, նա իգացն խափանած է յօրինաց. զի զէդ օտար համարած է իգաց ժառանգացն յԱստուծոյ՝ Մուսեսի բերանով»:[193] Փաստորեն, տվյալ ժամանակի օրենքների ժողովածուով իգական սերնդի կողմից գահի նկատմամբ իրավունքներ չէր նախատեսվում, և այն նաև, բխում էր «աստվածային» օրենքներից. «Բայց թէ յանճարկութենէ լինի, որ բնաւ որդի չկենայ թագաւորին, այլ դուստր, նա կարէ հայրն թագել զինքն ի պոման, որ եռ իր մահուն չլինին ժառանգ աթոռոյն այն բագած դստեր որդիքն, ապա զեղբօր որդիսն դնեն երկրին հաւատարիմքն յիրենց պարոնին աթոռն, որ յիրենց պարոնին սերմէն է եւ ոչ օտար սերմի ծնունդ»:[194]

Այս դեպքում ևս, բացառվում է արքայական զարմի դստեր սերնդի իշխանությունը՝ որպես գահակալ, որպիսին, փաստորեն, հանդիսանում էր Գի Լուզինյանը՝ Լևոն II-ի թոռը՝ մայրական գծով:

«Ապա թէ չկենայ որդի եւ ոչ դուստր եւ եղբօր որդիք լինին, նա հայրապետին եւ այլ եկեղեցւոյն եւ իշխանաց ու երկրին տեսովն առնուն մեկի մի, յոր հաճին՝ ի լաւն եւ կրթեցնեն յարքունիքն, եւ յոր հաճին, նա հետ թագաւորին մահուն զայն դնեն յաթոռն՝ հայրապետով»:[195]

Փաստորեն, օրենքը սահմանում էր, որ արքայական տոհմից ժառանգներ չլինելու դեպքում գահը կարող էր հանձնվել նրան, ում կընտրեր երկրի աշխարհիկ և հոգևոր վերնախավը: Ընդ որում, դա պետք է կատարվեր ժողովի որոշմամբ: Հովհաննես Կանտակուզենոսի վկայությամբ. «...(Գին)հեռացավ Կիլիկիա, քանզի հայերն էին հրավիրել թագավորելու, հոր գահի ժառանգորդն ինքն էր»:[196]

---

193 Սմբատ, Դատաստանագիրք, էջ 16:
194 Նույն տեղում:
195 Նույն տեղում:
196 Հ. Բարթիկյան, Գվիդոն Լուսինյանը Բյուզանդիայում եվ Կիլիկյան



Ջիվան և Բոհեմունդ Լուզինյան եղբայրները, որոնք Լևոնի մահից հետո երկրի փաստացի տերերն էին դարձել, հիմնվելով Լևոնի մերձավորագույն ազգականները լինելու իրողության վրա, իրենց կողմը գրավելով արքունիքի հայ պաշտոնյաներին, կարողացել էին նաև գահաժառանգման հարցում հաղթանակ տանել: Ջիվան Լուզինյանը, որպես երկրի խնամակալ (պայլ), պետության ղեկը օրինականորեն վերցրեց իր ձեռքը:

Լուզինյան առաջին թագավորը, ով բազմեց Հայոց գահին, Գի Լուզինյանն էր, որը 1342 թ. վերջին կամ 1343 թ. սկզբին պետք է ժամանած լիներ Կիլիկիա և օծվեր: Գին Լևոն IV-ի մահվան ժամանակ Բյուզանդիայում էր և նաև օգտագործելով բյուզանդական կայսրերի հետ ունեցած ազգակցական կապը, բավականին առաջացել էր պաշտոնական սանդուղքներով՝ հասնելով Աքայայի կուսակալի կամ «Արևմուտքի զորավար»-ի[197] պաշտոնին: Ուստի անտրամաբանական չպետք է լինի Հ. Դարդելի այն տեղեկությունը, որ Ջիվանը, իր ձեռքը վերցնելով պետության փաստացի ղեկավարումը, մի քանի անգամ դիմեց եղբորը՝ վերադառնալու և հաստատվելու Հայոց գահին:[198]

Սակայն Գին, ելնելով Բյուզանդիայում ունեցած իր ազդեցությունից և հաջողություններից, հօգուտ եղբոր հրաժարվում է Հայոց գահից: Հենվելով այս փաստի, ինչպես նաև մեկ այլ աղբյուրի տեղեկության վրա՝ Մ. Օրմանյանը փաստում է, որ Ջիվանը 1342 թ. աշնանը օծվում է Հայոց թագավոր՝ Կոստանդին անվամբ: Վերջինս ըստ նրա, իշխում է մինչև 1343 թ. սկիզբը, այսինքն՝ մինչև եղբոր Բյուզանդիայից վերադառնալը:[199]

---

Հայաստանում, նշվ. աշխ., էջ 689:
197 Նույն տեղում, էջ 687:
198 Դարդել, գլ ԻԶ, էջ 32:
199 Մ. Օրմանեան, սյուն. 1867: Այդպես է կարծում նաև Է. Դյուլորիեն (տե՛ս E. Dulaurier, Recherches sur la Chronologie Arménienne, Paris, 1859, p. 121, Ս. Պողոսյան, Կիլիկիայի հայկական թագավորության անկման մասին, Բանբեր Երևանի Համալսարանի, 1974, 1, էջ 160, Gustave Schlumberger, Les monnaies Médiavales des

Մ. Օրմանյանը մատնանշում է Հ. Դարդելին, որը նշում է միայն Ջիվանի թագապահության փաստը. «իշխան Ջեհան, վարեր զարքայութիւնն ի սէր եղբօրն, մինչև եկեալ հասցէ նա ի Հայաստան»:[200] Մ. Օրմանյանի մատնանշած մյուս հեղինակը Հովհան Մանսին է: Նա գրում է, որ 1343 թ. սկզբին կայացած Սսի ժողովի կազմած գրության մեջ հիշատակված է նաև Կոստանդինը, որտեղից նա ենթադրում է, որ դա նույն Ջիվանն է:[201]

Միայն Մարտիրոս Ղրիմեցին, որ Ջիվանի թագավորելու մասին հաղորդող միակ հեղինակն է, նշում է սկզբում Ջիվանի, ապա՝ եղբոր թագավորելու մասին:[202] Սակայն կարծում ենք, որ Ղրիմեցին, որն ապրել է XV դարում, նշելով Ջիվանի անունը, հավաստել է մեզ այն, որ իրական իշխանությունը գտնվելիս է եղել հենց Ջիվանի ձեռքին, անգամ Գիի թագավոր օծվելուց հետո: Այս փաստը թյուրիմացության մեջ է գցել ինչպես Մ. Օրմանյանին, այնպես էլ՝ հետագա հետազոտողներին:

Մ. Օրմանյանի այս տեսակետը որևէ կերպ չի հաստատվում: Մնացյալ աղբյուրներում Ջիվան-Կոստանդինի թագավորելու վերաբերյալ որևէ փաստ չի հանդիպում: Այսպես, Ռուբինյան գահակալների և պաշտոնյաների մահվան ցանկում Ջիվան Լուզինյանը նշվում է ընդամենը՝ որպես պարոն Ջիվան. «Եւ յայսմ աւուր (օգոստոսի 7) մեռաւ բարեպաշտ Պարոն Ճուան»:[203] Անշուշտ, եթե Ջիվանը թագավոր լիներ գեթ մի քանի ամիս, նրա անունը, այլ մեկնաբանություններով, կգրանցվեր, ինչպես օրինակ 1307 թ. սպանված և ժամանակին թագավորած Հեթում II-ը: Բացի այդ, հայ թագավորների ցուցակում Ջիվանը ոչ մի տեղ չի հիշատակվում որպես Հայոց թագավոր:

Rois de Petite Arménie: Revue des etudes Arméniennes, 1920, fascicule 1, p. 7).

[200] Դարդել, գլ ԻՁ, էջ 32:

[201] Մ. Օրմանեան, սյուն 1905:

[202] Recueil des historiens, p. 685.

[203] Հայապատում, էջ 544:



Ներսես Պալիանենցի հայ իշխանների և թագավորների դասաշարում Ջիվանը հիշատակվում է սոսկ որպես պայլ:[204] Ընդ որում, կարելի է վստահել սույն հեղինակին, որը նշված ժամանակաշրջանում է ապրել և քաջածանոթ է եղել քաղաքական անցուդարձերին:

Ըստ Հ. Դարդելի՝ Ջիվանը, Լևոն IV-ի հրավերով վերադարձած լինելով Կիլիկիա, ստանձնում է գունդստաբլության պաշտոնը:[205] Արաբ պատմիչ Աբուլ Ֆիդան մի հետաքրքիր տեղեկություն է հաղորդում, ըստ որի «Հիջրի 746 թ. (1345 թ. մայիս – 1346 թ. ապրիլ) հայերը սպանեցին իրենց թագավոր Ֆրանկ Քունթստաբլին»:[206] Սրանից պարզ է դառնում, որ սպանվում է Հ. Դարդելի մոտ հիշատակված գունդստաբլությունը ստացած Ջիվանը: Սակայն արաբ պատմիչի կողմից անունների և թվականների շփոթ է տեղի ունեցել, քանզի սպանությունը նախ՝ եղել է նշված թվականից մեկ տարի առաջ, և երկրորդ՝ Ջիվան Լուզինյանը մահացել էր բնական մահով: 1342 թ. Թավրիզում գրված ձեռագրի հիշատակարանում, ի թիվս այլ գահակալների, Հայոց թագավորի կապակցությամբ նշված է. «Եւ ի թագաւորութեան Հայոց աստուածասիրին եւ բարեպաշտին»:[207] Արքայի անունը բաց է թողնված. Փիրղալեմյանը կարծում է, որ հիշատակարանը գրվել է այն ժամանակ, երբ Լևոն IV-ի մահից հետո Գին դեռ գահ չէր բարձրացել:[208] Սա էլ մի խոսուն փաստ է այն մասին, որ Ջիվան Լուզինյանը չի հռչակվել հայոց թագավոր: «Գունդստաբլ» բառն արաբ պատմիչի կողմից նույնացվել էր ֆրանկ անվանման հետ, որն էլ անվանման շփոթի պատճառ է դարձել:

Գի Լուզինյանի օծման ժամանակի մասին հայտնի է միայն, որ 1343 թ. մարտ ամսին նա արդեն թագավոր էր հռչակվել (կամ գոնե

[204] Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 205:

[205] Դարդել, գլ ԻԵ, էջ 31:

[206] Արաբական աղբյուրները, էջ 249:

[207] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 331:

[208] Նույն տեղում:

վարում էր թագավորության գործերը), քանզի նամակ է առաքում
Անգլիայի Էդուարդ III թագավորին:[209]

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Լևոն IV-ի մահից հետո,
մինչև 1343 թ., Զիվան Լուզինյանը՝ որպես պայլ, ղեկավարել է պե-
տությունը: Նշենք, որ 1344 թ. Գին Հեթում Նղրեցուն ուղարկում է
Կոստանդնուպոլիս կնոջը՝ Թեոդորային Կիլիկիա ուղեկցելու հա-
մար: Վերջինս սակայն հրաժարվում է մեկնել[210] և Գին ստիպված
ապահարզանի և նոր ամուսնության խնդրանքով դիմում է պապին,
որն էլ բավարարում է այն:[211]

Մինչ Գիի Կիլիկիա ժամանումը 1343 թ. սկզբին Բենեդիկտոս
XII-ի ներկայացրած հարյուր տասնյոթ կետերից բաղկացած մե-
ղադրանքներին պատասխանելու համար Սսում գումարվում է եկե-
ղեցական ժողով: Այս ժողովը մեկ առ մեկ քննարկում է այդ մեղադ-
րանքները և հիմնականում մերժում դրանք:[212]

Այդ ընթացքում Գին գժտվում է Բյուզանդիայի կայսերական
գահը զավթած Հովհաննես Կանտակուզենոսի հետ: Նոր կայսեր
դեմ պայքարը, որը սկիզբ էր առել 1341 թ. վերջին, գլխավորողնե-
րից մեկը հենց Գին էր: Գին սկզբում՝ 1342 թ. ընթացքում, հասավ
զգալի հաջողությունների: Սակայն, ի վերջո, Կանտակուզենոսը
հաղթող դուրս եկավ այդ պայքարում, որի պատճառով էլ 1342 թ.
ավարտին Գին հարկադրված էր ընդունել Հայոց ավագանու առա-
ջարկը և վերադառնալ Կիլիկիա:[213] Հարկ է նշել, որ Հ. Դարդելը
փորձում է եղբայրական ջերմ լույսի ներքո նկարագրել Զիվանի և
Գիի հարաբերությունները: Գիի մի քանի անգամ հրաժարումից հե-
տո Զիվանը, կրտսեր եղբոր հեզությամբ տոգորված, շարունակում

[209] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 559:

[210] Հեթում Մխտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 194:

[211] Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ. հ. Բ, էջ 553:

[212] Մ. Օրմանեան, սյուն 1871–1903:

[213] Հ. Բարթիկյան, Գվիդոն Լուսինյանը Բյուզանդիայում եվ Կիլիկյան Հայաստանում նշվ. աշխ., էջ 687:



է խնդրել եղբորը՝ ստանձնելու Հայոց գահը՝ այդ ընթացքում ոչ մի
անձնական հետաքրքրություն չցուցաբերելով նրա նկատմամբ:

Գին, անշուշտ, 1342 թ. ընթացքում, հույս ուներ Բյուզանդիա-
յում իր քաղաքական դիրքն ամրապնդել և այդ մի քանի ամսվա
ընթացքում փորձելու էր հետ բերել Բյուզանդիայում կորցրածը:
Իսկ ինչ վերաբերում է Հ. Դարդելի այն տեղեկությանը, թե Գին Հա-
յոց թագավոր օծվեց 1342 թ. հոկտեմբերին, ապա այն չի կարող
համապատասխանել իրականությանը, քանզի այդ ամսաթիվը հա-
կասում է այլ աղբյուրների և հենց Հ. Դարդելի տված տեղեկութ-
յուններին: Ընդ որում, ճիշտ չի լինի Գիին թվագրել, իբրև Հայոց
արքա՝ Կոստանդին II, քանզի ոչ մի սկզբնաղբյուրում նա չի հիշա-
տակվում Կոստանդին անունով, ավելին՝ Գիի թողարկած բոլոր
դրամների վրա նշված է «Գի» անունը:[214] Այսպիսով, 1343 թ. Կիլի-
կիայում հաստատվեց թագավորական նոր ընտանիք, որի իշխա-
նությունը սակայն բավականին կարճ տևեց:

Հ. Դարդելը Գի Լուզինյանի մասին գրում է. «...բուռն զօրու-
թեամբ վարեաց արքայ Գուի զիւրն թագաւորութիւն, առանց հա-
տուցանելոյ ումեք սակս հարկաց, ո՛չ ծովու եւ ո՛չ ցամաքի, եւ
առանց կորուսանելոյ թիզ մի հողոյ. եւ հզօր բազկաւ եւ խիզախ
քաջութեամբ մարտնչէր ընդ թշնամիս իւր եւ յաղթող հանդիսանայր
հանապազ ի վերայ նոցա»:[215] Այսպիսով, ըստ Հ. Դարդելի, Գի Լու-
զինյանը հաջողությամբ էր հետ մղում թշնամիների հարձակումնե-
րը՝ սկզբունքորեն չընդունելով մահմեդական տիրակալի գերակա-
յությունն իր նկատմամբ: Մինչ Գիի գահակալումը՝ 1342 թ., մամ-
լուքները արշավել էին Կիլիկիա և մեծ ավերածություններ կատա-
րել:[216] Հաջորդ՝ 1343–1344 թթ., կարամանցի թուրքմենները ներ-

[214] P. Bedoukian, Coinage of Cilician Armenia, p. 380–382.

[215] Դարդել, գլ Իէ, էջ 33:

[216] Ա. Տագէսյանը գրում է, որ 1341–1342 թթ. մամլուքները դարձյալ արշավեցին Այասի վրա (տե՛ս Ա. Տագէսեան, Հայ-Մեմլուք մը եւս Ֆախր էտ՛ Տին Այազ ալ-Այտալլա էլ Նասիրի, Բազմավէպ, 1998, թիւ 1–4, էջ 272): Կարծում ենք, որ այս

ձգտումը՝ տիրել կիլիկյան ամբողջ ծովափին և իր ձեռքը վերցնել փոքրասիական թերակղզու վրայով կատարվող առևտրի զգալի մասը: Չպետք է մոռանալ նաև կարամանցիների նպատակադրումը՝ ապահովել իրենց թիկունքը օսմանյան թուրքերի դեմ հնարավոր պայքարում:

Գիի, այսպես կոչված, «լատինամետության» ընդամենը հայոց արքունիքի քաղաքականության շարունակությունն էր, և ոչ մի էական նշանակություն չուներ մամլուքյան արշավանքների համար:

Այնուամենայնիվ, Գին իր թագավորության երկու տարիների ընթացքում չընկալվեց հայկական արքունիքում: Եվ միանգամայն բնական է, որ իշխող ընտանիքի դեմ դժգոհությունները հայկական միջավայրում պետք է աճեին: Մինչև 1344 թ. նոյեմբերյան դեպքերը, նույն թվականի օգոստոսի 17-ին երիտասարդ հասակում մահացավ գունդստաբլ Ջիվան Լուզինյանը: Դժվար է ասել, արդյո՞ք նա սպանվել է ընդդիմադիր հայ պարոնների կողմից, թե՝ ոչ: Անենայն հավանականությամբ, նա մահացել է բնական մահով, քանզի Լևոն Լուզինյանի կենսագիր Ռ. Դարդելը փաստում է միայն նրա մահը, որևէ կերպ՝ անգամ չակնարկելով, սպանության մասին:[221]

## 2.2. 1344 թ. պետական հեղաշրջումը. Կոստանդին II Նղրեցու կառավարումը.

Մ. Չամչյանը նշում է, որ հայ պարոնները քանիցս փորձում էին համոզել արքային՝ փոխելու իր քաղաքականությունը:[222] Սակայն, ցավոք, այս փաստը հաստատող տեղեկություններ չկան:

[221] Դարդել, գլ. խ, էջ 50:
[222] «Զայս տեսեալ ոմանց յիշխանացն Հայոց՝ ազդ արարին Գուիտոնայ, և յորդորէին զնա պահել զազգն յիւրում վիճակի, եւ մի փոխել յայլ վիճակ՝ որում չէին ընտել...», Մ. Չամչեանց, էջ 349:



Հաշվի առնելով հեղաշրջմանը մասնակից իշխանների թիվը, որոնք խորհրդի էին հավաքվել սպանության հաջորդ առավոտ՝ դավադրությունը լավ նախապատրաստված և ծրագրավորված է եղել: Կարծում ենք տեղին չէ Մ. Օրմանյանի այն կարծիքը, թե «...իշխաններէն ոմանց դաւադրութեան գործ չէր եղածը, այլ համախումբ ազգովին շարժումի մը հետեւանք, եւ արդիւնք լատինամոլութեան դէմ զգացուած հակառակութեան»:[223] Մ. Օրմանյանի այս վարկածը, անշուշտ, հիմնված է Ռ. Դարդելի այն տեղեկության վրա, որ «...ժողովեցան բազմութեամբ մեծաւ եւ վառեալ ի զէն՝ գրոհ ետուն ի տեղին, ուր էր զգոնաբարոյ արքայն Գուի»:[224]

Չենք ժխտում ժողովրդական շարժման գոյությունը, սակայն, միաժամանակ, ճիշտ չէ այդ ամենը վերագրել ժողովրդական զանգվածների ազգային և կրոնական զգացմունքների ինքնաբուխ հորդմանը: Այդ ամենը կազմակերպողը և ուղղորդողը պետք է լինեին հայկական ավագանու ներկայացուցիչները: Հեղաշրջումը նախապատրաստվել և ծրագրվել է իշխանների կողմից, իրականացվել ամբոխի օգնությամբ:

Ցավոք, հեղաշրջման ղեկավարների շատ քիչ անուններ են մեզ հասել: Ռ. Դարդելը գրում է Օշին Բակուրանի՝ որպես սպանության գլխավոր կազմակերպիչներից մեկի մասին, չմոռանալով նաև հավելել Օշինի անսպասելի մահը հեղաշրջման հաջորդ օրը:[225] Հեղաշրջման ղեկավարման գործում, չնայած ուղղակի անուններ տրված չկան, սակայն, առաջնային կարող էին լինել երկու անձ՝ Հեթում Նղրեցի Զանդրլայը (Ախտուց տերը) և Կոստանդին Նղրեցին:

1344 թ. նոյեմբերի 17-ին արքան և նրա եղբայրը՝ Կոռիկոսի

[223] Մ. Օրմանեան, սյուն. 1907:
[224] Դարդել, գլ ԼԹ, էջ 49:
[225] Դարդել, Դեպք, էջ 50–51: Այս Օշինի նախնին՝ նույնպես Օշին Բակուրանը հիշատակվում է որպես 1296 թ. Հեթում թագավորի դեմ կազմակերպված դավադրության գլխավոր կազմակերպիչներից մեկը (տե՛ս Մանր ժամանակագրություններ, հ. I, Հեթում պատմիչի տարեգություն, էջ 87):

կոմս Բոհեմունդը, Ադանայի արքայական պալատում էին,[226] երբ պատարագի ժամանակ զինված բազմությունը հարձակվում և կոտորում է ինչպես Լուզինյան եղբայրներին, այնպես էլ՝ նրանց հետ եղած լատին զինվորներին ու պալատականներին: Ավելին, զայրացած ամբոխը սպանում է նաև պատարագչին՝ արքայի պալատական քահանային: Եվ, ինչպես նշում է ժամանակագիրը, Գին «...վասն անպարկեշտ վարուց սպանելոյ եղեւ ի զաւրաց իւրոց ...»:[227]

Պատարագը կատարվում էր ըստ հռոմեադավան արարողակարգի, որն էլ ամբոխի նման դաժան դատաստանի առիթ էր դարձել: Սակայն այստեղ ուշագրավ է մեկ այլ փաստ: Բանն այն է, որ հարձակման ժամանակն ընտրված է եղել ճիշտ այն պահին, երբ արքունիքը պակաս պաշտպանունակ պետք է լիներ: Դա վկայությունն է այն բանի, որ վերոշարադրյալ իրադարձությունը ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ լավ կազմակերպված պետական հեղաշրջում, որտեղ հաշվի էր առնված, նույնիսկ, հարձակման հարմար պահը:

Սպանության հաջորդ օրը, ինչպես հաղորդում է Հ. Դարդելը, հավաքվում են երկրի պարոնները՝ որոշելու «...թէ զի՞նչ արասցեն զթագաւորն իւրեացն, զոր ի մահ վարեցին»:[228] Թագավորի ընտրության համար հրավիրված իշխանաժողովը պատմիչն առանձնացնում է այս ժողովից: Այստեղ պատմիչը, մտածված իշխանաժողովը բաժանել է երկու մասի, որպեսզի տեղ հատկացնի Օշին Բակուրանի առասպելախառն մահվան համար: Ըստ Հ.Դարդելի՝ խորհրդի ժամանակ, Բակուրանին՝ հեղաշրջման գլխավոր կազմակերպիչներից մեկին, եղերական մահով պատուհասում է Աստված: Մի կողմ թողնելով Օշին Բակուրանի մահը՝ ամենայն հավանականությամբ իշխանական խորհրդաժողովը գումարվել է, ինչպես գրում է Դարդելը՝ սպանության հաջորդ օրը: Ահա այստեղ էլ որոշվում է թագավորի հարցը:

Զաբել և Ամորի Լուզինյանների հինգ զավակներից, փաստորեն, ոչ ոք կենդանի չէր մնացել, իսկ Գի Լուզինյանից մնացել էին երկու դուստրեր՝ առաջինը՝ Իզաբել-Մարգարիտն էր,[229] երկրորդի անունը հայտնի չէ: Եվ միայն Ջիվանից էին մնացել երկու որդիները՝ հնգամյա Բոհեմունդը և երկամյա Լևոնը: Սակայն կարելի է հաստատապես պնդել, որ՝նրանց գահաժառանգման հարցը չի էլ քննարկվել, և նախքան Լուզինյան արքայի սպանությունը հեղաշրջման մասնակից պարոնների շրջանում արդեն վճռված է եղել ապագա գահակալի հարցը. «Եւ յետ այսորիկ իշխանքն Հայոց ժողովեցան վերստին ի խորհուրդ եւ ընտրեցին եւ եդին ի թագաւոր զորդի պարոն Բօդուենի մեծի մարաջախտին Հայոց, որ կոչեցաւ արքայ Կոստանդին, եւ ոչ էր նա ի զարմէ թագաւորացն Հայոց եւ չէր իսկ նորա իւիք խնամութիւն ընդ տանն արքունի»:[230]

Կոստանդին Նղրեցին բերդատեր պարոն էր՝ Բալդուին (Պաղտին) մարաջախտի (որը Լևոն IV-ի երեք խնամակալներից մեկն էր և Օշին ու Կոստանդին Կոռիկոսցիների սպանությունից հետո էլ շարունակեց պաշտոնավարել) որդին, Կոստանդին Նղրեցու թոռը, որն էլ սերված էր Կոստանդին թագավորահոր (Հեթում I-ի հոր) որդիներից մեկից:[231] Լ. Տեր-Պետրոսյանը առաջ է քաշում այն ենթադրությունը, որ Կոստանդին Նղրեցին Կոստանդին թագավորահոր Վասակ անունով որդու զավակն էր:[232] Հ. Դարդելը, փաստորեն, ուղղակիորեն նշում է, որ Կոստանդին II Նղրեցին որևէ առընչություն չուներ նախորդ արքայատոհմի հետ: Հետազոտողներից Է. Դյուլորիեն ավելի հեռուն է գնում՝ Կոստանդինին դիտելով Լուզին-

[226] Ադանայից է գրված եղել 1343 թ. մարտին Անգլիայի արքային ուղղված Գիի նամակը: Ըստ Ֆ. Տուրնեբիզի, Գին իրեն նստավայր ընտրել էր Ադանան (տե՛ս Fr. Tournebize, p. 666):
[227] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 441:
[228] Դարդել, Դեպք, էջ 51:



[229] Մ. Օրմանեան, սյուն 1907:
[230] Դարդել, գլ ԽԱ, էջ 52:
[231] Rüdt Collenberg, p.16.
[232] Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., հ. Բ, էջ 431:

յան:[233] Հ. Բաստրմաջյանը նույնպես, ինչպես և Է. Դյուլորիեն, ան-
հիմն Կոստանդին II-ին և Կոստանդին III-ին ներկայացնում է իբրև
լատիններ, միաժամանակ, չմոռանալով նշել նաև նրանց անօրի-
նական արքա լինելը:[234] Սակայն իրականությունը մի փոքր այլ է:
Ինչպես վերը տեսանք, Կոստանդինը հայրական կողմից Հեթում-
յան տոհմի կողմնային ճյուղի ներկայացուցիչն էր,[235] որի տոհմն
առաջնային դիրք էր գրավում պետական իշխանության աստիճա-
նակարգում: Կոստանդինի մայրը՝ Մարիունը, Սմբատ Գունդստաբ-
լի թոռնուհին էր, այսինքն՝ Կոստանդինը մայրական գծով նույն-
պես ազգակից էր Հեթումյաններին, և վերջապես՝ Կոստանդինը
ամուսնացած էր Օշին պայլի և Հովհաննա Սիկիլիացու՝ Հայոց թա-
գուհու դստեր՝ Մարիամի հետ, որի նախնիները ևս սերված էին
Կոստանդին թագավորահոր տոհմից: Նույնիսկ Ներսես Պալիանեն-
ցը, որն առավել աչքի էր ընկնում իր լատինամետ շարադրանքով՝
«Հայոց իշխանների և թագավորների կարգում», լինելով Կոստան-
դին II-ի ժամանակակիցը, նշում է. «Կոստանդին, ազգական Լեւո-
նի, կեալ այժմ եւ թագաւորէ»:[236] Հետագայում Մ. Չամչյանցը նշել
էր. «թէ ըստ ոմանց Կոստանդինը Լեւոն հինգերորդի (իմա չորրոր-
դի) տոհմից էր»,[237] չենք կարող ասել, թե որ աղբյուրից օգտվելով է

[233] E. Dulaurier, p. 714.
[234] H. Pastermadjian, Histoire de L'Arménie, Paris, 1964, p. 218:
[235] Բռասն ընդունելով որ Կոստանդինը Հեթումյանների կողմնային ճյուղից է եղել, այնուամենայնիվ վերջինիս գահակալությունը համարում է անօրինական: Այդպիսի կարծիքի են նաև որոշ հայ հետազոտողներ, որոնց թվում՝ Եղիա Ներսիսյանը (տե՛ս Եղիա Ներսեսեան, Կոստանդին Գ-ի երկու թագուորինները, Բազմավէպ, 1998, թիւ 1–4, էջ 66, Ս. Պողոսյան, Կիլիկիայի Հայոց թագավորության անկման մասին, Բանբեր Երևանի համալսարանի, 1974, 1, էջ163):
[236] Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 206: Ներսես Պալիանենցի թողած ժամանակագրության մասին (տե՛ս. Յ.Հ. Վարդանյան, Ներսես Պալիանենցին վերագրվող ժամանակագրական մի ցանկի մասին, Պատմա-Բանասիրական հանդես, 1980, թիվ 3, էջ 189–202):
[237] Մ. Չամչեանց, էջ 349:



Մ. Չամչյանցը այս տեսակետը նշել, սակայն, կարելի է պնդել, որ
այդ կարծիքը հիմնված է եղել նախորդ արքայատոհմի հետ Կոս-
տանդին Նղրեցու ազգակցական կապի վրա:

Ազգակցական-խնամիական կապերով Նղրեցիների տոհմը
կապված էր նաև Լուզինյանների հետ: Մարաջախտ Բալդուինի
մայրը՝ Կոստանդին Նղրեցու կինը, Կիպրոսի արքա Հուգո III-ի
դուստրն էր: Փաստորեն Կոստանդին II Նղրեցին Կիպրոսի արքայի
ծոռն էր, Գի Լուզինյանի հոր՝ Ամորի Լուզինյանի հորաքրոջ թոռը:[238]
Օշին պայլի սպանությունից հետո, երբ Կիլիկիա են վերադառնում
Ջիվան և Բոհեմունդ իշխանները, Լևոն IV-ը Բալդուինի աղջկան՝
Կոստանդին II Նղրեցու քրոջը, ամուսնացնում է Բոհեմունդ Լուզին-
յանի հետ: Բոհեմունդի հետ ամուսնացողը պետք է Ալիծը լիներ
(ծնված 1312 թ.),[239] քանզի Կոստանդինի երկրորդ քույրը՝ Ֆիմին
(ծնված 1326 թ.), այդ ժամանակ դեռ երեխա էր: Այսպիսով, ինչպես
տեսնում ենք, Կոստանդին Նղրեցին թե՛ հայրական, և թե մայրա-
կան կողմերով սերում էր նախորդ արքայատոհմի՝ Հեթումյանների
կողմնային ճյուղերից, ավելին՝ խնամիական կապերով նրա ընտա-
նիքը կապված էր ինչպես Հեթումյանների Կոռիկոսյան ճյուղի, այն-
պես էլ՝ Լուզինյանների հետ:

Աղբյուրների համադրմամբ կարելի է եզրակացնել, որ Կոս-
տանդին Նղրեցին 1344 թ. դրությամբ Հայոց գահի նկատմամբ հա-
վակնություններ ունեցող անձանցից ամենալուրջ օրինական իրա-
վունքներն ուներ հայկական միջավայրում: Կոստանդինի հայրը՝
Բալդուին Նղրեցին, ինչպես արդեն վերը նշեցինք, զբաղեցնում էր
թագավորության մարաջախտի պաշտոնը: Բալդուինը Նղրի առա-
ջին տեր՝ Կոստանդինի երրորդ որդին էր: Եղբայրներից ավագը՝
Վասակը, մահացել էր երիտասարդ տարիքում՝ 1328 թ.: Տոհմի հա-
Նղրեցու ավագ որդի Հեթումը, որը զբաղեցնում էր արքունի

[238] Rüdt Collenberg, տախտակ III, h 2.
[239] Միսուան, էջ 413:

ջամբռլայի (հանդերձապետի) պաշտոնը:[240] Փաստորեն, Կոստանդին I Նղրեցու զավակները 1320 թ. Օշին թագավորի մահից հետո, Օշին պայլի և Կոստանդին Գունդստաբլի հետ միասին, կազմում էին մանկահասակ Լևոն IV -ի խնամակալական խորհուրդը, որը վկայում է նրանց ազդեցության մասին:

Փոքր շեղվելով նշենք, որ մանկահասակ Լևոն IV-ի խնամակալությունն իրականացվում էր Հեթումյան տոհմի կողմնային ճյուղերի ներկայացուցիչների կողմից: Կոռիկոսյան իշխանների սպանությունից հետո անգամ Նղրեցի եղբայրները շարունակեցին իրենց պաշտոնավարումը: Բալդուին Նղրեցին մահացավ 1336 թ. դեկտեմբերի 12-ին Եգիպտոսում՝ բանտում:

Ղ. Ալիշանը կարծում է, որ Բալդուին Նղրեցին 1335–1336 թթ. եղել է նաև պետության պայլ, ընդ որում, ոչ թե դասական թագավորահայր իմաստով, այլ՝ որպես հազարապետ, չնայած, հավանական է, որ նրան այն շնորհվել էր՝ որպես պատվատիտղոս:[241]

Բավական մեծ է եղել արքունիքում Բալդուին Մարաջախտի հեղինակությունն ու ազդեցությունը: Նրան է պատկանել Բարձրբերդն իր շրջակայքով: Օշին պայլի սպանությունից հետո վերջինիս կալվածքների մի մասը նույնպես նրան են անցել: Ղ. Ալիշանը, չնշելով աղբյուրը, գրում է, որ Բալդուինը բնակվում էր Տարսոնում, որտեղ գտնվում էր իր տունը և ուր կառուցել էր Առաքելոց տաճարը: Պետք է նշել, որ Տարսոնը՝ իբրև խոշոր քաղաք, Հեթումյանների օրոք գտնվել է արքայական ընտանիքի ձեռքում: Այդպես էր XIV դարի սկզբին, երբ Տարսոնի տեր է հիշատակվում արքաեղբայր Ալինախը:[242] Կարծում ենք, որ Բալդուինը Լևոն IV-ի օրոք ընկալվել է որպես Հեթումյան ընտանիքի անդամ:

Ինչևիցե, Բալդուին Նղրեցին եղբոր հետ (որն իրենից վաղ մահացավ) Լևոն IV-ի արքունիքում որոշ հակակշիռ էր ստեղծում Լուզինյանների ազդեցության դեմ, և միայն նրա մահից հետո Լուզինյան եղբայրներին հաջողվեց լիովին տիրապետող դիրք գրավել արքունիքում:

Այսպիսով, կարելի է պնդել, որ Կոստանդին Նղրեցին, որպես գահի թեկնածու, ուներ բոլոր իրավունքները թագի նկատմամբ:[243] Ըստ Սմբատ Գունդստաբլի «Դատաստանագրքի»[244] շատ ավելի մեծ իրավունք կարելի էր վերապահել Նղրեցիներին՝ տիրելու Հայոց գահին, քան՝ Լուզինյաններին: Երկրորդ՝ Նղրեցիների տոհմը ժամանակաշրջանի ամենաազդեցիկ հայկական իշխանական ընտանիքն էր: Կոստանդին Նղրեցին օրինական հիմունքներով ընտրվել էր Հայոց թագավոր, քանզի նրան այդ պաշտոնում էին ընտրել Հայոց պարոնները:

Լուզինյան եղբայրների սպանությունը, սակայն, կարող էր հայպապական հարաբերություններում իր անբարենպաստ հետևանքները բերել Հայոց արքունիքի համար: Ուստի, պատահական չէ Կոստանդին II-ի զգուշավոր և հաշվենկատ քաղաքականությունը պապական աթոռի հանդեպ: Գին մահից մի քանի ամիս առաջ Հովհաննես Կրակեցի եպիսկոպոսին երկու ասպետների ուղեկցությամբ ուղարկել էր Ավինյոն՝ 1343 թ. Սսի ժողովի որոշումները պապին տալու և պապական կուրիայից ու արևմտյան երկրներից օգնություն ստանալու ակնկալիքով: Ավինյոնում դեսպաններին է հասնում Գի թագավորի սպանության լուրը և բնականաբար, ինչպես և պետք է սպասվեր, այդ նորությունը տխրեցնում է պապին, որի համար Կիլիկիան պապական քաղաքական ու տնտեսական դաշտ բերելու ամենահարմար թեկնածուն հենց Գին էր: Սա-

---

[240] Սիսուան, էջ 412:

[241] Նույն տեղում, էջ 484:

[242] Recueil des Historiens , p. 83. Ընդ որում, Ալինախը, Տարսոնից բացի, տիրել է նաև Լամբրոնին ու Մուլիվոնին (տե՛ս նույն տեղում, էջ 84):



[243] Այդ առումով տեղին չէ Ն. Հըսլիի այն պնդումը, ըստ որի թե՛ Կոստանդին II-ը և թե Կոստանդին III-ը եղել են առանց գահի նկատմամբ իրավունքի պարզագույն բռնազավթիչներ (տե՛ս Norman Housley, The later crusades from Lions to Alcazar 1274–1580, New York, Oxford university press, 1992, p. 182) (այսուհետև՝ N. Housley, The later crusades):

[244] Սմբատ, Դատաստանագիրք, էջ 16:

կայն պապ Կղեմես VI-ը կարողանում է արագ ու ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը: Նա փաստացիորեն ճանաչելով Կոստանդին Նղրեցուն՝ հայոց թագավոր, հետ է ուղարկում դեսպաններին՝ նրանց հետ իր երկու նվիրակներին՝ Անտոն Գաետացուն և Հովհաննես Կորոնացուն, նախկին պահանջներով, այն է՝ ընդունել կաթոլիկություն: Կոստանդինն իր հերթին զիջում է. Սսի 1345 թ. ժողովում համաձայնության որոշում է կայացվում «Հարյուրտասնյոթ մեղադրանքների» նկատմամբ:[245] Մ. Օրմանյանը, հիմնվելով Ղ. Ալիշանի տեղեկության վրա,[246] 1346 թ. օգոստոսի վերջով թվագրելով պապական նվիրակների այցը Կիլիկիա, կարծում է, որ «բաւական քննութիւնք եւ բանագնացութիւնք կատարուած են, մինչեւ այդ որոշումը, զոր ձեռք ձգած են Հայ պատգամաւորները...»:[247]

Կոստանդին II-ը կատարեց իր պատասխան քաղաքական «զիջումը», որն արտահայտվեց Ադանայի մի փոքրիկ մատուռից Գի և Բոհեմունդ Լուզինյանների աճյունների Տարսոնի Սուրբ Աստվածածին եկեղեցում վերաթաղումով:[248] Սա, անշուշտ, պապական նվիրակների ժամանումից առաջ ցուցադրական, քաղաքական գործողություն էր: Նվիրակների համար, ինչպես հաղորդում է Հ. Դարդելը, ճոխ ընդունելություն է կատարում «Եւ արքայ Կոստանդին եւ Կաթողիկոսն եւ եպիսկոպոսունք եւ իշխանք աշխարհին ընկալան մեծաշուք պատուով զնուիրակսն...»:[249]

Պապական նվիրակները Կիլիկիայում մնում են ութ ամիս, որի ընթացքում երկրի հոգևոր և աշխարհիկ իշխանության ամբողջ վերնախավը հավատարմության երդում է տալիս պապին, որը նույնիսկ, վավերացվում է ստորագրություններով ու կնիքներով:[250] Դեռևս 1346 թ., որպես Կոստանդին II-ի դեսպան, Ավինյոն է մեկ-

[245] Fr. Tournebize, p. 675, J. Morgan, p. 221.
[246] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 559:
[247] Մ. Օրմանեան, սյուն 1908:
[248] Դարդել, գլ. ԼՁ , էջ 44:
[249] Նույն տեղում, էջ 45:
[250] Նույն տեղում, գլ. ԼԷ, էջ 45:



նում ասպետ Կոստանդին Կարսիլլին, որը տանում է 1345 թ. ժողովի որոշումը և ռազմական օգնություն է խնդրում: Ըստ երևույթին այս պատվիրակությունը մեկնում է այն ժամանակ, երբ պապական նվիրակները դեռևս գտնվում էին Կիլիկիայում: Կարսիլլիի ուղևորությունը պայմանավորված էր նաև 1346 թ. կարամանցիների և մամլուքների սպասվող արշավանքով:[251] Ահա այդ այցի արդյունքում էլ պապը համաձայնվում է տասներկու հազար ոսկի և հազար ձիավոր տրամադրել Կոստանդին II-ին՝ թագավորության պաշտպանությունը կազմակերպելու համար,[252] որը, սակայն, ինչ ինչ պատճառներով չի իրականանում: 1347 թ. Կոստանդինը նամակագրական կապ է հաստատում նաև Վենետիկի դոժի հետ:

Այսպիսով, Կոստանդին Նղրեցուն հաջողվում է երկու տարում հասնել Հռոմի պապի կողմից պետական հեղաշրջման արդյունքի ճանաչմանը, ինչը նշանակում էր Կոստանդին II-ի իրավունքների ճանաչումը հռոմեադավան Եվրոպայի կողմից: Կոստանդինին հաջողվում է նաև 1349 թ. հասնել նրան, որ ասորական Հակոբիկ եկեղեցու Սսի նորընտիր պատրիարք Բարսեղը հռչակվում է նաև ասորական նույն եկեղեցու Անտիոքի և Ասորիքի պատրիարք,[253] որն այդ եկեղեցու բարձրագույն աստիճանն էր: Եվ բնական է, որ Բարսեղը պետք է լիովին գտնվեր Հայոց թագավորի ազդեցության տակ: Այս քայլով Կոստանդինը փորձում է իր ազդեցությունը տարածել Մերձավոր Արևելքի հակոբիկ ասորիների ստվարածավալ համայնքի վրա:

Ձգտելով ամրապնդել իր դիրքերն արտաքին ճակատում, նոր թագակիրը պետք է ձգտեր նաև ամրապնդել իր իշխանությունը երկրի ներսում, որտեղ նրա համար առաջին խոչընդոտը լինելու էր նախորդ արքայատոհմի ներկայացուցիչների չեզոքացումը կիլիկ-

[251] Boase, p. 129:
[252] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 559, Fr. Tournebize, p. 678.
[253] Լ. Տէր-Պետրոսեան, Ասորիների դերը Հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում, Բազմավէպ, 1987, թիւ 1–4, էջ 129:

յան քաղաքական ասպարեզից: Գի Լուզինյանից մնացել էին երկու դուստր (հայտնի չէ, թե նրա կինը կենդանի էր այդ ժամանակ, թե՝ ոչ), որոնք չէին կարող վտանգ ներկայացնել Կոստանդին II-ի համար, իսկ Ջիվան Լուզինյանից մնացել էին երկու որդիներ: Ինչպես նշում է Ժ. Դարդելը, Կոստանդինը թագադրվելուց հետո սեփականացրեց Ջիվան Լուզինյանի տիկնոջ՝ Սուլթանի ունեցվածքը և կալվածքները, ապա նրան և երկու որդիներին՝ վեցամյա Բոհեմունդին և երկամյա Լեւոնին արգելափակեց Կոռիկոսի կղզու բերդում:

Երկու երեխաներ էին մնացել Ամորի և Զաբել Լուզինյանների արական սերունդներից (համենայն դեպս մեզ հայտնի), որոնք կարող էին ապագայում տհաճություններ պատճառել Կոստանդինին և նրա ժառանգներին: Սակայն, Ժ. Դարդելի կողմից ներկայացված Ջիվան Լուզինյանի ընտանիքին ոչնչացնելու անհաջող փորձերը, ապա նրանց փախուստը, փոքր ինչ անհավանական բնույթ են կրում: Եթե Կոստանդինը ցանկություն ունենար ոչնչացնելու նրանց արքայական բանտում (ամենայն հավանականությամբ, Կոռիկոսը Բոհեմունդ Լուզինյանի մահից հետո հարքունիս էր բռնագրավվել, քանզի այլևս ոչ մի հիշատակություն չկա Կոռիկոսի մասին, որպես ժառանգական կալվածքի), ապա դա դժվար չէր լինի իրագործել: Ըստ երևույթին, Կոստանդինը բավարարվել է նրանց այստեղ բանտարկելով, որը սակայն այնքան էլ երկար չի տևել: Միայն իշխանուհի Սուլթանի և նրա որդիների Կիպրոս փախուստից հետո է հավանական, որ Կոստանդինը փորձած լիներ նրանց ֆիզիկապես ոչնչացնել:[254]

Կիլիկիայի Հայոց պետության դեռևս XIII դարի պատմությունից հայտնի են արքայական տոհմին պատկանած անձանց արգելափակումը, որտեղից նրանք, հիմնականում, այլևս դուրս չէին գալիս, ինչպես օրինակ՝ գահաժառանգ Ռուբեն-Ռայմունդը և Ֆիլիպ թագավորը՝ XIII դարի առաջին քառորդին, Զաբել Լուզինյանը իր

[254] Դարդել, գլ. ԽԴ, էջ 55–56: Բակուրանը Սուլթանի և նրա որդիների փախուստը թվագրում է 1348 թ. (տե՛ս Բակուրան, Կիպրոս կղզի, էջ 118):



երկու որդիների հետ՝ XIV դարի առաջին քառորդին: Ուստի, շատ բնական կարելի է համարել Սուլթանի և իր զավակների բանտարկումը, իսկ բանտում սպանության անհաջող փորձերը Ժ. Դարդելի չափազանցությունն է: Ինչ վերաբերում է Կոռիկոսում նրանց բանտարկելուն, ապա դա ապացուցում է Կիլիկիայի ծովափնյա շրջանների վրա Կոստանդին II-ի կայուն իշխանության մասին: Սակայն Կոռիկոսում բանտարկված լինելու փաստն էլ օգնում է Սուլթանին՝ փախչելու Կիպրոս որն անշուշտ, կատարվել էր ոչ առանց Կիպրոսի թագավոր Հուգո IV-ի գործուն միջամտության: Ե՛վ Սուլթանի, և՛ իր զավակների Կիպրոսում գտնված ժամանակ է, որ հավանական ու օրինաչափ կլիներ Կոստանդին II-ի կազմակերպած մահափորձը, քանզի Ջիվանի մանկահասակ զավակները կարող էին դառնալ քաղաքական խաղաքարտեր Հուգո IV-ի ձեռքին, որն անշուշտ իր կողմնակիցներն (Լուզինյանների կողմնակիցները) ուներ Կիլիկիայում:

Կոստանդին II-ին գահակալման չափազանց ծանր ժամանակաշրջան էր բաժին հասել: Պետության կենսունակության կարևորագույն բաղադրիչները XIII դարում մոնղոլների ու լատինների իրական ներկայությունն էին տարածաշրջանում, որը սակայն այժմ արդեն գոյություն չուներ: Մոնղոլական հովանավորությունից Կիլիկայի Հայոց թագավորությունը զրկվել էր XIV դարի առաջին քառորդին, որն էլ հետագա տիրակալների համար պատճառ դարձավ պետության գոյության փրկուղի ընտրել հռոմեադավան Եվրոպան: Մամլուքյան զորեղացած սուլթանության դեմ պայքարում Եվրոպան հայ գահակալների կարծիքով (Օշին, Լևոն IV, Գի), այն այլընտրանքն էր, որի շնորհիվ հնարավոր կլիներ շարունակել պետության գոյությունը: Սակայն, եվրոպական քաղաքական ներկայությունը տարածաշրջանում աստիճանաբար նվազում էր: XIV դարի 40-ական թթ. դրությամբ քրիստոնյա պետությունների ցանկն Արևելյան Միջերկրածովյան ավազանում, սահմանափակվում էր Կիպրոսի թագավորությամբ, Հռոդոսում գտնվող հիվանդախնամ-

ների միաբանության իշխանությամբ և Կիլիկիայի հայկական թագավորությամբ: Եվրոպական պետություններն աստիճանաբար սկսում էին կորցնել իրենց նախկին տնտեսական և քաղաքական հետաքրքրությունները Կիլիկիայի նկատմամբ: Դրա արտահայտություններից էր 1345 թ. մամլուքների և վենետիկյան հանրապետության միջև կնքված համաձայնագիրը՝ Ալեքսանդրիայի ու Վենետիկի միջև կանոնավոր ծովագնացության վերաբերյալ: Այսպիսով, չնայած Այասն արդեն մամլուքներինն էր, այնուամենայնիվ, նրանք նախընտրեցին եվրոպայի հետ ծովային առևտուրը կատարել Եգիպտոսի տարածքով:[255]

Բնականաբար, ստեղծված նոր քաղաքական իրավիճակը պահանջում՝ էրերկրի արտաքին քաղաքականության մեջ նոր մոտեցումներ: Կոստանդին II Նղրեցուն հաջողվեց առավելագույնս օգտագործել թուլացած եվրոպական գործոնը, ընդ որում, ավելին, քան XIV դարում իշխած իր նախորդներից որևէ մեկը: Սակայն, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, Կոստանդին Նղրեցին կարող էր միայն երկարաձգել պետականության գոյությունը:

Գահակալման արդեն երկրորդ տարում Կոստանդին II-ը երկրի պաշտպանության հարցում հանդիպում է լուրջ դժվարությունների: 1346 թ. ապրիլին կարամանցի թուրքմենները Կիլիկիայի հյուսիսարևելյան շրջանում նոր հարձակում են կազմակերպում: Այս անգամ արդեն նրանց արշավանքը կրում է ոչ թե կողոպտչական, այլ՝ նվաճողական բնույթ: Հարձակման նպատակը Կապանի բերդն էր, որը Հայոց պետության համար ռազմավարական մեծ նշանակություն ուներ, քանզի պաշտպանում էր Ջահանի հովտի լեռնանցքը: Բացի այդ, այն երկրի կենտրոնի՝ Սսի բնական թիկունքային ամրությունն էր: Կապանի բերդին թուրքմենները, ինչ-ինչ խարդավանքների միջոցով հեշտությամբ են տիրում և միայն գրավումից հետո են բախվում հայկական զորքերի հետ: Ահա թե ինչպես է

[255] Հ. Տէր-Ղեւոնդեան, Ոսկերչութիւնը Կիլիկեան Հայաստանի մէջ, Բազմավէպ, 1991, 1–2, էջ 210:



նկարագրում արաբ պատմիչ Աբուլ Ֆիդայի Շարունակողը 1346 թ.
այդ արշավանքը. «Նույն տարվա վերջում (այսինքն՝ 1346 թ. ապ
րիլին – Դ.Թ.) թուրքմենները խաբեությամբ տիրեցին Կապանի բեր-
դին, որը Սսի երկրի ամենազորեղ բերդերից մեկն էր՝ Ռումի երկրին
սահմանակից: Այնտեղ գտնվող մարդկանց սպանեցին և գերի
վերցրեցին կանանց ու երեխաներին: Սսի նոր թագավորը (Կոս-
տանդին II – Դ.Թ.) փութաց փրկելու բերդը, բայց Իբն Դելղադերը
հանկարծակիորեն հարձակվեց հայերի վրա և շատերին սպանեց,
իսկ մնացածներին էլ՝ փախուստի մատնեց»:[256] Այստեղ սպանվում
է նաև Վասիլ Մարաջախտը:[257]

Փաստորեն, տեղի ունեցած ճակատամարտում Կոստանդին
II-ը պարտվում է, որը թուրքմենների զորավարի ռազմագիտական
հնարքի արդյունքն էր, քանզի նշվում է թուրքմենների հանկարծա-
կի հարձակումը Կոստանդինի բանակի վրա: Ինչևիցե, Կապանի
բերդի գրավումը ռազմավարական մեծ կորուստ էր Հայոց պե-
տության համար, ուստի և Կոստանդինը պետք է փորձեր ամեն
կերպ վերականգնել նախկին վիճակը: Նույն Աբուլ Ֆիդայի Շարու-
նակողը, բերդի առման շարադրումից հետո, մեջ է բերում երկխո-
սություն, որը որոշակի տեղեկություններ է պարունակում.

> ***«Սսի նոր տերը գոչեց, Կապանը կյանքիս արժեքն ունի. Մենք ասացինք նրան. ուրիշ բանի մասին խորհիր որովհետև հաղթանակները հաջորդելու են հաղթանակներին».***[258]

Փաստորեն, Կոստանդինը փորձել է բանակցություններ վարել
Կապանի վերադարձի վերաբերյալ, որը շատ դիպուկ բնութագրել է
արաբ հեղինակը՝ Կոստանդինին վերագրելով «Կապանը կյանքիս
արժեքն ունի» արտահայտությունը: Բերդը հետ վերադարձնելու

[256] Արաբական աղբյուրները, էջ 249:

[257] Ժամանակագրություն XI–XVIII դդ., տպագրության պատրաստեց Նորայր եպիսկոպոս Պողարյան, Բանբեր Մատենադարանի, 1969, թիվ 9, էջ 265:

[258] Արաբական աղբյուրները, էջ 249:

թուրքմենների մերժումը, այնուամենայնիվ, չկասեցրեց Կոստանդինին՝ ռազմավարական այդ կարևորագույն ամրությունը վերատիրելուց: Ինչպես հաղորդում է նույն հեղինակը, յոթ ամիս չանցած, օգտվելով թուրքմենների մոտ ծագած անհամաձայնություններից, 1346 թ. աշնանը Կոստանդին II-ը վերստին նվաճում է այն: Ընդ որում, Կապանն այն վերջին ամրություններից էր, որ մնաց հայկական իշխանական համակարգի ձեռքում՝ թագավորության անկումից դեռ շատ տարիներ անց:

Շարունակելով իրենց որդեգրած զավթողական քաղաքականությունը՝ 1347 թ. գարնանը մամլուքյան սուլթանության զորքերը, անցնելով սահմանային Ջահան գետը, ներխուժեցին Կիլիկիա: Այս անգամ, սակայն, Հռոմի պապի գործուն միջամտության շնորհիվ Կոստանդինը օգնություն է ստանում: Շուտով հայկական զորքերը, դաշնակցած Հռոդոսի հիվանդախնամների և Կիպրոսի թագավորի հետ, համատեղ ուժերով հետ են շպրտում նրանց և վերագրավում Այասը:[259] Այասի վերագրավման նպատակով պապն օգնության խնդրանքով դիմել էր նույնիսկ Վենետիկի դոժին:[260] Այսպիսով, Կոստանդինին հաջողվում է ոչ միայն հետ մղել մամլուքներին Ջահան գետի աջափնյակից, այլև՝ վերատիրել Ջահանի ողջ հովտին: Ընդ որում, այստեղ, առաջին անգամ որպես հայոց սպարապետ, հիշատակվում է Լիպարիտ Կապանցին:[261] Այասի վերագը րավումը, անշուշտ, շատ կարևոր իրադարձություն էր: Այդ փաստը միակն էր վերջին տասնամյակներում, երբ արևմտյան պետությունների օգնությամբ տեղի էր ունենում ռազմական համատեղ գործողություն:

Անշուշտ, Կոստանդին II-ը հասկանում էր, որ միայն տնտեսութ-

[259] Ըստ Վ. Քյուրքչյանի, Կոստանդինը գրավում է նաև Հայկական ծոցի արևելյան մասում գտնվող Ալեքսանդրետը (տե՛ս Վ. Քիւրքճեան, Հայկական Կիլիկիա, էջ 5): Բակուրանը 1346 թ. դիմաց նշում է 1500 այասցիների Ֆամագուստա փախուստի մասին, որն, ըստ երևույթին, նախորդել է Կոստանդինի արշավանքին (տե՛ս Բակուրան, էջ 117):

[260] V. Langlois, Essai Historique, p. 36.

[261] Մ. Չամչեանց, էջ 350:



յան զարգացմամբ հնարավոր կլիներ կանխել պետականության
կործանումը, որն առաջին հերթին կարող էր իրականանալ Այասի
վերագրավմամբ: Եվ Այասի վերագրավման ուղղությամբ կենտրոն-
նացված ուժերով և ուշադրությամբ կարելի է բացատրել պետութ-
յան արևմտյան ընդարձակ տարածքների կորուստը՝ նույն 1347 թ.:

Այնուամենայնիվ Կոստանդինին չհաջողվեց ամրապնդվել
Այասում: Անշուշտ, նա դեմ չէր լինի Այասը պահպանելու պայմա-
նով, բանակցություններ սկսել Հալեպի ամիրության հետ, սակայն
Այասի կորուստը, մամլուքների համար ևս, կարող էր հղի լինել
ծանր տնտեսական կորուստներով:

Ղ. Ալիշանը նշում է, որ ինքը չի կարող ասել, թե ինչքան տիրե-
ցին հայերը Այասին, սակայն, Աբուլ Ֆիդայի շարունակողը հայտ-
նում է, որ. «Հիջրի 748 թվականի մուհառամ ամսին (1347 թ. ապրիլ
13-մայիսի 12) հայերը հարձակումներ կատարեցին Այասի վրա
վնասներ հասցնելու նպատակով: Նրանց դեմ ելավ Այասի էմիրը՝
Հուսամադդին Մահմուդ Դավուդ ալ-Շայբանին, և հայերից սպան-
վեցին շատ մարդիկ և նրանցից բռնված գերիներն ու պետերը բեր-
վեցին Հալեբ՝ Մաշհուդի օրը...»:[262]

Այստեղ արաբ հեղինակը կողմնապահություն է արել և կեղծել
է շարադրանքը, քանզի դաշնակիցները (ոչ միայն հայերը) ոչ թե
վնասներ հասցնելու նպատակով են հայտնվել գետի ձախափըն-
յակում, այլ՝ Այասը վերատիրելու համար, ինչը նրանց հաջողվել է:
Իսկ Այասի վերանվաճումը մամլուքների կողմից, տեղի է ունեցել,
ըստ երևույթին, նույն տարում: Քանզի 1347 թ. վերջին և 1348 թ.
սկզբին Կարամանի ամիրության զորքերը հարձակվում են երկրի
արևմտյան շրջանների վրա, որի հետևանքով էլ հայերից գրավվում
է Պապեռոնը: Փաստորեն, կարամանցիներին հաջողվում է անցնել
բնական պատնեշ Տավրոսյան լեռնաշղթան և ամրապնդվել Տավ-
րոսի հակառակ կողմում՝ սեպի նման խրվելով Լամբրոնի և ծովա-

[262] Արաբական աղբյուրները, էջ 250:

յին շրջանների միջև: Հաղթանակը լիակատար դարձնելու և տարածաշրջանում լիովին ամրանալու համար կարամանցիները պետք է փորձեին գրավել նաև Լամբրոնը, որը, սակայն, նրանց չի հաջողվում, քանզի այդ ամրոցը մնում է հայերի իշխանության տակ, ընդհուպ մինչև 1376 թ.:[263]

Մամլուքների հարձակումը արևելքից և կարամանցի թուրքմեններինը՝ արևմուտքից, տեղի է ունեցել միաժամանակ՝ համաձայնեցված գործողությունների ընթացքում: Այսպիսով, Կոստանդին II-ի Ջահան գետի ծախափնյակին վերատիրելու առաջին ջանքերը ձախողվում են, որի արդյունքում պետությունը կորցնում է իր արևմտյան շրջանները և կարամանցիների կողմից ենթարկվում է ավերածությունների: Ահա թե ինչպես է նկարագրում ժամանակակից կիլիկեցի գրիչն այդ ամենը. «...Նայ ի ժամանակիս յայս, (1347 թ. ) յոր ի մեծ վիշտ կա երկիրս Կիլիկիոյ յանօրինաց, և ի մեծ նուազութիւն հասեալ, յոր եւ ի յերկրին ամենայն ոչ գոյ գեաւղ քան քաղաք միայն, որպես մեղուի, որ անցեալ են եւ ի տեղիս տեղիս ճիռ է մնացեալ »:[264]

1348 թ. չնայած Կիլիկիայի վրա խոշոր արշավանքներ տեղի չեն ունենում, սակայն երկրի բնակչության համար բավականին ծանր տարի էր: Այդ թվականին Կիլիկիայում մոլեգնում է մինչ այդ Միջերկրածովյան այլ երկրներում եղած ժանտախտի համաճարակը, որի հետևանքով միայն Սսում օրական մահանում էր մինչև 180 մարդ:[265] Սամուէլ Անեցու Շարունակողը նշում է, որ Հայոց աշխարհում երեք տարի անընդմեջ, սով եղավ և մահտարաժամ, «...անապատ արար զբազմամարդ երկիրս Հայոց եւ շատոց գերեզմանք փոր գազանացն եղեն, շատք անթաղ մնացին՝ եւ անծնունդ ժամա-

[263] ԺԳ դարի հիշատակարաններ, էջ 521:

[264] Նույն տեղում, էջ 355:

[265] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 559: Այս համաճարակը, որը հայտնի է «սև մահ» անվամբ սկիզբ առավ Արևելքում և ապա տարածվեց ողջ Եվրոպայում, խլելով բնակչության զգալի մասի կյանքը – Դ.Թ.:



ճակի»:[266] «Հայոց աշխարհի» ասելով պետք է ներառել նաև Կիլիկիան, որտեղ 1348 թ. սկսում է մոլեգնել ժանտախտի համաճարակը:

Ռազմական գործողությունների հետ միաժամանակ հայկական արքունիքը և կաթողիկոս Մխիթար Գռներցին (1341–1355 թթ.) շարունակում են պապի հետ բանակցել երկու եկեղեցիների միավորման հարցի շուրջ: 1345 թ. տեղի ունեցած Սսի եկեղեցական ժողովը հիմնականում, ընդունել էր պապական աթոռի առաջադրած «մեղադրանքները» և խոստացել էր ուղղել դրանք:[267] Ի փոխարեն, պապը խոստանում է ամեն տարի Կիպրոսի թեմից որոշակի գումար ու զինված ուժ տրամադրել, ինչպես նաև՝ կոչ անել եվրոպական վեհապետերին՝ խաչակրաց նոր արշավանք իրականացնելու:

Երկար սպասված խաչակրաց օգնությունը Կիլիկիան ստանում է միայն երկու անգամ: Առաջին անգամ 1347 թ., երբ Այասի կարճատև վերագրավման ժամանակ Կոստանդինին օգնում են Հռոդոսի հիվանդախնամների ջոկատները: Երկրորդ օգնությունը հայերը ստանում են 1349 թ., նույնպես Հռոդոսի հիվանդախնամ ասպետներից:

Միաժամանակ հարկ է նշել, որ Կոստանդին II-ին Հռոդոսի ասպետների օգնությունը պայմանավորված էր ոչ այնքան Հռոմի պապի հրամանով, որքան ասպետական միաբանության շահագրգռվածությամբ՝ ընդհանուր թշնամու դեմ պայքարելու և Այասի պես խոշոր առևտրատնտեսական կենտրոնին վերատիրելու ցանկությամբ:

1349 թ. տեղի ունեցավ հայ-մամլուքյան նոր բախում: Կոստանդին II-ը, օգնություն ստանալով Հռոդոսի ասպետներից, Կիլիկիա ներխուժած հակառակորդի զորքերին պարտության է մատնում, վերջին անգամ անցնում է Ջահան գետը և, ըստ Մ. Չամչյան-

[266] Սամուէլ Անեցի, էջ 169:

[267] Fr. Tournebize, p. 675.

ցի, հասնում Հայկական ծոցի արևելյան ափին գտնվող Ալեքսանդրետ քաղաքը՝ գրավելով այն:[268] Չնայած, այս տեղեկություններում ոչինչ չի նշվում Այասի մասին, բայց կարելի է հաստատապես պնդել, որ գրավելով Հայկական ծոցի արևելյան շրջանները, Կոստանդինը պետք է վերատիրած լիներ նաև Այասին՝ վերականգնելով մինչև 1337 թ. եղած Ամանոսյան լեռների գծով անցնող հայ-մամլուքյան սահմանը: Այս նվաճումը վերջինն էր և՛ Կիլիկիայի Հայոց թագավորության պատմության մեջ, և՛ կաթոլիկ եկեղեցու կողմից ռազմական աջակցության առումով:

Մամլուքների հաջորդ արշավանքը տեղի ունեցավ 1355 թ.: Այսպիսով, Ջահանի ծախափնյակը և հայկական ծոցի շրջանը հայկական իշխանության տակ մնում են մինչև 1355 թ., քանզի մամլուքների արշավանքների մասին այլ հիշատակություններ, մինչև 1355 թ., չկան և, բացի այդ, XIV դարի 40-ական թթ. երկրորդ կեսին Եգիպտոսում ընթանում էին գահակալական կռիվներ:[269] Դա էլ Կոստանդինի կարճատև հաջողության և ազատագրված շրջանները կարճ ժամանակով պահելու հիմնական պատճառներից մեկն էր:

1350–1355 թթ. Հայոց թագավորության համար համեմատաբար խաղաղ ժամանակաշրջան է եղել: Այդ շրջանում շարունակվում են հայ-եվրոպական (առավելապես հռոմեական եկեղեցու հետ) բանակցությունները՝ հայ եկեղեցու հնազանդության և զինական օժանդակության հարցերի շուրջ:[270] Որ երկիրը ժամանակավոր խաղաղության պայմաններում էր ապրում, երևում է 1351 թ. մի ձեռագրի հիշատակարանից, որտեղ գրիչ Կիրակոսը նշում է. «զի փախ{ուցեա}լ էաք յերկրէն Ախբակո, ի պատերազմէ այլազ-

[268] Մ. Չամչեանց, էջ 351:

[269] Г. Микаелян, стр. 465.

[270] 1351 թ. սեպտեմբերի 24-ին Կղեմես VI պապը հերթական անգամ նամակով դիմում է Կիպրոսի արքային, Հիվանդախնամների մեծ մագիստրոսին և Զմյուռնիայում պապական նավատորմի գլխավոր հրամանատարին Կոստանդին



գաց, ... եւ գրեցաք յերկիրս Լեւոնոյ...»:[271]

Բացի այդ, ոչ մի հիշատակություն չկա 1350–1355 թթ. տեղի ունեցած ռազմական ընդհարումների մասին, և դա էլ, թեկուզ փոքր չափով, մեղմել է նախորդ տասնամյակներում պետականության և ազգաբնակչության նյութական կորուստները: Սակայն, թագավորության խաղաղ շրջանը շատ կարճ տևեց: Հալեպի մամլուքյան կուսակալի զորքերը 1355 թ. հասնելով Տարսոն, ասպատակում են ողջ Դաշտային Կիլիկիան: Ըստ երևույթին, այս արշավանքին մասնակցել են նաև կարամանցի թուրքմենները, որոնք, դեռևս 1347 թ., տիրել էին Պապեռոնին: Վերջինիս դիրքը նպաստավոր էր Դիմադրության չհանդիպելու դեպքում Հալեպի ամիրությունը, որն արդեն վաղուց ձգտում էր հաստատվել Կիլիկիայի դաշտային շրջաններում, իրեն կպահեր նվաճված շրջանները, որը սակայն, առայժմ տեղի չունեցավ:

1357 թ. Կիլիկիան ցնցում է նոր արհավիրք՝ ժանտախտի համաճարակը, որը մասնավորապես մոլեգնում է Սսում:[272]

Մի քանի տարի անց միայն, Հալեպի ամիր Բեկթեմուրը ներխուժում է Դաշտային Կիլիկիա և վերջնականապես նրա խոշոր քաղաքներով հանդերձ՝ Տարսոն, Ադանա, Մսիս նվաճում այն:[273] «Ի թուին ՊԹ (1360 թ.), ի յամսեանն ի մայիսի երեկ Հալպայ ամիրայն Պայտամուրն Մսրայ զօրօքն ի Հայք, նայ տուին զԱտանայ եւ զՏարսոն ու զԲարի-Քարուկն ու գտղայ Լեւոնին»:[274]

Արաբ պատմիչ Մաքրիզին մի փոքր այլ կերպ է նկարագրում այդ քաղաքների նվաճումը. «Սուլթան Ապուլ Մաալի Հասան Պին Մուհամմէտ Գալաուն Հիջրի 760 թվին (1358 թ.) գնաց արշաւելու

II-ին օգնության հասնելու համար (տե՛ս Boase, p. 130).

[271] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 389:

[272] Միսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 560:

[273] Կարծիք կա նաև, որ Ադանան գրավվել է 1357 թ. (տե՛ս Revue des etudes Armenienne, 1999, t. 3, special, La Cilicie 1909–1921, Des Massacres d'Adana, p. 27).

[274] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 451:

Սիս: Ապահովութեամբ գրաւեց Ատանան: Առաւ նաեւ Թարսուս, Միսիս եւ ուրիշ քանի մը քաղաքներ, որոնց վրայ փոխարքաներ կարգեց»:[275] Կարծում ենք, որ իրականում երկու արշավանքներ են տեղի ունեցել, քանզի Մաքրիզին չէր կարող սխալվել և՛ թվականի, և՛ արշավող բանակի հրամանատարության հարցերում: 1358 թ. սուլթանի կողմից նվաճված շրջանները հիմնավորապես մամլուքներին են անցել միայն երկրորդ արշավանքի ժամանակ, որոնք, ըստ երևույթին, Կոստանդինը հետ էր վերադարձրել 1358–1359 թթ., սուլթանի հեռանալուց հետո: Ռ. Գրուսսեն, ինչպես և Ֆ. Տուրնեբիզը, 1360 թ. արշավանքը թվագրում են 1359 թ-ով, որը ոչ մի աղբյուրով հիմնավորված չէ:[276]

Հ. Դարդելը, որը սովորաբար տեղեկությունները հաղորդում է հուզականորեն և հաճախ չի հիշատակում թվականները, ըստ երևույթին, նկատի է ունեցել 1360 թ. մամլուքյան արշավանքի հետևանքները, երբ նշում է թե «...Կռեալ (Կոստանդին II-ը) դաշինս ընդ սուլթանին Բաբելոնի հատոյց նմա տուրս հարկաց ամ ըստ ամէ եւ էարկ զանձն իւր եւ զպետութիւն ընդ լծով անհաւատից եւ ելիք եթող յօժարակամ ի ձեռս սուլթանին Բաբելոնի զքաղաքսն Տարսոնի եւ զԱդանայ և զամուրն Կոռիկոսի»:[277]

Կոստանդին II-ը, փաստորեն, 1360 թ. հարկադրված է եղել, այլ ոչ թե՝ հոժարակամ, ինչպես նշում է Հ. Դարդելը, մամլուքյան սուլթանությանը զիջել ողջ Դաշտային Կիլիկիան և ընդունել սուլթանի գերակայությունը:

Ինչ վերաբերում է Կոռիկոսին, ապա միայն Հ. Դարդելն է հիշատակում Կոռիկոսը ևս մամլուքներին հանձնելու փաստը: Կոռիկոսի բերդը 1361 թ., լքվելով Կոստանդին II-ի կողմից, հարձակումների է ենթարկվել կարամանցի թուրքմենների կողմից: Ամրոցի բնակիչնե-

[275] Գ. Սրսրլեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մեջ, Գահիրէ, 1947, էջ 136, թարգմանված Մագրիզիի «Էլ խիթաթ» աշխատությունից, հ. Դ, էջ 102:
[276] Fr. Tournebize, p. 698, Grousset, p. 403.
[277] Դարդել, գլ. ԽԱ, էջ 52:



րը ստիպված են լինում 1367 թ. ձմռանը հրավիրել Կիպրոսի արքա Պետրոս I-ին՝ (1359–1369 թթ.) տիրելու Կոռիկոսին: Իր հերթին Կիպրոսի արքան ըստ ժամանակակից Գիյոմ դը Մաշոյի, հանձնարարում է եղբորը՝ Անտիոքի դքսին, իր պաշտպանության տակ առնել ամրոցը:[278] Բացառված չէ նաև Պետրոս I-ի սեփական նախաձեռնությունը՝ Կոռիկոսի պես կարևորագույն ստրատեգիական ամրության տիրելու հարցում:

Կոստանդին II-ի կառավարման սկզբնական շրջանում հարաբերությունները պապական արքունիքի հետ ընդհանրապես, և զիջումները դավանաբանական հարցերում մասնավորապես, տվեցին իրենց որոշակի արդյունքները՝ ի դեմս Հռոդոսի և Կիպրոսի ռազմական օժանդակության: Սակայն,Կոստանդինի կառավարման երկրորդ շրջանում՝ մասնավորապես 1355–1360 թթ., մենք այլևս չենք հանդիպում եվրոպական զինակցության որևէ դրսևորման:

Կոստանդինը և նոր կաթողիկոս Մեսրոպ Արտազեցին (1359–1372 թթ.), հետևություններ անելով այդ ամենից, և չենք բացառում նաև, որ մամլուքյան սուլթանության պահանջով, 1361 թ. Սսում հրավիրեցին եկեղեցական նոր ժողով, որը չեղյալ հայտարարեց միանախորդ եկեղեցական ժողովներում կաթոլիկ եկեղեցու հետ միավորման և զիջումների մասին բոլոր որոշումները:[279] Այս քայլը կրում էր և՛ հարկադիր բնույթ, և՛ արտաքին քաղաքականության ուղղության փոփոխություն, որն արդեն էական ոչինչ չէր կարող փոխել ստեղծված քաղաքական բարդ պայմաններում: Ինչ վերաբերում է եվրոպական հնարավոր խաչակրաց արշավանքին, ապա այժմ արդեն դրա համար ոչ մի նախադրյալ չկար: Անգլիան և

[278] La prise d'Alexandrie ou Chronique du roi Pierre Ier de Lusignan par Guillaume de Machaut, publiee pour la premiere fois pour la societe de L'Orient Latin par M.L. de Mas Latrie, Genève, imprimerie Jules-Guillaume Fick 1877, p. 135 (այսուհետև՝ Guillaume de Machaut ).
[279] Seta B. Dadoyan, p. 46, Fr. Tournebize, p. 697.

Ֆրանսիան զբաղված էին միմյանց դեմ պատերազմելով, իսկ Հռոմի պապը սեփական ռազմական ուժերից զուրկ էր: Ինչ վերաբերում է իտալական ծովային հանրապետություններին՝ Վենետիկին և Ջենովային, ապա նրանք ավելի էին ընդարձակում իրենց առևտրական գործունեությունն Արևելքում և անօգուտ խաչակրաց արշավանքների կարիք չունեին:[280] Կիլիկիայի Հայոց թագավորությանը, որը պարփակվել էր Լեռնային Կիլիկիայի շրջաններով, մնում էր հավասարակշիռ քաղաքականության միջոցով, պահպանել եղածը: Սսի ժողովի որոշումները, գլխավորապես, այդ նպատակով են կայացվել:

Կոստանդին II Նղրեցին մահացավ 1362 թ. դեկտեմբերի 21-ին[281] մոտ հիսուն տարեկանում: Նա մեր պատմության առավել նվազ ուշադրության արժանացած գահակալներից է, որին բաժին էր հասել պատմական ծանրագույն ժամանակահատված: Կոստանդին II-ը, ունենալով դիվանագիտական և ռազմական նվազ կարողություններ, այդուամենայնիվ կարողացավ որոշակի հաջողությունների հասնել՝ հայոց պետականության գոյությունը ևս մի քանի տասնամյակով երկարաձգելով:[282] Եվ զուր չէ, որ դեռևս 1353 թ. գրիչ Մկրտիչը հետևյալ տողերով է հիշատակում Կոստանդին II-ին.

*«Սուրբ թագաւորն Կոստանդին,*
*Աչովն աւծեալ անեղին»:*[283]

[280] B. Spuler, part II, p. 59, Dedeyan, p. 321.

[281] Rüdt Collenberg, տախտակ III, h 2, p. 22.

[282] Բյուզանդիայի կործանմանը նախորդած ամբողջ հարյուրամյակի ընթացքում Բյուզանդական կայսրությունը ներքին և արտաքին քաղաքական անբարենպաստ պայմաններում «զարմանալի կայունության» ֆենոմեն դրսևորեց (տե՛ս Ե. Ջաղացպանյան, Բյուզանդագետների գիտաժողովը, Պատմա-բանասիրական հանդես, 1988, թիվ 2, էջ 16): Կարծում ենք այս միտքը տեղին է օգտագործել նաև XIV դարում Կիլիկիայի Հայոց պետականության կապակցությամբ:

[283] Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Բայազետի, Կազմեց Հրաչեայ Յ. Աճառեան, Վիեննա, 1924, էջ 61:



## 2.3. Կիլիկիո Հայոց թագավորությունը 1363–1373 թթ.

Կոստանդին II-ի մահով Կիլիկիայի Հայոց թագավորության
առջև նորից կանգնեց գահաժառանգության հարցը: Ղ. Ալիշանը,
մեջբերելով Կիլիկիո անանուն ժամանակագրին, նշում է, որ Կոս-
տանդին II-ի որդիները մահացել են բավականին վաղ հասակում՝
1356–1357 թթ.[284] «...զի թէպէտ եւ էին նորա որդիք բազումք, այլ
մեռան նոքա ի մէջ աւուրց քանից»:[285] Մարիուն թագուհու (Կոս-
տանդին II-ի մոր) պատվիրած Ավետարանում, որն ընդօրինակվել է
1346 թ., նշվում է Կոստանդինի երեք որդիների մասին. «...Քրիս-
տոս աւրհնեսցէ զմեր Հայոց թագաւորս Կոստանդիանոս եւ ընդ եր-
կայն աւուրս արասցէ եւ պահեսցէ յերևելի եւ յաներևոյթ թշնա-
մեաց եւ զաստուածատուր որդիսն իւր զպարոն Աւշին եւ պարոն
Լեւոն եւ զպարոն Հեթում...եւ զսիրելի եղբայր թագաւորին զպա-
րոն Սմբատ Գունդստապլ Հայոց ընդ երկայն աւուրս արասցէ»:[286]

Հայ պատմագիտության մեջ 1365 թվականը սովորաբար հա-
մարվում է Կոստանդին III թագավորի գահակալության սկիզբը,[287]
սակայն, անհայտ է մնում 1363–1365 թթ. իշխանության հարցը,
քանզի Կոստանդին II-ը մահացել է 1362 թ. վերջին:[288] Հիշատա-
կություն կա, որ Կոստանդինի մահից հետո մեկ տարի թագավորել
կամ թագապահ է եղել նրա այրին՝ Մարիամ թագուհին:[289] Ներսես
Պալիանենցի ցանկում ևս Մարիամը հիշատակվում է, որպես միա-

[284] Սիսուան, էջ 543:

[285] Դարդել, գլ. ԽՁ, էջ 58 (տե՛ս նաև Recueil des historiens, p. 707):

[286] Մեսրոպ եպիսկոպոս Տէր-Մովսիսեան, Հայկական մանրանկարներ, Կիլիկեան Հայոց թագաւորների եւ Կոստանդին Ա կաթողիկոսի համար գրուած ձեռագրեր, Ազգագրական հանդէս, 1913, էջ 81:

[287] Ս. Բոռնազյանը գտնում է, որ գահը 1363–1365 թթ. թափուր է մնացել (տե՛ս Ս. Բոռնազյան, Կիլիկյան Հայկական թագավորության գոյամարտը XIV դարում և անկումը, Հայ ժողովրդի պատմություն, հ. III, էջ 780):

[288] Սիսուան, էջ 544:

[289] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 198:

պետ. «Մարիուն թագուհի՝ ամս Ա»:[290]

Ղ. Ալիշանը մեջ է բերել այսպես կոչված, «Կիլիկիո ժամանակագրի» հեղինակած Հայոց թագավորների ցուցակը, որտեղ անհայտ ժամանակագիրը Կոստանդին II Նղրեցու մահվան թվական է նշում 1356\1357 թ-ը. «Եղեւ մահտարաժամ ի Սիս, եւ մեռաւ Կոստանդին թագաւորն յետ 12 ամի տիրելոյն, եւ թաղեցաւ ի Սիս»:[291] Այնուհետև, նույն ժամանակագիրը շարունակում է. «Եւ եդին թագաւոր զՊարոն Հեթմոյ որդին զմիւս Կոստանդին, ի ՊԺԳ (1364–65 թթ.), որ ոչ մնաց իւր ցեղ»:[292] Մեկ այլ ժամանակագրության մեջ հիշատակվում է, որ Կոստանդինը թագավորեց 11 տարի, մինչև 1355 թ.:[293]

Այսպիսով, Կիլիկիո ժամանակագիրը հիշատակում է թագավորության գահն ութ տարի թափուր մնալու փաստը: Այստեղ էականը Կոստանդին II-ի մահվան թվականը չէ, քանզի Կոստանդինը 1356 թ. դեռ չէր մահացել: Էականը գահի թափուր լինելու փաստն է: Ցավոք, Ղ. Ալիշանը չի նշում այդ ժամանակագրի ո՛չ անունը, ո՛չ էլ ապրած ժամանակաշրջանը: Հավանաբար, նա ավելի ուշ շրջանի (գուցե XV–XVI դդ.) հեղինակ է, որը 1363–1365 թթ. անկայուն քաղաքական իրավիճակը սխալմամբ վերագրել է 1356–1365 թթ.: Կոստանդին II Նղրեցին Մարիամ թագուհուց արական ժառանգներ չէր թողել, և բնական է, որ այս անգամ ևս հարցը պետք է վճռվեր ընդունված կարգով, այսինքն՝ իշխանական ժողովի որոշմամբ:

XIV դարի 40-ական թվականների երկրորդ կեսից Կիպրոսի արքունիքում էին գտնվում Զիվան Լուզինյանի կինն իր երկու որդիների՝ Բոհեմունդի (1338–1363 թթ.) և Լևոնի (1342–1393 թթ .) հետ:[294]

[290] Մանր ժամանակագրություններ, հ. II, էջ 207:
[291] Սիսուան, էջ 543:
[292] Նույն տեղում:
[293] Ժամանակագրություն XI–XVIII դդ., էջ 265:
[294] Այս շրջանում Կիպրոսում ապրում էր ստվար հայ ազգաբնակչություն, որտեղ



Բոհեմունդն, այսպես կոչված լատինական կուսակցության կողմից, համարվում էր Հայոց գահի օրինական ժառանգորդը: Հ. Դարդելը նշում է, որ. «Եւ զի իշխանք (աշխարհին Հայոց) գրեալ էին առ նա զի արձակեսցէ առ նոսա զիշխանն Բոհեմունդ Լուսինեան, զանդրանիկ որդի Սուլթան տիկնոջ, եւ առ նա ինքն Բոհեմունդ գիր աղաչանց իբրեւ առ բնիկ իւրեանց իշխան, զի եկեալ իշխեսցէ նոցա…»:[295] Ապա նա հաղորդում է, որ Կիպրոսի արքա Պետրոսը երիտասարդ Բոհեմունդի հետ մեկնում է Իտալիա՝ ուր այդ ժամանակ Ավինյոնից Հռոմ էր տեղափոխվել Ուրբանոս V-պապը (1362–1370 թթ.): Ուղևորության նպատակը պապից Բոհեմունդի համար Հայոց թագի իրավունքի հաստատումն էր: Սակայն Բոհեմունդն անսպասելիորեն 1363 թ. հոկտեմբերին՝ Վենետիկում մահանում է: Այստեղ էլ պապը կոչ է անում Պետրոսին և անգլիական գերությունից նոր վերադարձած Ֆրանսիայի արքա Հովհանն Բարիին (1350–1364 թթ.) մինչ Սուրբ երկրի ազատագրումը օգնել մահլուքյան վտանգի տակ գտնվող Հայոց թագավորությանը:[296] Սակայն այս կոչին Հովհանը ոչնչով չէր կարող օգնել, իսկ Պետրոսի համար դա ևս մեկ հարմար առիթ էր իր քաղաքական ծրագրերի իրականացման համար:

Քսանհինգամյա Բոհեմունդի անսպասելի մահը, այնուամենայնիվ, որոշակի կասկածների տեղիք է տալիս Պետրոս թագավորի հանդեպ, որի առթիվ, ի դեպ, Հ. Դարդելը ոչ մի բացատրություն չի տալիս: Հ. Դարդելը նշում է, որ Բոհեմունդ Լուզինյանին Հայոց թագի իրական ժառանգորդ են ընտրել հայ իշխանները, ինչպես տեղի էր ունեցել 1344 թ.: Այդ իշխանաժողովը պետք է եղած լիներ Կոստանդին II-ի մահից հետո: Փաստորեն, Կոստանդին Հեթումյան Նղրեցու գահաժառանգման հարց չի եղել, ուստի և Բոհեմունդի մահից հետո երկու տարի գահը թափուր է մնացել Նղրեցիներից:

կային նաև երկու եպիսկոպոսական թեմեր (տե՛ս Բակուրան, էջ 51):
[295] Դարդել, գլ. ԽԶ, էջ 57:
[296] Norman Housley, The later crusades, p. 113–114.

Այնուհետև, Հ. Դարդելը շարունակում է, որ Պետրոսը հասնում է այն բանին, որ Հայոց գահի նկատմամբ իրավունքները պապը հանձնում է Ջիվան Լուզինյանի երկրորդ որդուն՝ Լևոնին և հայոց իշխաններին կոչ է անում ենթարկվել իրենց օրինական տիրոջն ու թագավորին՝ Լևոն Լուզինյանին:[297] Այնուհետև Հ. Դարդելը շարունակում է. «Եւ հրաժարեալ արքային Պետրոսի ի պապէն՝ դարձ արար յաշխարէն իւր եւ եգիտ վախճանեալ զթագաւորն Հայոց զԿոստանդին վասն որոյ ոչ արձակեաց զնամականին առ իշխանն Լեւոն եւ ոչ իսկ առ Հայս, այլ կալաւ պահեաց զնոսա ցորչափ եկացն կենդանի»:[298] Այս վկայության մեջ Հ. Դարդելը վրիպել է, նշելով, որ Կոստանդին II-ի մահվան մասին Պետրոսը վերադարձին է միայն իմացել, սակայն, մենք գիտենք, որ Կոստանդինը մահացել էր 1362 թ. դեկտեմբերին: Այստեղ Հ. Դարդելը կամենում է անուղղակիորեն ցույց տալ հայ իշխանների դժգոհությունը Կոստանդին II-ից, որի կենդանության օրոք նրանք դիմում են Պետրոսին: Իսկ հայկական գահի հանդեպ Պետրոսի նկրտումները Դարդելն արդեն չի թաքցնում: Պետրոսը, համոզվելով, որ հայոց գահի իրավունքներն արդեն ամրագրված են Լուզինյան տոհմին, չի շտապում նամակները հրապարակել: Սակայն, այդ ժամանակաշրջանում Կիլիկիայում հայտնվում է գահի նկատմամբ հավակնություններ ունեցող մեկ այլ անձ:

Ղ. Ալիշանը 1363–1365 թթ. իրադարձությունների վերաբերյալ գրում է. «Շփոթք եւ բռնաբարութիւնք. ըստ ոմանց Լեւոն ոմն կորզէ զթագն այլ խոտեալ. ի բաց մերժի»:[299] Չնայած Ղ. Ալիշանը չի նշում իր աղբյուրների հեղինակներին, պարզ է, որ խոսքը մի քանի հեղինակների մասին է: Պահպանվել է նաև XVII–XVIII դդ. հեղինակ

[297] Դարդել, գլ. ԽԶ, էջ 58:

[298] Նույն տեղում:

[299] Սիսուան, էջ 544: Լեւոնի թագավորելու փաստը ընդունում է նաև Ս. Տեր-Ներսեսյանը (տե՛ս S. Der Nersessian, Armenia and the Byzantine Empire, Cambridge, 1945, p. 143):



Ավետիք Տիգրանակերտցի Ամդեցու տեղեկությունները, որը 1352
թ. նշում է «Ի Ը ամին Կոստանդեա Հայոց թագաւորի եղեւ Լեւոն
մ՛այլ, խռչընդակ Կոստանդեա, եւ խռովութիւն ոչ սակաւ ընդ մի-
մեանս»:[300]

Այստեղ Ամդեցին նկատի է ունեցել 1363–1365 թթ., քանզի
1352 թ. վերաբերյալ այդպիսի տեղեկություններ ոչ միայն չունենք,
այլև գիտենք, որ այդ ժամանակ թագավորում էր Կոստանդին II-ը:
Իսկ Ամդեցու հիշատակած Կոստանդին անվան տակ պետք է հաս-
կանալ Կոստանդին Հեթումյան Նղրեցուն, այլ ոչ՝ Կոստանդին
II-ին: XV դարի առաջին քառորդի կիպրացի հեղինակ Լ. Մախերա-
սը ևս 1360 թ. հիշատակում է հայոց թագավոր Լևոնին:[301] Է.Դյուլո-
րիեն, 1363–1365 թթ. դիմաց որևէ իշխողի անուն չնշելով, շփոթե-
լով միանգամից մի քանի անձանց, գրում է, թե 1365 թ. արքա
հռչակվեց Լևոն Լուզինյանը՝ Կոստանդին II Նղրեցու որդին, որն
ամուսնացավ Մարիամ Տարենտացու հետ: Փաստորեն, Է. Դյուլո-
րիեն Կոստանդին III-ին, կարծեցյալ Լևոնին (Բռնակալ) և Լևոն V
Լուզինյան ապագա թագավորին, նույնացրել է:[302] Ղ. Ալիշանը «Սի-
սուան»-ի ժամանակագրական ցանկում 1364 թ. դիմաց նշում է.
«Սպանանի ի Սիս Սիր Նիկոլ, որ թուի ի զարմէ Լիւզինեանց»:[303]
Կարելի է կարծել, որ Նիկոլը և Լևոնը ազգակցական կապերով
պետք է, որ կապված լինեին: Ընդունելի չէ Լևոնին Կոստանդին II-ի
որդին դիտելու վարկածը, քանզի այդ պարագայում Լևոնը կհիշա-
տակվեր ոչ թե որպես բռնակալ, այլ՝ օրինական գահակալ:[304] Կա

[300] Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, «Գիրք պատմութեանց որ կոչի
Գաւազանագիրք, համահաւաքեցեալ ի հին գաւազանագրաց եւ ի վիպաբանու-
թեանց ի մի, բազմօք երկամբք. յումեմնէ Աւետիսէ աշխատասիրէ Եւդոկացւոյ» Լ.
Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ. հ. Բ, էջ 573:

[301] Махера, Леонтий, Повесть о сладкой земле Кипр, в кн. С. Близнюк, Крестоносцы
позднего средневековья: Король кипра ПьерI Лузиньян, Москва 1999, стр. 65.

[302] E. Dulaurier, p. 121.

[303] Սիսուան, էջ 544:

[304] Ալիշան, Յուշիկք Հայրենեաց Հայոց, էջ 438, Ա. Գալստյան, Կիլիկյան

նաև կարծիք, որ Կոստանդինի մահից հետո հայ իշխանները թագավորելու են հրավիրում Լևոն Լուզինյանին, որը, սակայն մերժում է: Իսկ Լևոն Բռնակալին վերագրվող դրամներն իրականում հատվել են Լևոն Լուզինյանի անունով հայ իշխանների կողմից:[305]

Լևոնի իշխելու փաստը նրա հատած դրամներն են, որոնք իրենց արտաքին տեսքով նման են Կոստանդին II-ի և Կոստանդին III-ի դրամներին:[306] Լևոն Բռնակալի դրամները, Լևոն անվան գրության ձևով ևս, տարբերվում են նախորդ Լեւոնների և ապագա Լևոն V Լուզինյանի անունների գրության ձևերից՝ առաջիններում դրոշմված էր Լեւոն, իսկ վերջիններում՝ Լեվոն:[307] Բռնակալի դրամներն ունեցել են նաև արաբերեն կրկնադրոշմներ:[308] Ընդ որում, Լևոն Բռնակալի դրամներից ավելի շատ են գտնվել, քան՝ Կոստանդին III-ի դրամներից:

Ցավոք, բացի դրանից և Ղ. Ալիշանի մեջբերած մի քանի աղքատիկ տվյալներից, կարծեցյալ Լեւոն Բռնակալի մասին այլ տեղեկություններ մենք չունենք: Մնում է միայն ենթադրել, որ վերջինս ազգակցական կապեր է ունեցել արքայական ընտանիքների հետ (առավել հավանական է նրա՝ Լուզինյաններից մեկի ապօրինի զավակ լինելու վարկածը): Այն, որ Լուզինյանները ապօրինի զավակ-

Հայկական թագավորության կործանման հարցի շուրջը, ՀԽՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1971, թիվ 9, էջ 59:

[305] Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ. հ. Բ, էջ 442:

[306] Պերճ Կարապետեան, Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան Ս. Ղազարու թանգարանին հայկական հին դրամներու հաւաքածոները, Ռուբինեան դրամներ, Բազմավէպ, 1952, 7–9, էջ 167 (տե՛ս նաև Զարեհ Պտուկեան, Կիլիկիոյ Կոստանդին Գ-Լեւոն Բռնակալ-Կոստանդին Դ-ի կարեւոր դրամագիտ մը, Հայկազեան Հայգիտական Հանդէս, 1972, հ. ԻԳ, էջ 158, Եղիա Ներսէսեան, Հայկական դրամներու տեղաշարժն ու անուրդները, Բազմավէպ, 1997, 1–4, էջ 105):

[307] Զ. Պտուկեան, Կիլիկեան Հայաստանիվերջին թագաւորներու պղինձէ դրամները, Հանդէս Ամսօրեայ, 1969, թիւ 7–9, սյուն 353:

[308] Տե՛ս Եղիա Ներսէսեան, Կիլիկեան Հայաստանի արաբերենով կրկնադրոշմուած դրամները, Հայկազեան Հայագիտական Հանդէս, 2000, հ. Ի, էջ 163:



ներ ունեին, հաստատում է Ռ. Քոլլենբերգը՝ Սիր Նիկոլի և Բարդուղիմեոսի վերաբերյալ: Ընդ որում, վերջինս 1370 թթ. թագապահական խորհրդի անդամներից է եղել: Օգտվելով իր ազգակցական իրավունքներից՝ Լևոնը, կարճ ժամանակով զավթել է գահը: Ղ. Ալիշանի վկայակոչած տեղեկությունները, որոնք հայ հեղինակների գրվածքներ են, Լևոնին բնութագրում են որպես բռնակալ: Հետագայում՝ գահին Նղրեցիների վերահաստատումը, կարելի է դիտել իբրև «ապօրինաբար» գահը զավթած Լուզինյանների և Նղրեցիների պայքարի արդյունք:

Հետաքրքիր հանգամանք է նաև այն, որ միայն 1365 թ. Կոստանդին III-ի գահակալումից մի փոքր առաջ, Հռոմի պապ Ուրբանոս V-ը դիմում է հայերին, որպեսզի վերջիններս ընդունեն իրենց թագավոր Լևոն Լուզինյանին՝ Ջիվանի որդուն:[309] Սակայն, չէ՞ որ պապը կարող էր դա անել և՛ 1363, և՛ 1364 թթ., Լևոնի եղբոր մահից անմիջապես հետո, քանզի նա, անշուշտ, գիտեր, որ Պետրոսը չէր հրապարակել Լևոն Լուզինյանին թագավոր ճանաչելու նամակը: Կարելի է ենթադրել, որ Սսի նոր ինքնակալի վարքագիծը չէր հակասում պապական քաղաքականությանը: Այստեղ պարզ է դառնում նաև Կիպրոսի արքա Պետրոս I-ի՝ Լևոն Լուզինյանի ճանաչման պապական հրովարտակները սկզբնական շրջանում թաքցնելու իմաստը, քանզի նրան առավել ձեռնտու էր ունենալ ազգակից ապօրինի թագավոր, որի նկատմամբ իր գերակայությունը միշտ էլ ավելի հեշտ կլիներ տարածել:

Կա տեսակետ, որ Լևոն Լուզինյանն իշխել է երկու անգամ, առաջին անգամ՝ 1363–1365 թթ:[310] Այս կարծիքն ընդունելի չէ, քանի որ նախ՝ Լևոնը այդ շրջանում Կիլիկիայում չէր, և ապա 1363–1365 թթ. իշխած Լևոնի հատած դրամները նման չեն Լևոն Լուզին-

[309] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 560, ըստ Ռուդտ Քոլլենբերգի Լեւոն Լուզինյանը եղել է հարճորդի (տե՛ս Rüdt Collenberg, p. 76).

[310] V. Langlois, La Tresor des chartes, p. 56 (տե՛ս նաև Տ. Սաւալանեանց, Պատմութիւն Երուսաղէմի, էջ 524, Boase, p. 186, Morgan, p. 222).

յանի դրամներին: Այս մասին լռում է նաև Հ. Դարդելը: Հակառակ պարագայում, նա այդ հանգամանքը հաշվի կառներ՝ ևս մեկ անգամ Լուզինյանների օրինական իրավունքները շեշտելու համար:

1365 թ. վերջին միայն իշխանների որոշմամբ հայոց թագավոր է ընտրվում Կոստանդին Նղրեցի Հեթումյանը՝ Կոստանդին III-ը (ծնված 1326 թ.):[311] Գահակալական պայքարում Կոստանդինի հաղթանակի գրավականներից մեկն էլ այն էր, որ Կիպրոսի արքա Պետրոսն այդ ժամանակ զբաղված էր մամլուքների դեմ կողոպտչական հարձակումներ կազմակերպելով:[312] Կոստանդին Նղրեցի Հեթումյանը Կոստանդին II-ի հորեղբայր Հեթում Զամբռլայի որդին էր: Կոստանդինի հայրը՝ Հեթումը, ինչպես և իր հորեղբայր Բալդուինը, Օշինի և Լևոն IV-ի օրոք արքունիքում բարձր պաշտոններ են գրավել: Հեթումը շարունակել է պաշտոնավարել նաև իր եղբորորդի Կոստանդին II-ի և Գի թագավորի ժամանակ: Հեթումի մասին ունեցած մեր վերջին տեղեկությունները թվագրվում են 1358 թ.-ով:[313] Հարկ է նշել, որ ուղիղ գծով Կոստանդին Թագավորահոր թոռ Հեթում Նղրեցի Ախտուց տերն ունեցավ բուռն և իրադարձություններով հարուստ, ավելի քան կեսդարյա, քաղաքական կյանք: Կոստանդինը իր հորեղբորորդու՝ Կոստանդին II-ի թագավորության ժամանակ զբաղեցնում էր իշխանաց իշխանի բարձր պաշտոնը, ինչն, անշուշտ, նրան օգնած կլինի հաղթելու 1365 թ. գահակալական պայքարում՝ որպես ավագագույնը իշխանների մեջ:

Կոստանդին III-ի մասին, չափազանց սուղ տեղեկություններ են պահպանվել: Նրա ընտրության վերաբերյալ Հ. Դարդելը գրում է. «Այլ ոչ եթէ ընտրեցին զնա առ ազնվականութեանն՝ այլ առ փարթամութեան, զի էր ծագումն նորա ի ճորտից անտի Կիպրոսի»:[314] Սրանից միայն կարելի է եզրակացնել, որ Կոստանդինն արտաքուստ բավականին ազդեցիկ էր և ուրիշ ոչինչ, քանզի Հ. Դարդելի կողմնակալությունը Կոստանդին II-ի և, հատկապես Կոստանդին III-ի նկատմամբ, ակնհայտ է: Այն, որ Կոստանդին III-ը Հեթում Նղրեցու որդին էր,[315] որևէ կասկած չի հարուցում:

Շարունակելով իր միտքը՝ Հ. Դարդելը Կոտանդին III-ի մասին հայտնում է, որ նա, չկարողանալով երկիրը անհավատների հարձակումներից զերծ պահել, իր ապահովության դիմաց Կիպրոսի արքա Պետրոսին խոստացավ Հայոց գահը: Այդ պատճառով էլ, ըստ նրա, Պետրոսը Լևոն Լուզինյանից թաքցնում է հայոց գահի նկատմամբ պապի կողմից վերջինիս տրված իրավունքները:[316]

1360 թ. Կիպրոսի Պետրոս թագավորը, եվրոպական երկրներից որևէ իրական զինական օժանդակություն չստանալով, որոշեց միայնակ պայքարել մամլուքյան սուլթանության և շրջակա մահմեդական իշխանությունների դեմ: Նրան այս գործում օգնում էին միայն Հռոդոսի ասպետները: 1361 թ. նա հարձակվեց Անտալիայի վրա, որն ըստ Ն. Հաուսլիի քրիստոնյաների վերջին հաջողությունն էր տարածաշրջանում:[317] Սակայն այդ պայքարն ավելի շուտ կրում էր հանդուգն ու արկածախնդիր հարձակումների բնույթ, և պատահական չէ, որ Պետրոսը հենց իր հանդուգն գործողությունների համար հաճախ համարվում է վերջին խաչակիր արքա: 1365 թ. հոկտեմբերին նրան հաջողվեց գրավել և կողոպտել Ալեքսանդրիան:[318] Սակայն, դա ոչ միայն ժամանակավոր բնույթ էր կրում, այլև շրջակայքի քրիստոնյաների համար ծանր հետևանքներ ունեցավ: Պետ-

[311] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 193:

[312] Histoire des croisades, t. V, p. 248–249.

[313] Նույն տեղում, էջ 412:

[314] Դարդել, գլ. խէ, էջ 59:

[315] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 477, Սիսուան, էջ 413:

[316] Դարդել, գլ. խէ, էջ 59, Histoire des croisades, t. V, p. 253–255.

[317] N. Housley, The later crusades, p. 182.

[318] E. Ashtor, p. 90, Tournebize, p. 702. Մ. Ճեվահիրճյանը պնդում է, որ Պետրոսը նույն թվականին հրկիզեց նաև Այասը, որը սակայն կասկածելի է (տե՛ս Մ. Ճեվահիրճյան, Այաս նավահանգիստ-քաղաքը Կ իլիկիայում, Պատմա-Բանասիրական հանդես, 1973, թիվ 1, էջ 108):

րոսը չկարողացավ պահել Ալեքսանդրիան, իսկ մամլուքներն իրենց կողոպտված նավահանգստի փոխարեն վրեժ լուծեցին շրջակա քրիստոնյաներից:

Ահա թե ինչ է գրում դեպքերին ականատես գրիչ Վարդան Դրիմեցին. «Ի յայս տարի գերեց փռանկն զԱղեքսանդր եւ յայս աշխարհս զինչ քրիստոնեայ կայր զամենն կալան եւ ի գիր հանին, եւ զինչ եպիսկոպոս եւ աբեղայ եւ երէց կայր՝ զամէնն զնտանեցին, եւ զինչ եկեղեցի կայր՝ զամէնն փակեցին...բազումք վասն դառն տանջանացն դարձան թուրք, եւ մեք յերուսաղէմս զտարոյս շատն ի զնտան ենք կացել, եւ բազում վիշտ եւ նեղութիւն վասն Քրիստոսի տեսաք, զոր ոչ կարեմ ընդ գրով պատմել»:[319] Այս տեղեկության մեջ թվականի որոշ անճշտություն կա: Վ. Դրիմեցին Ալեքսանդրիայի գրավման թվական է նշում 1366թ., սակայն, Պետրոս I-ը դրան տիրել էր 1365 թ. հոկտեմբերին:[320]

Վարդան Դրիմեցու շարադրանքից կարելի է եզրակացնել, որ մամլուքները քրիստոնյաների նկատմամբ հալածանքներ են սկսել 1366 թ., որոնք տարածվել են նաև Կիլիկիայի հայկական թագավորության վրա: Ընդ որում, նրանց հարձակումները սկսվել էին դեռ 1365 թ., որով էլ պետք է բացատրել 1365 թ. կիլիկեցիների զանգվածային գաղթը Հռոդոս և փոքրասիական այլ կղզիներ:[321] Ընդ որում, սա կիլիկեցիների առաջին զանգվածային գաղթերից էր: Այս առումով Գ. Միքայելյանը վրիպել է՝ գաղթը կապելով 1366 թ. Պետրոս I-ի Այաս կատարած արշավանքների հետ, շփոթելով և՛ գաղթի թվականը (1365 թ.) և՛ Այասի պաշարումը (1367 թ.):[322]

1367 թ. աշնանը Պետրոս I-ը, որը չէր հրաժարվել Հայոց գահի նկատմամբ հավակնություններից, այս անգամ Հռոդոսի ասպետ-

---

[319] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 473:
[320] E. Ashtor, p. 90.
[321] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 560:
[322] Г. Микаелян, стр. 472.



ների օժանդակությամբ,[323] յոթ հազար զինվորով և հարյուր հիսուն
նավով կազմակերպեց արշավանք մամլուքյան հյուսիսային նա-
հանգների՝ Ծովափնյա Կիլիկիայի, մասնավորապես, Այասի վրա:
Պետրոսը նախնական համաձայնություն ուներ Կոստանդին III-ի
հետ՝ համատեղ ուժերով վերատիրելու Այասին: Համաձայն դրա
հայկական զորքերը Պետրոսին պետք է հանդիպեին Այասի մոտ:
Ըստ Գ. դը Միշոի, հայոց թագավորն ինքն էր 1367 թ. սեպտեմբերին
Պետրոսին խնդրել համատեղ ուժերով ազատագրել Այասը:[324] Սա-
կայն, հնարավոր չէ պարզել, թե իրականում ում նախաձեռնութ-
յունն է եղել այն: Հայտնի չեն նաև դաշնակիցների հետագա ծրագ-
րերը, սակայն, Այասի վերագրավման համատեղ ծրագիրը վկայում
է Պետրոս I-ի վարած քաղաքականության փոփոխության մասին:
Մի կողմ թողնելով վերջինիս հավակնությունները՝ պետք է նշել, որ
իր այս քայլով նա հրաժարվում էր, մինչ այդ վարած, ասպատակա-
յին, արկածախնդրական ռազմերթի մարտավարությունից: Կիլի-
կիայի ծովեզերքում ամրապնդվելը կամ հավատարիմ դաշնակից
ունենալը բավականին իրական կարող էր լինել, եթե հիշենք, որ
Ջահան գետի ձախափնյակը մի քանի տասնամյակ առաջ էր կորս-
վել, իսկ Դաշտային Կիլիկիայի մնացյալ հատվածն ընդամենը մի
քանի տարի առաջ, որտեղ դեռ գերակշիռ թիվ էին կազմում հայե-
րը: Պետրոսին հաջողվեց 1367 թ. սեպտեմբերին, բացառությամբ
միջնաբերդի, գրավել Այասը, սակայն, Կոստանդին III-ի զորքերն
այդպես էլ չժամանեցին, ուստի Պետրոսը, չկարողանալով միայ-
նակ գրավել միջնաբերդը, և դիմագրավել, հարկադրված էր նա-
հանջել:[325]

Հետազոտողների մի մասը դա բացատրում է Պետրոսի հա-
վակնություններից Կոստանդինի զգուշությամբ: Սակայն, այն կա-

---

[323] K. Setton, p. 299.
[324] Guillaume de Michaut, p. 211, Հեթում Սխտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 197:
[325] Guillaume de Machaut, p. 216.

րող էր հետևանք լինել նաև Կոստանդինի անկարողության, որն այդ ժամանակ զբաղված էր թագավորության տարածք ներխուժած հակառակորդի դեմ պայքարով: 1367 թ. ձեռագրի հիշատակարանից տեղեկանում ենք, որ նույն թվականի մայիսին տասներկու հազարանոց զորքով Սսի վրա է հարձակվում Տարոնի Մանչուկ ամիրը, որին Կոստանդին թագավորը, գունդստաբլ Բազուն Բազունենցը[326] և մարաջախտ Լիպարիտը[327] սկզբում կարողանում են դիմագրավել: Ցավոք, ձեռագիրն անավարտ է մնացել և արշավանքի ելքն անհայտ է մնում, սակայն, կարելի է ենթադրել, որ եթե Տարոնի ամիրը հասել էր Սսի մատույցներին, ապա թագավորության վիճակը բավական ծանր պետք է եղած լիներ՝ Պետրոսին Այասում օգնության հասնելու համար:[328] Ամենայն հավանականությամբ, այս ժամանակ է Կոստանդինը կորցնում Ջահան և Սեյհան գետերի միջև ընկած նախալեռնային շրջանները:

Լ. Տեր-Պետրոսյանը, Վ. Լանգլուան, Ռուդտ Քոլլենբերգն ու Տ. Բոեյզը կարծում են, որ 1368–1369 թթ. Հայոց թագավորի տիտղոսը կրել է Պետրոս I-ը:[329] Ռուդտ Քոլլենբերգը չի նշում դրա աղբյուրները: Հավանաբար այս եզրահանգումը պետք է հիմնված լինի Հ.

[326] Այս գունդստաբլի տոհմն անհայտ է: Միայն 1330 թ. հիշատակվում է Բազունի հայր Լևոն Բազունենցը, որը հնարավոր է, որ եղած լինի Սմբատի որդի Լևոն գունդստաբլը (տե՛ս «Սմբատ Քաջկոնցի ավետարանը» Հանդէս Ամսօրեայ, 1951, 8–10, սյուն 465):

[327] Առաջին անգամ Լիպարիտը հիշատակվում է 1360 թ. (տե՛ս, ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 455): Ա. Գալստյանը իր հերթին 1347 թ. Լիպարիտին համարում է սպարապետ, ինչն անհավանական է, քանզի 1360 թ. Լիպարիտն ընդամենը իշխան էր, իսկ սպարապետը նրա հայր Թորոս Կապանցին էր (տե՛ս Ա. Գալստյան, նշվ. աշխ., էջ 59):

[328] Ըստ Վ. Քյուրքչյանի, այս արշավանքի ընթացքում Զարմանդուխտի կողմից սպանվում են եգիպտական զորահրամանատարներ Ալին և Էոմերը (տե՛ս Քյուրքչյան Վ., Հայկական Կիլիկիա, էջ 29):

[329] Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., h. Ա, էջ 125, Rüdt Collenberg, Տախտակ VII, Boase, p. 186, V. Langlois, La tresore des chartes, p. 56.



Դարդելի՝ Պետրոսի Հայոց թագավոր դառնալու ձգտման,[330] ինչպես նաև Գիյոմ դը Մաշոի այն հաղորդման վրա, ըստ որի հայերը 1368 թ. հունիսին Պետրոսին հրավիրում են թագավորելու,[331] և վերջապես՝ Պետրոսին վերագրվող հայկական դրամների առկայությամբ:[332]

Պետրոսն, իրոք, կամենում էր դառնալ Հայոց թագավոր: Դրա վկայություններն են Կոռիկոսին տիրելը, Այասի արշավանքը, Լևոն Լուզինյանի ազատության սահմանափակումը, և վերջապես, այն դրամները, որ Պետրոսը, անշուշտ, հատել էր ոչ Սսում, չնայած որ, դրամի վրա նշված է. «Շինեալ ի քաղաքն Սիս»:[333]

1368 թ. հայ իշխանների մի ստվար հատված, իրոք, կարող էր Կոստանդինից ծածուկ համաձայնության եզրեր փնտրել Պետրոսի հետ: Մանավանդ որ, չնայած 1367 թ. արշավանքի ձախողմանը, Պետրոսը հետ մղեց Կոռիկոսի վրա թուրքմենների արշավանքը և բանակցություններ սկսեց մամլուքյան սուլթանի հետ: 1368 թ. կրկնվեց Մանչուկ ամիրի արշավանքը Սիս, որն էլ լրացուցիչ ազդակ կարող էր հանդիսանալ Կոստանդին III-ի հակառակորդների համար:

Պետրոսը 1368 թ. աշնանը Վենետիկում հանդիպեց հայ պատգամավորներին, որոնք նամակներ էին բերել նաև Վենետիկի դոժին: Իմանալով հայ ավագանու ցանկությունը, որին ըստ երևույթին ուղղորդում էր Մարիամ թագուհին՝ Կոստանդին III-ի կինը,[334] Պետրոսը շտապում է Կիպրոս, նպատակ ունենալով արագորեն

[330] Դարդել, գլ. ԽԷ, էջ 59:

[331] Guillaume de Machaut, p. 222–223.

[332] Bedukian, Coinage of Cilician Armenia, p. 21, V. Langlois, Numismatique L'Armenie, Paris, 1855, p. 49.

[333] Կ. Սիպիլյանը գտնում է, որ այդ դրամները հնարավոր է նույնիսկ կեղծ լինեն (տես Կ. Սիպիլեան, Դասաւորութիւն Ռուբենեան դրամոց, Վիեննա, 1892, էջ 69):

[334] Եվ լիովին անտրամաբանական է թվում Հ. Տեր-Ղազարյանի այն պնդումը, որ Կոստանդինը ցանկանում էր իր գահը հանձնել Պետրոսին (տե՛ս Յ. Տէր-Ղազարեան, Հայկական Կիլիկիա, Անթիլիաս, 1966, էջ 291):

նախապատրաստվել Կիլիկիա նախատեսվող արշավանքին:[335] Այստեղ էլ կտրվում են՝ «Պետրոս Հայոց թագաւոր» մակագրությամբ դրամները: Սակայն Պետրոսի հավակնությունները վիճակված չիրականացան, քանի որ 1369 թ. հունվարին նա իր իսկ պալատականների ձեռքով դավադրաբար սպանվեց: Պետրոսի մահից հետո Ուրբանոս V-ը Հռոդոսի ասպետներին սկսեց դիտարկել, որպես մամլուքների դեմ պայքարում Հայոց թագավորության հիմնական օժանդակ ուժ: Պատահական չէ, որ 1369 թ. Զմյուռնիայի և Ատտալիայի պաշտպանությունը հանձնարարելով նրանց, նա մի քանի ամիս անց Հայոց թագավորությանը օգնության հասնելու հանձնարարական կոչով դիմեց Հիվանդախնամների մեծ մագիստրոսին:[336] Սակայն հիվանդախնամները որևէ կերպ չկարողացան օժանդակել օրհասական իրադրության պայմաններում գտնվող Հայոց թագավորությանը:[337] Պետք է նշել, որ միասնական պայքար ծավալելուն խանգարեց նաև վենետիկա-ջենովական տնտեսական մրցակցությունը,[338] որը հաճախ վեր էր ածվում ռազմական բախման՝ երբեմն նաև Կիպրոսի ու Հիվանդախնամների մասնակցությամբ:

Կոստանդին III-ի նկարագիրը շատ գծերով մեզ անհայտ է մնում: Նրա վերաբերյալ հիմնական աղբյուրը մինչ այժմ մնում է Հ. Դարդելի «Ժամանակագրությունը», որտեղ նա ներկայացվում է ամենամռայլ գույներով և որտեղ հավաստի նյութը խիստ սակավ է: Ըստ պատմիչի, նա կամ ընդունում է Բաբելոնի (իմա Կահիրեի),

335 Guillaume de Machaut, p. 245.

336 N. Housley, The Avignon papasy. 291.

337 Նորման Հըուլին կարծում է, որ սխալ է հիվանդախնամներին վերագրել մահմեդականների դեմ պայքարի ցանկության բացակայությունը, այն, ըստ նրա, պայմանավորված էր առկա ուժերի անբավարարությամբ, միաբանությունը այս շրջանում փաստացիորեն ոչնչով չէր կարող օգնել Հայոց թագավորությանը (տե՛ս նույն տեղում):

338 Ciprus,society and Culture 1191-1374, edited by Angel Nicolaou-Konnari and Chris Schabel, publisher Brill, 2005, p. 149.



կամ էլ՝ Պետրոսի գերիշխանությունը, և երկու դեպքում էլ Կոստանդինը, արքայական գանձերն առած, մտածում է միայն ապահով թաքստոց գտնելու մասին:[339] Հ. Դարդելի այս գեղարվեստական գեղումները իրական վիճակը պարզելու համար շատ քիչ նյութ են տալիս:

Այնուամենայնիվ, եղած փաստերն էլ բավարար կերպով վկայում են, որ Կոստանդինը կամային թույլ հատկություններով օժտված գահակալ է եղել: Այդ կարծիքի օգտին է խոսում Մարիամ ավագ թագուհու՝ Կոստանդին II-ի այրու, ակտիվ դիվանագիտական գործունեությունը Կոստանդին III-ի թագավորության տարիներին:

1368 թ. սկսած Մարիամ թագուհին հարաբերություններ է պահպանում Վենետիկի հանրապետության հետ:[340] Նա 1371 թ. դեսպանություն է առաքում Նեապոլ՝ իր ազգական Ֆիլիպ Տարենտացու արքունիք (Մարիամի մայրը նեապոլիտանական թագավորի դուստրն էր)՝ օգնության խնդրանքով: Անշուշտ, այդ դեսպանությունը ուղարկվել է Կոստանդին III-ից ծածուկ: 1372 թ. Հռոմի պապ Գրիգորիոս XI-ը (1371–1378 թթ.) դիմում է Տուրենի իշխան Ֆիլիպին, որպեսզի նա Մարիամի հետ ամուսնացնի 1372 թ. կնոջը կորցրած եղբորը՝ Օթոն Բրունսվիքցուն: Թե ի՞նչ նպատակ է ունեցել այդ գաղափարը, դժվար չէ կռահել. Մարիամի ամուսնությանը պետք է հաջորդեր Կոստանդին III-ի գահազրկումը:

Այսպիսով, Կոստանդին III-ի իշխանության վերջին տարիներին հայկական ավագանու մի զգալի մասը (Մարիամ՝ ավագ թագուհի, ապագա թագապահ խորհրդի անդամ պրն. Վասիլ, պրն. Բարդուղիմեոս) ստեղծված իրավիճակից դուրս գալու ելքը տեսնում էր Կոստանդինի փոխարինումը կա՛մ Պետրոսով, կա՛մ էլ եվրոպական

339 Դարդել, գլ. ԽԷ, ԾԲ, ԾԳ:

340 Պահպանվել է 1368 թ. Մարիամ թագուհուն ուղղված Վենետիկի դոժի նամակը, որտեղ վերջինս խոստանում էր օգնել Հայոց թագավորությանը (տե՛ս Ղ. Ալիշան, Հայ-Վենետ, էջ 133):

մեկ այլ վեհապետով:

Ըստ Ղ. Ալիշանի բերած տեղեկությունների, այդ ժամանակամիջոցում չեն դադարում շրջակա ամիրությունների՝ մամլուքյան կուսակալների արշավանքները: Այսպես, 1369 թ. Հալեպի կուսակալ Խոշքիմուրն ավերում է Սսի շրջակայքը, ապա՝ պաշարում մայրաքաղաքը, սակայն, գրավել չի կարողանում, ամենայն հավանականությամբ, հայերին հաջողվել է հետ մղել նրա զորաբանակը Սսից:

Տարոնի ամիրա Շահար օղլի Մանչուկը 1369 թ. կրկնում է իր արշավանքը,[341] որը ձախողվել էր 1368 թ. Լիպարիտի ջանքերով: Հակառակորդը, որն, ըստ Հովհաննես Թլկուրանցու, մոտավորապես վաթսուն հազարանոց զորաբանակով էր արշավանքի ելել, սկզբում պարտվում է, բայց հետո նրանց հաջողվում է նեղել հայերին, ներխուժել Սիս և ավերածություններ կատարել: Մինչ այդ, մարտում զոհվում են սպարապետ Լիպարիտը (հիշատակվում է՝ որպես գունդստաբլ 1368 թ.)[342] և Սիր Հովհանը, որը, ամենայն հավանականությամբ, Լիպարիտի որդի Հովհաննեսն է: Ընդ որում, Կոստանդին III-ը, ըստ Թլկուրանցու, ինքն է դավաճանում Լիպարիտին:[343] Նախանձելով նրա փառքին՝ արքան միայնակ է թողնում Լիպարիտին, իր զորամասով լքելով ռազմադաշտը, որի հետևանքով էլ սպարապետը սպանվում է: Առաջին հայացքից թագավորի այս տարօրինակ վարմունքն ունի իր բացատրությունը:

Սմբատ Գունդստաբլի պատմության լուսանցքում հիշատակվում է 1311 թ. վրաց արքայազն Դավթի և Լևոն II-ի կրտսեր դստեր՝ Ալիծի ամուսնությունը: Նորապսակներին իբրև ժառանգություն,

---

[341] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 192, 197:

[342] Հայապատում, էջ 540:

[343] Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, էջ 272, Պ.Մ. Խաչատրյան, Հովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջ Լիպարտին» պատմական ողբը, Պատմաբանասիրական հանդես, 1964, թիվ 2, էջ 114–115:



տրվում է Կապանի ամրոցը:[344] Նրանց զավակը կարող էր լինել Թորոս Կապանցին՝ Կապանի բերդի տերը, Վասիլի և Լիպարիտի հայրը (դա ժամանակագրական առումով համընկնում է): Բացի այդ, Լիպարիտի անունը ևս խոսում է այդ վարկածի օգտին, քանզի Կիլիկիայում մինչ այդ այդպիսի անձնանուն գործածելի չի եղել: Այդ պարագայում, միայն, հասկանալի կլիներ Կոստանդինի զգուշությունը ժողովրդական զանգվածների մեջ մեծ հեղինակություն վայելող, հաջողակ զորավար, Հայոց և վրաց թագավորների ծոռ՝ Լիպարիտ զորավարից: Նշենք նաև, որ հետագայում Լիպարիտի եղբայր Վասիլը մասնակցում է Կոստանդին III-ի սպանության կազմակերպմանը: Թագավորի այս վարմունքը, անշուշտ, նկատելի ազդեցություն է ունենում նրա հեղինակության անկման հարցում:

Մանչուկը, նույն 1369 թ. դեկտեմբերին, երկրորդ անգամ արշավում և ասպատակում է թագավորության մնացած տարածքները: Ըստ երևույթին, այս անգամ Կոստանդինը դիմադրության որևէ փորձ չի անում և ամրանում է Սսի միջնաբերդում, որն էլ Հ. Դարդելի համար հիմք է ծառայել, գրելու, թե Կոստանդինը ժողովրդին անհավատների հարձակումներից չէր պաշտպանում:[345] Սակայն, մենք գիտենք, որ և՛ 1367 թ., և՛ 1368 թ., և՛ 1369 թ. Կոստանդին III-ը կազմակերպված դիմադրություն է ցույց տվել և նույնիսկ կարողացել է հետ մղել որոշ հարձակումներ, այնպես որ, պետության կործանումը Կոստանդին III-ի լիակատար անգործության հետևանք չէր, ինչպես փորձում է ներկայացնել Հ. Դարդելը:

Կոստանդին III-ը սպանվեց 1373 թ. ապրիլին, իշխանների ձեռքով, ըստ Հ. Դարդելի, այն ժամանակ, երբ «...դաշն կռեաց ընդ սուլթանին Բաբելոնի եւ խոստացաւ տալ ի ձեռն նորա զթագաւորութիւն, զաշխարհն եւ զքրիստոնեայս համօրէն, միայն զի ապրե-

---

[344] Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 198:

[345] Դարդել, գլ. ԾԲ, էջ 67:

ցուցէ զանձն իւր եւ զամենայն ստացուածս»:[346]

Չժխտելով մամլուքների հետ կնքված հաշտության ու նրանց գերակայության ընդունման փաստերը, նկատենք, որ այնուամենայնիվ սպանությունն այլ դրդապատճառներ էլ է ունեցել: Կոստանդին III-ի հեռացմամբ շահագրգռված էր Հայոց ավագանին (որտեղ Վասիլ մարաջախտն ուներ նաև անձնական խնդիրներ), որը փորձում էր Կիլիկիայի առաջ ծառացած բարդ և կենսական քաղաքական հարցերը լուծել գահակալի փոփոխման միջոցով: Մեզ հայտնի չէ՝ Կոստանդին III-ը ունեցե՞լ է զավակներ, թե՝ ոչ, սակայն, տվյալ պարագայում, եթե անգամ նա արական սերունդ ունենար, միևնույն է, գահաժառանգման հարցը լուծվել էր ի վնաս Նղրեցիների:

## 2.4. Լևոն Լուզինյանի գահակալումը

Կոստանդին III-ի սպանությունից հետո երկրի կառավարման լծակներն իր ձեռքը վերցրեց Կոստանդին II-ի այրին՝ Մարիամը (ծնված 1321 թ.)՝ Օշին պայլի և Հովհաննա (Ժաննա) Անժուացու դուստրը: Հաշվի առնելով Մարիամ ավագ թագուհու (քանզի Կոստանդին III-ի կնոջ անունը նույնպես Մարիամ էր) նամակագրական ակտիվ կապերը Հռոմի և արևմտաեվրոպական արքունիքների հետ, ինչպես Կոստանդին III-ի կենդանության ժամանակ, այնպես էլ նրա սպանությունից հետո, կարելի է պնդել, որ 1373 թ. ապրիլի պետական հեղաշրջումը կազմակերպվել էր նրա ղեկավարմամբ: Հեղաշրջումից հետո, ինչպես հպանցիկ նշում է Հ. Դարդելը. «...երկպառակութիւն մեծ տիրէր ի հայս»,[347] Կոստանդին III-ի սպանությունից հետո հայոց թագի մի քանի հավակնորդներ են եղել

346 Դարդել, գլ. ԾԳ, էջ 68: Ա.Սուքիասյանը, չնշելով աղբյուրը, գրում է, որ Կոստանդինը սպանվեց ժողովրդի կողմից, որը քիչ հավանական է (տե՛ս Ա. Սուքիասյան, էջ 90): Ս. Դադոյանը, իր հերթին, նշում է, որ Կոստանդինը սպանվեց միարարների ձեռքով (տե՛ս S. Dadoyan, p.47):

347 Դարդել, գլ. ԾԴ, էջ 72:





ԼԵՎՈՆ V
ԼՈՒԶԻՆՅԱՆ

որոնցից մեկը Լևոն Լուզինյանն էր: Ռուդտ Քոլլենբերգը որպես
թեկնածու, նշում է Աշոտ Օղրիի անունը,[348] որը Կոստանդին III-ի
կնոջ` Մարիամի եղբայրն էր և Մարիամ ավագի քրոջորդին: Թեկ-
նածուների շարքը կարող էր համալրել նաև Կոռիկոսի կոմս Բոհե-
մունդ Լուզինյանի ապօրինի որդի Բարդուղիմեոսը:

Արդյունքում որոշվում է պատվիրակություն ուղարկել Կիպրո-
սում գտնվող Ջիվանի որդու` Լևոն Լուզինյանի մոտ` նրան հրավի-
րելով զբաղեցնելու Հայոց գահը: Ըստ երևույթին, դրանում վճռա-
կան դեր է ունեցել նաև Հռոմի պապը, ինչպես նաև` Կիպրոսից
օժանդակություն ստանալու հույսը:

Լևոնն այդ ժամանակ գտնվում էր իր ազգական, անչափահաս
Պետրոս II-ի (1369–1382 թթ.) արքունիքում: Կիպրական արքունի-
քում ուր իրական իշխանությունը գտնվում էր Պետրոս II-ի հորեղ-
բայր Անտիոքի իշխան Հովհաննեսի ձեռքում[349] նա կարողացել էր
որոշակի դիրքի հասնել: Լևոնն ամուսնացել էր Մարգարիտ Սուա-
սոնի հետ, Կիպրոսում ուներ որոշ կալվածքներ և կրում էր Երուսա-
ղեմի թագավորության սենեշալի անվանական կոչումը:

Հայոց թագավորության թագապահական խորհուրդը Լևոնի և
Պետրոս II-ի մոտ է ուղարկում Լեւոն Համուսցի սեպուհին և
պրեստրացի մի տանուտերի, որոնք ներկայանում են և՛ Պետրոսին,
և՛ Լեւոնին: Պետրոսը սկզբում համաձայնեց արտոնել Լեւոնին` վե-
րադառնալու Կիլիկիա: Սակայն, ըստ Հ. Դարդելի, Լեւոնը հրաժար-
վեց մեկնել` հայերի` սեփական տերերի նկատմամբ, այսպես կոչ-
ված, «անհավատարմության» պատճառաբանությամբ (օրինակ է
բերվել հորեղբայրների սպանությունը 1344 թ.):[350]

Ի վերջո, ելնելով քրիստոնյա աշխարհի նկատմամբ պատվի և
պարտավորվածության զգացումներից, համաձայնվում է այդ «զո-

---

[348] Rüdt Collenberg, p.75.

[349] Հովհաննեսն անմիջական մասնակցություն էր ունեցել եղբոր` Պետրոսի սպանության մեջ (տե՛ս L. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., h. Ա, էջ 126):

[350] Դարդել, գլ. ԾԵ, էջ 73:

հողությանը»:[351] Անշուշտ դժվար է համաձայնել Հ. Դարդելի այդ տեսակետի հետ, քանզի թեկուզ թուլացած և կործանման եզրին գտնվող սակայն արքայական թագով ապահովող երկիրն անկասկած առավել գրավիչ էր, քան դատարկ տիտղոսը, որը կրում էր Լևոնը: Բացի այդ, նա առիթ ուներ զգուշանալու նաև իր ազգականից՝ Պետրոսից, որը, շուտով ջենովացիների հետ պատերազմ սկսելու պատրվակով, Լևոնին արգելում է Կիպրոսից հեռանալ:

Այստեղ դեռևս ուժի մեջ էր Կիպրոսն ու Կիլիկիան մեկ թագավորի իշխանության ներքո միավորելու Պետրոս I-ի ծրագիրը, որի իրականացնողը պետք է լիներ Պետրոս II-ը: Հավանաբար, Լևոնը գահից հրաժարվել է Պետրոս II-ի և խնամակալ Անտիոքի իշխանի կասկածամտության զոհը չդառնալու համար (հատկանշական է, որ Լևոնի գերությունից հետո Կիպրոսյան արքունիքը նրան ազատելու համար միայն մեկ ձևական քայլ կատարեց): Այնուամենայնիվ, Պետրոս II-ը չի կարողանում մերժել հայ պատվիրակների խնդրանքը՝ խոստանալով նրան ուղարկել Կիլիկիա՝ ջենովացիների դեմ պատերազմի ավարտից հետո (որի ընթացքում ոչ մի երաշխիք չէր լինի Լևոնի կյանքի համար), քանզի իշխան Լևոնը «չափազանց» անհրաժեշտ էր տվյալ պատերազմում:

Լևոնն այդ որոշումից հետո պատվիրակներին է հանձնում իր դրոշը և մինչև իր գալուստը երկիրը կառավարելու համար կազմում է (վերահաստատում է) թագապահ խորհրդի կազմը: Ժամանակավոր կառավարության ղեկավար է հաստատվում Մարիամ (ավագ) թագուհին,[352] անդամներ՝ կոմսուհի Ֆիմին, (Բոհեմունդ Լուզինյանի կինը, Կոստանդին II-ի քույրը), սեպուհ Բարդուղիմեոսը (Բոհեմունդ Լուզինյանի ապօրինի որդին) և պարոն Վասիլ մարաջախտը (պարոն Թորոսի որդին, Լիպարիտ սպարապետի եղբայրը):[353] Պատվիրակները գիշերով գաղտագողի անցնում են Սիս՝ ճեղքելով այն պաշարած Բեկթեմուրի զորքի շղթան և հայտնում իշխաններին ու ժողովրդին Լևոնի համաձայնության մասին: Հալեպի մամլուք կուսակալի կողմից Սսի պաշարման մասին, բացի Հ. Դարդելից, այլ աղբյուրներ չկան: Ինչպես նշում է Հ. Դարդելը, հայերը, Լևոնի պատասխանով ոգևորված ելնում են բերդից և, ջարդելով թշնամուն, ազատում քաղաքը պաշարումից:[354] Միևնույն ժամանակ, երկու ճամբարի էր բաժանված թագապահական խորհուրդը: Ըստ երևույթին, Լևոն Լուզինյանի և Աշոտ Նղրեցու կողմնակիցներին է նկատի ունեցել Ղ. Ալիշանը, նշելով հետևյալը. «Զի ընդ այն ժամանակն իշխանքն յերկուս են բաժանուել, նա երկեաւ զի մի պատճառ չարեաց լինիցի և այնր աղագաւ ետ այդ ասացելոյդ շրջաբերական»:[355]

Սակայն, նույն թվականի հոկտեմբերին Լևոնը գերվում է Ֆամագուստան գրաված ջենովացիների կողմից:[356] Նրա փրկագնումը, որն, իրավամբ, պետք է կատարեր Պետրոս II-ը, չի իրականանում, ուստի նա փրկագնվում է սեփական միջոցներով՝ վաճառելով իր ունեցվածքը: Զրկվելով ապրուստի վերջին միջոցներից և չստանալով կիպրական արքունիքից թույլտվություն Կիլիկիա գնալու համար՝ Լևոնը որոշում է գաղտնի անցնել Կիլիկիա: Այդ նպատակով նա խնդրում է Կոռիկոսում ձմեռելու իրավունք, որն ստանալուց հետո, 1374 թ. ապրիլին ժամանում է Կոռիկոս: Այստեղ մի քանի ամիս մնալուց հետո, նա իր երկու տասնյակ զինակիցներով, փոքրիկ նավակով, գաղտնի գնում է դեպի Սարոսի գետաբերան՝ Սիս անցնելու համար:

Կ. Բասմաջյանը հիմնվելով Հ. Դարդելի հաղորդած տեղեկութ-

[351] Նույն տեղում:

[352] Ըստ Լ. Տեր-Պետրոսյանի, վերջինս 1373–1374 թթ. իշխել է՝ որպես պետության ղեկավար (տե՛ս Լ. Տեր-Պետրոսյան, նշվ. աշխ., h. Բ, էջ 455):



[353] Դարդել, գլ. ԾԹ, էջ 79:

[354] Նույն տեղում, գլ. Կ, էջ 80:

[355] Ղ. Ալիշան, Կամենից, Տարեգիրք Հայոց Լեհաստանի և Ռումենիոյ, Վենետիկ, 1896, էջ 80:

[356] Բակուրան, էջ 42:

յուններրի վրա, կարծում է, որ Լևոնը փործում էր գրավել Տարսոնը և, Կյուդնոսի հովիտն ազատագրելով, հասնել Սիս՝ նշելով նաև, որ Տարսոնի մամլուքյան զորքերը սակավաթիվ էին:[357] Սակայն, քիչ հավանական կարող է լինել Պետրոս II-ից և ջենովացիներից հալածյալ Լևոնի այս փորձը, որը, ոչ միայն օժանդակություն չէր ստանա, այլև՝ ընդհակառակը, Հայոց գահին բազմելու համար կստեղծեր լրացուցիչ խոչընդոտներ: Բացի այդ, բավականին անհամոզիչ է թվում Տարսոնում երեք հարյուր հոգանոց մամլուքյան կայազորի գոյությունը:[358] Այս փաստը ևս հրամցվել է Հ. Դարդելի կողմից՝ Լևոն Լուզինյանի՝ քրիստոնեության անխոնջ մարտիկի կերպար ձևավորելու համար:

Լևոնը 1374 թ. հուլիսի վերջին վերջապես հասավ Սիս:[359] Շուտով Կոռիկոսից այստեղ բերվեցին նաև նրա մայրն ու կինը: 1374 թ. դրությամբ արդեն պարզ էր, որ պետությունը գտնվում է օրհասական վիճակում. թագավորությունն այդ շրջանում փաստացիորեն պարփակված էր Սսի և Անազարբայի միջև: Ըստ Հ. Դարդելի, Լևոնի ժամանման սկզբից ևեթ ծագեցին առաջին անախորժությունները. Լևոնը արքայական գանձարանը գտավ դատարկ: Այն յուրացնելու մեղադրանքով նա ձերբակալեց խնամակալական խորհրդի անդամ պարոն Վասիլին և Կոստանդին II-ի կնոջը՝ Մարիամին: Սակայն շուտով, երկպառակություններից զերծ մնալու համար, Լևոնը ազատ է արձակում նրանց:

1374 թ. սեպտեմբերի 14-ին,[360] Սսի սուրբ Սոֆիա տաճարում, տեղի է ունենում Լևոնի թագադրման հանդիսավոր արարողությունը:[361] Այստեղ ևս միջադեպ է տեղի ունենում: Լևոնը ցանկանում էր

[357] Կ. Բասմաճեան, գլ. Թ, էջ 43:

[358] Դարդել, գլ. Կէ, էջ 90:

[359] Fr. Tournebize, p. 712.

[360] Բասմաճեան, նշվ. աշխ., գլ. Թ, էջ 45:

[361] Վարդան Մաթևոսյանը պնդում է, որ Լևոն Լուզինյանը հայ իշխաններին սիրաշահելու համար է օգտագործում «Ամենայն Հայոց թագաւոր» տիտղոսը (տե՛ս Վ. Մատթեւոսեան, Լեւոն Ե Լուսինեանի «Ամենայն Հայոց» տիտղոսի հարցի



օծվել կաթոլիկ ծեսով, սակայն, հանդիպելով հայ իշխանների և հոգևորականության դժգոհությանը, խուսափում է անախորժություններից և թագադրվում է լատինական, ապա նաև՝ հայկական ծեսով:[362] Նույն օրն էլ նա իր հետ ժամանած Սոհիեր Դյուկարտին ամուսնացնում է իր հորեղբայր Բոհեմունդի այրու՝ թագապահական խորհրդի անդամ, կոմսուհի Ֆիմիի հետ և նշանակում թագավորության մարաջախտ: Մյուս զինակցին՝ Մաթեո դե Շապպին, ամուսնացնում է Կոստանդին III-ի այրու՝ Մարիամի հետ և նշանակում թագավորության դիվանապետ: Ինչպես տեսնում ենք, կառավարման հիմնական լծակները նա շնորհում է իր հետ ժամանած օտար ազնվականներին: Հայտնի չէ, թե ով էր վարում գունդստաբլության պաշտոնը: Բոլոր դեպքերում քիչ հավանական է, որ այն վարելու լիներ հետագայում հիշատակված Հեթումը: Առավել հավանական է, որ Հեթումը պաշտոնավարել է Լիպարիտ գունդստաբլի մահից հետո՝ Կոստանդին III-ի թագավորության վերջին տարիներին:

Երկրի կառավարման համակարգում տեղ չգրավեցին 1373 թ. պետական հեղաշրջման հիմնական մասնակիցները՝ Մարիամ ավագ թագուհին, պարոն Վասիլը, ինչպես նաև Բարդուղիմեոսը՝ Բոհեմունդ Լուզինյանի ապօրինի որդին, որն այլևս երբևէ չի հիշատակվում: Հնարավոր է, որ Լևոնը վերջինից որպես գահի հավանական թեկնածու ազատվել էր իր թագավորության սկզբնական շրջանում: Ավելին, Լևոնը Վասիլ մարաջախտին զրկում է զբաղեցրած պաշտոնից և բանտարկում՝ պատճառաբանելով, թե արքունի գանձարանը հափշտակվել է նրա կողմից (սակայն, շուտով, քաղաքական նկատառումներից ելնելով, ազատ է արձակում նրան):

1374 թ. աշնան հաջորդ ամիսները բավականին ծանր էին թագավորության համար, որը պարփակվել էր Սիս քաղաքով և Սսից

շուրջը, Բազմավէպ, 1990, թիւ 1–2, էջ 236): Այդ պնդումը, սակայն, մեր կարծիքով տեղին չէ:

[362] Դարդել, գլ. ՁԱ, էջ 112–114:

հյուսիս ընկած լեռնային շրջաններով: Բնական է, որ քաղաքին
անհրաժեշտ պարեն պետք է բերվեր երկրի դաշտային շրջաննե-
րից՝ Սարոս և Ջահան գետերի հովիտներից, որոնք, սակայն, ինչ-
պես և այնտեղից եկող ճանապարհները, գրավվել էին մամլուքյան
ամիրների կողմից: Մինչև Լևոնի ժամանումը, թագապահական
խորհուրդը մայրաքաղաքի պարենամթերքի հարցը լուծում էր Սա-
րոսի և Կյուդնոսի գետահովիտներին տիրող մամլուք Դաուդ բեյ և
Աբուբեքիր իշխանների հետ որոշակի վճարի դիմաց համաձայ-
նության գալով: Սակայն 1374 թ. աշնանն իրավիճակը փոխվում է:
Հ. Դարդելի հաղորդմամբ, որոշ հայերի (նկատի ունի իշխաններին)
ամբարտավանության պատճառով Դաուդ բեյը չեղյալ է համարում
նախկին համաձայնությունը, որը հանգեցնում է նրա և Լևոն V-ի
միջև եռամսյա ռազմական գործողությունների: Այդ ընդհարումնե-
րում, ըստ Հ. Դարդելի, հիմնականում հաղթում է հայոց թագավորը,
որին հաջողվում է հակառակորդին հետ մղել Սսի մատույցներից և
վերականգնել նախկին համաձայնությունը:

Հ. Դարդելի հաղորդմամբ, 1374 թ. վերջին հայերը (իշխաննե-
րը) որոշում են նամակ գրել Կահիրեում հաստատված, հավատա-
փոխ եղած Աշոտ իշխանին՝ Օշին Նղրեցու որդուն, որպեսզի նա
մամլուքյան Շաբան II (1363–1376 թթ.) սուլթանի գլխավորությամբ
գրավի Սիսը և բազմի հայոց գահին: Ըստ Հ. Դարդելի, դա պատ-
ճառ է դառնում, որ մամլուք զորավար Աբուբեքիրը՝ 1375 թ. հուն-
վարին տասնհինգ հազարանոց զորամասով պաշարի Սիսը:[363]
Փետրվարի վերջին նրան է միանում նաև Հալեպի կուսակալ Սեյ-
ֆէդդին Ըշիկթիմուր էն Նասրը՝ իր տասնհինգ հազարանոց զորա-
մասով:

Ի վերջո, 1375 թ. ապրիլի 16-ին՝ եռամսյա դիմադրությունից
հետո, Լևոն V-ը ստիպված է լինում հանձնել միջնաբերդը և, ապա-
հովագիր ստանալով Հալեպի ամիրից, իր ընտանիքի անդամների

[363] Դարդել, գլ. ՁՁ, էջ 119:



հետ հանձնվում է նրան:[364] Լևոն V Լուզինյանը միայն 1382 թ. սեպ-
տեմբերին է Կաստիլիայի թագավորի միջնորդությամբ ազատվում
գերությունից և մեկնում Եվրոպա: Մինչ այդ Եգիպտոսում մահա-
նում են կինը՝ Մարգարիտը և փոքրահասակ դուստրը (թաղվում են
Կահիրեի սբ. Մարտինոսի վանքում):[365] Հետագայում Լևոնը իր
իրավունքները վերականգնելու մի շարք ապարդյուն փորձեր է կա-
տարում, մասնավորապես փորձելով եվրոպական միապետերի
աջակցությամբ նոր խաչակրաց արշավանք ձեռնարկել: Սակայն
աշխարհաքաղաքական առկա իրադրությունը որևէ կերպ չէր
նպաստում դրան. եվրոպական երկրների Մերձավոր Արևելքում վե-
րահաստատումը այս շրջանում ժամանակավրեպ էր: 1393 թ. նո-
յեմբերին տասնամյա անպտուղ փորձերից հետո Լևոն V-ը մահա-
նում է Փարիզում, որտեղ էլ ֆրանսիական թագավորների տոհմա-
կան հանգստարանում ամփոփվում է նրա աճյունը: Նշենք նաև, որ
նրա ապօրինի որդին՝ Գին, հետագայում զբաղեցնում է եկեղեցա-
կան պաշտոն: Ընդ որում, պապը նրան թույլատրում է ներկայանալ
որպես Լևոն Լուզինյանի օրինական որդի:[366] Լևոնի ապօրինածին
զավակների սերունդները հիշատակվում են ինչպես Իսպանիա-
յում,[367] այնպես էլ՝ Ֆրանսիայում՝ ընդհուպ մինչև 1795 թ., երբ
նրանցից վերջինը՝ Գի դը Լուզինյանը, մահանում է Փարիզի գետ-
նախորշերից մեկում:[368] Այսպիսի ավարտ է ունենում Կիլիկիայի
Հայոց թագավորությունն իրավական առումով, քանզի Սսի նվա-
ճումը և թագավորի գերությունը ժամանակակիցների մոտ զու-
գորդվում էր պետության կործանման հետ:

Սակայն, այստեղ չլուսաբանված մանրամասներ կան: Բանն

[364] Կ. Բասմաճեան, էջ 50:

[365] Ա.Հ. Գարտաշեան, Նիւթեր Եգիպտոսի Հայոց պատմութեան համար, Հատոր Ա, Գահիրէ, տպարան Նուպար, 1943, էջ 9:

[366] Aloysius L. Tăutu, p.106.

[367] Վարդան Մատթէոսեան, ԺԵ-ԺԹ դարերու հայ–սպանական կապերէն, Բազմավէպ, 2003, 1–4, էջ 202:

[368] Армянскій Вестник, Престолъ Арменій , 1916 г., N 15:

այն է, որ ըստ Հ. Դարդելի, Դաուդ բեյի 1374 թ. աշնան և 1375 թ. հունվարյան արշավանքները, ինչպես ՚նաև քաղաքի հանձնումը, կապված էին հայ իշխանների և կաթողիկոսի հետ, որոնք դավաճանեցին իրենց օրինական տիրոջը:[369]

Լևոն Լուզինյանի դեմ պայքարը, հեռակա կերպով Կահիրեից ղեկավարում էր պարոն Աշոտը՝ ոմն Օշին Նղրեցու որդի,[370] որին Ռուդտ Քոլլենբերգը համարում է Օշին Օղրիի տիրոջ որդին: Միևնույն ժամանակ, Աշոտը չէր կարող լինել մեզ հայտնի միակ Օշին Նղրեցու (1345–1357 թթ.)՝ Կոստանդին II-ի որդու որդին: Այնուամենայնիվ, վերոհիշյալ Աշոտը պատկանել է Նղրեցիների արքայական տանը: Նա կարող էր լինել Կոստանդին II-ի զարմիկը: Հ. Դարդելը նշում է, որ Աշոտը խույս է տվել Կիլիկիայից մինչև Լևոն Լուզինյանի ժամանումը: Փաստորեն, Աշոտը ունեցել է իրավունքներ գահի նկատմամբ, սակայն, տեղի տալով իշխող տրամադրություններին, փախել է Եգիպտոս և կրոնափոխ եղել:

Հակված չլինելով մերժել Հ. Դարդելի մեղադրանքները հայ իշխանների և կաթողիկոսի նկատմամբ՝ նշենք միայն, որ, չնայած որոշ ակնհայտ չափազանցություններին, այնուամենայնիվ, հակառակը պնդող աղբյուրներ չկան: Լևոն Լուզինյանի դեմ դավադրություն եղե՛լ է, որի մեջ ներքաշված են եղել պարոն Աշոտը, պարոն Վասիլը, Մարիամ կրտսեր թագուհին (Աշոտի քույրը), Մաթեո դե Շապպը (արքունի դիվանապետը) և այլ իշխաններ: Անշուշտ, այդ ամենին մասնակցած կլիներ նաև կաթողիկոս Պողոս Սսեցին, (1374–1382 թթ.) որը չէր կարող չեզոք մնալ ստեղծված իրավիճակում:

[369] Դարդել, գլ. ՁԳ, էջ 116, գլ. ՁԶ, էջ119, գլ. Ղ, էջ 123, գլ. ՂԶ, էջ 129, գլ. ՂԷ, էջ 130:

[370] Դարդել, գլ. ՁԶ, էջ 119:



## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

## ԿԻԼԻԿԻԱՆ 1375 – 1424 ԹԹ.

Պատմագիտության մեջ ընդունված է 1375 թ. համարել հայոց միջնադարյան վերջին պետականության կորստի թվական: Առայժմ չվիճարկելով այս կարծիքը՝ նշենք, որ հայ աշխարհիկ և հոգևոր վերնախավն այդ շրջանում դեռևս ամբողջությամբ չէր կորցրել իր վաղեմի քաղաքական ուժն ՚ու հեղինակությունը:

Նույն՝ 1375 թ. (ընդունված է նաև 1376 թ.) մամլուքները գրավում են նաև Լամբրոնը:[371] Լամբրոնի տերը, որը պետք է, Հեթումյանների Նղրյան սերունդներից սերած լիներ (քանզի, արդեն XIV դարի սկզբին, Լամբրոնը Տարսոնի հետ միասին, հիշատակվում են որպես արքաեղբոր տիրույթներ),[372] դիմադրություն է ցույց տալիս, որի պատճառով էլ գրավվելուց հետո կողոպուտի է ենթարկվում:

Մամլուքյան գերակայության հաստատումով՝ անկում ապրեցին նաև Կիլիկիայի տնտեսական կյանքի աշխույժ կենտրոնները: Եթե Սիսը, Ադանան և Տարսոնը, այս կամ այն կերպ՝ որպես ամիրությունների կենտրոններ, պահպանեցին իրենց նախկին նշանակության մի մասը, ապա մնացածները՝ Անարզաբան [373] և, մասնավորապես, Այասը, XIV դարի վերջին և XV դարի սկզբին գրեթե կորցրեցին իրենց տնտեսական, քաղաքական և մշակութային նշանակությունը: Դրան զուգահեռ, ծայր առավ նաև մեծ չափերի հասնող արտագաղթ:[374]

[371] ԺԴ Դարի հիշատակարաններ, էջ 520:

[372] Սիսուան, էջ 258:

[373] Հ. Միքայէլ Յովհաննէսեան, Կիլիկեան Բերդեր, Անարզաբա, Բազմավէպ, 1976,

[374] XIV դարում Կիլիկիայից առավելապես գաղթում էին Կիպրոս և Զմյուռնիա: Զմյուռնիայում կիլիկեցիները սկսում են հաստատվել XIV դարի 80-ական թթ.-ից: Այն պայմանավորված էր նաև Հռոդոսի ասպետների Զմյուռնիայում ունեցած մեծ ազդեցությամբ (տե՛ս Վ. Յակոբ, Վ. Քօսեան, Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս, Վիեննա, 1899, էջ 39, Ա. Խառատյան Հայ գաղթականությունը Եգեյանի

Փաստորեն, ամբողջ Դաշտային Կիլիկիան՝ մինչև Կոռիկոս և Լեռնային Կիլիկիայի մեծագույն մասը, հայտնվում են մամլուքյան սուլթանության կամ էլ նրա գերակայությունը ընդունած թուրքմենական Ռամազանյանների խաշնարած ցեղերի և կարամանցի թուրքմենների իշխանության ներքո: Ընդ որում, երկրի գրավման և կողոպուտի հետ միաժամանակ, ի թիվս գերեվարված իշխանների, Եգիպտոս, ինչպես նաև Հալեպ է տարվում հայ բնակչության մի ստվար զանգված, որի շնորհիվ էլ տեղի հայ համայնքը դառնում է Առաջավոր Ասիայի ամենախոշոր հայկական գաղթավայրերից մեկը, որի մահմեդականացված ներկայացուցիչները 1390-ական թթ., ընդհուպ մինչև XV դարի 20-ական թթ., այստեղ զբաղեցնում են բարձրագույն պաշտոններ:[375]

Սակայն Կիլիկիայի լեռնային շրջաններում, մասնավորապես երկրի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան մասերում՝ Կապանի և Բարձրբերդի գավառներում, հայ ավատատերերի իշխանությունը պահպանվեց: Կապանի գավառը, որը կատարում էր թագավորության հյուսիսային և հյուսիս-արևելյան սահմանների առաջապահի, ամրացված շրջանի դեր, մեծագույն ռազմավարական նշանակություն ուներ Հայոց թագավորության համար: Պատահական

մերձափնյա շրջանում (XIV–XVIII դդ.), Պատմա-բանասիրական հանդես, 1988, թիվ 4, էջ 433): Այս շրջանում մեծ թվով հայեր Կիլիկիայից գաղթել են նաև Արևելյան Եվրոպա՝ Բուլղարիա, Վալախիա, Լեհաստան (տե՛ս Հայ գաղթաշխարհի պատմություն (Միջնադարից մինչև 1920 թ.), հ. Ա, Երևան, 2003, էջ 68):

[375] Ինչպես, օրինակ, բռնի կրոնափոխ եղած հայազգի Աբու լ-Ֆարաջ Աբդ Ալլահ էլ-Աշամը, որը սուլթանության վեզիր եղավ 1390–1394 թթ., ապա և նրա որդիներն ու թոռները (տե՛ս Յ. Քիւրտեան, Հայ վզրուկներու գերդաստան մը Եգիպտոսի մէջ մեմլուքներու շրջանին, Բազմավէպ, 1964, թիւ 4–6, էջ 117–120, թիւ 7–9, էջ 213–218, թիւ 10–12, էջ 247–248 (տե՛ս նաև Գէորգ Մըսրլեան, Ականաւոր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947, էջ 125–127): Պետք է նշել, որ հայ համայնքը և՛ Եգիպտոսում, և՛ Ասորիքում ունեցել է գահակալներ դեռեւս XIII դարի կեսերից (տե՛ս Պերճ Սապպաղեան, Հայազգի աթաբեկ եւ Մոսուլի սուլթան Պատր էտ Տին Լուլա, Հայկազեան Հայագիտական Հանդէս, 1981, հ. Թ):



չէ, որ Կոստանդին II-ը ժամանակին ամեն գնով, փորձում էր պահպանել այդ շրջանը, որն ի վերջո նրան հաջողվեց, քանզի Կապանի կորուստը կարող էր թշնամու կողմից երկրի կենտրոնական շրջաններն անարգել մուտք գործելու ճանապարհ բացել:

Ղ. Ալիշանի «Սիսուան»-ում բավական ուշագրավ հիշատակարան է զետեղված, որտեղ գրիչը պատմում է Հեթում վերջին սպարապետի և իր տիկնոջ՝ Զարմանուհու մասին:[376] Ըստ այդ ձեռագրի, Հեթումը, Լևոն Լուզինյանի գերությունից հետո, շարունակում է պայքարը մամլուքների դեմ: Սակայն որոշ ժամանակ անց նա մատնությամբ ձերբակալվում է և սպանվում: Ամուսնու սպանությունից հետո Զարմանուհին փախչում է Կոկիսոնի և Ուլնիայի լեռները և որդու՝ Գեորգի հետ միասին շարունակում պայքարը թշնամու դեմ: Նա տիրում է Կապանի ամրոցին, որտեղ նա և իր սերունդները իշխում են 65 տարի:[377]

Անշուշտ, այստեղ առկա են առասպելի բաղադրիչներ, սակայն, համադրելով փաստերը, կարելի է ենթադրել, որ Հեթումը Կապանին տիրող տոհմի ներկայացուցիչներից մեկն է եղել, որոնցից էին նաև 1369 թ. զոհված սպարապետ Լիպարիտը և թագապահական խորհրդի նախկին անդամ պարոն Վասիլը: Հեթումը ենթադրյալ պաշտոնավարումը կարող էր լինել Կոստանդին III-ի վերջին տարիներին միայն, այն է՝ 1370–1373 թթ.: Ապա ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, մինչև Լեւոն Լուզինյանի ժամանումը Հեթումը հեռացվել է իշխանությունից, քանզի նրա մասին մենք որևէ հիշատակության չենք հանդիպում 1373–1375 թթ., որն, այդ ժամանակ նրա սպարապետ լինելու դեպքում առնվազն, անհասկանալի կլիներ: Բացի այդ, հիշատակություններ չկան 1370 թ. հետո պաշտոնավարած այլ սպարապետների մասին, իսկ սպարապետ Լիպարիտի ազգական լինելը կօժանդակեր և՛ նրա սպարապետ լինելուն, և՛ նրա որդու Կապանին տիրելու հարցում: Չնայած

[376] Սիսուան, էջ 184:
[377] Նույն տեղում, R. Edwards, p. 125.

որ, Ղ. Ալիշանը կասկածանքով է վերաբերվում վերը հիշատակված ձեռագրի գոյությանը,[378] այնուամենայնիվ, չնշելով աղբյուրը, հայտնում է, որ միայն 1435 թ. «Նուածին Կապան եւ այլ ինչ բերդորայք՝ զորս տակաւին ունէին Հայք»:[379] Փաստորեն, Ղ. Ալիշանը ևս հաստատում է Կապանի բերդին 60–65 տարի հայ իշխանների կողմից տիրած լինելու հանգամանքը:

Գ. Գալուստյանը իր երկասիրության մեջ, հիմնվելով ավանդազրույցի վրա, կարծում է, որ Զարմանուհին ու Գեորգը տիրել են նաև Զեյթունին և շրջակա գավառակին:[380] Դա բացառված չէ, քանզի Զեյթունն այդ ժամանակ առնվազն կիսանկախ գոյություն պետք է ունենար, որպեսզի XV դարի ողջ ընթացքում այստեղ հարթավայրային շրջաններից նկատվեր հայ ազգաբնակչության տեղաշարժ:

Բարձրբերդի գավառը՝ Բարձրբերդ ամրոց-բնակավայրով, պաշտպանում էր երկրի հյուսիս-արևմտյան մասը: Այն, ինչպես նաև Կապանի գավառը, Ռուբինյան արքայատոհմի սկզբնական տիրույթն է եղել, որտեղից սկիզբ է առել Կիլիկիայի հայկական պետականությունը:[381] Այդ պատճառով էլ, դեռևս Ռուբինյանների շրջանից, Բարձրբերդը պատկանելիս է եղել իշխող արքայատոհմին: Նույն իրողությունն առկա էր նաև Հեթումյանների ժամանակաշրջանում. Լևոն IV-ի ժամանակ Բարձրբերդը՝ գավառով հանդերձ, պատկանում էր Կոստանդին II-ի հորը՝ Բալդուին մարաջախտին: Բարձրբերդը XIV դարի վերջին և XV դարի սկզբին ևս գտնվել է հայերի ձեռքում, և այստեղ էլ պետք է իշխած լինի Նղրեցիների արքայատոհմի ներկայացուցիչը, ավելի որոշակի՝ 1375–1424 թթ. հիշատակված Կոստանդինը: Փաստորեն, վերոհիշյալ երկու լեռ-

[378] Սիսուան, էջ 184
[379] Նույն տեղում, էջ 561:
[380] Գ. Գալուստյան, Մարաշ, Նիւ-Եորք, 1934, էջ 95:
[381] Բարձրբերդի ամրոցը առաջին ամրացված բնակավայրերից էր, որ ձեռք բերեց Ռուբեն I իշխանը 1080 թթ.-ին (տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց: Աշխատասիրությամբ Կ.Ս. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ102):



նային գավառներից բացի, երկրի մնացյալ տարածքը հայտնվել էր մամլուքյան սուլթանության գերիշխանության ներքո: Բացառություն էր նաև Կոռիկոսի շրջանը, որը 1361 թ. անցել էր Կիպրոսի թագավորի գերիշխանության տակ: Հ. Դարդելը 1374 թ. Կոռիկոս ամրոցի հրամանատար է հիշատակում Կոստանդին Բրագանացուն (Պռականցուն):[382] Ղ. Ա լիշանը կարծում է, որ նա Կոռիկոսից մի փոքր դեպի հյուսիս-արևելք գտնվող Պրականա բերդի տերը պետք է լիներ,[383] որը ծառայության էր մտել Կիպրոսի արքայի մոտ: Փաստորեն, Կոռիկոսի շրջանը ևս զերծ էր մնացել մամլուքյան գերիշխանությունից և հավանական է, որ շրջակա բերդերում Պրականայում, Այաշում ու Լամոսում նույնպես պահպանվել էին հայկական իշխանների տիրույթները: Սրանք Կիպրոսի թագավորության բնական դաշնակիցներն էին՝ ծովեզերքում հաստատվելու և ամրապնդվելու գործում: Ինչ վերաբերում է Կոռիկոսի շրջակայքում եղած հայկական բնակչության թվաքանակին, ապա կարծում ենք, որ ճիշտ է Հ. Տեր-Ղազարյանի այն կարծիքը, որ Կոռիկոսում և շրջակայքում հայերը երբեք մեծամասնություն չեն կազմել:[384]

Ղ. Ալիշանը նույնիսկ նշում է, որ Սիսը գրեթե հայերի ձեռքին էր, ընդհուպ մինչև 1467 թ.:[385] Ամբողջովին չժխտելովականավոր հայագետի տեսակետը, կարծում ենք, որ դա չափազանցություն է: Գտնում ենք, որ հեղինակը նկատի է ունեցել ժամանակ առ ժամանակ հայերի կողմից Սսին տիրելու փաստը, որը բացառված չէր կարող լինել XV դարասկզբին:

Դարդելը նշում է, որ 1375 թ. ապրիլին Լևոն Լուզինյանի հետ Կահիրե տարվեցին ևս քսան մեծամեծեր: Չհաշվելով Դյուկարտին, իր տիկնոջը, Մարիամ և Մարգարիտ թագուհիներին՝ ստացվում է, որ գերության են ուղարկվել տասնհինգ բարձրաստիճան հոգևո-

[382] Դարդել, գլ. ԿԸ, էջ 91:
[383] Սիսուան, էջ 391:
[384] Յ. Տէր Ղազարեան, Կոռիկոսի ամրոցները, Բազմավէպ, 1947, թիւ 9–10, էջ 226:
[385] Ղ. Ալիշան, Յուշիկք հայրենեաց Հայոց, էջ 164:

րականներ և իշխաններ, որոնց թվում նաև Պողոս Սսեցի կաթողիկոսը: Մ. Քելեշյանի կարծիքով գերված իշխանների և հոգևորականների թիվը հասել է վաթսունինի:[386] Դժվար է այդ կապակցությամբ ճշգրիտ թիվը նշել, քանզի Մ. Քելեշյանի մատնանշած թիվը աղբյուրներով չի հիմնավորվում: Առավել հավանական է Հ. Դարդելի ներկայացրած թիվը: Գերեվարված իշխանները Կահիրեում երկար չեն մնում: Նույն 1375 թ. հուլիսին նրանք սուլթանին հավատարմության երդում տալով իրավունք են ստանում վերադառնալու Կիլիկիա և վերատիրելու իրենց կալվածքներին. «Եւ նոքա խնդրեցին շնորհս ի սուլթանէն զի թողցէ զնոսա դարձ առնել յաշխարհն հայրենի և վայելել զինչս ժառանգութեան իւրեանց, կացեալ ընդ լծով իշխանութեան նորա. եւ սուլթանն եթող զնոսա գնալ»:[387]

Սակայն իշխանները և կաթողիկոսը Կիլիկիա են վերադառնում ոչ միակամ. սուլթանը, մինչ նրանց հետ ուղարկելը, հավատափոխության առաջարկ էր արել ինչպես Լևոն Լուզինյանին, այնպես էլ՝ իշխաններին: Վերջիններից հինգը, որոնց թվում և պարոն Վասիլը, հավատափոխ են լինում:

Իշխանները վերադառնալով վերահաստատվում են իրենց կալվածքներում: Ընդ որում, Վասիլը, որը Թորոս Կապանցի սպարապետի որդին էր և Լիպարիտ սպարապետի եղբայրը, ըստ երևույթին հետագայում հաստատվում է Մոլեվոնում, որը գտնվում էր Լամբրոնի և Բարձրբերդի գավառների միջակայքում, քանզի Կապանը արդեն զբաղեցված էր իր ազգական Գեորգի կողմից:

Հատկանշական է, որ իշխանների ուրացությունն արդեն նախադեպ ուներ: Հ. Դարդելը նշում է, որ Օշին Նղրեցու որդին՝ մայրական գծով Օշին Կոռիկոսցու թոռ Աշոտը, մինչև 1375 թ. գտնվելիս է եղել Կահիրեում:[388] Նպատակ ունենալով տիրել Հայոց գա-

386 Մ. Քելեշեան, էջ 65:
387 Դարդել, գլ. ՃԺԲ, էջ 154:
388 Նույն տեղում, գլ. ՁՁ, էջ 119:



հին՝ նա հավատափոխ է եղել և ծառայության անցել սուլթանի
մոտ: Հայ իշխանները, Լևոն Լուզինյանի իշխանության առաջին
ամիսներին նամակով դիմում են հենց այս Աշոտին. «Եւ խոստա-
նային թղթովքն այնոքիւք մատնել ի ձեռս նորա զքաղաքն Սիս եւ
զաշխարհն բովանդակ եւ թագաւորեցուցանել զնա ի վերայ Հայոց,
եթէ յարուցեալ եկեսցէ ի Հայս բազմութեամբ զօրաց սուլթանին»:[389]
Ռուդտ Քոլլենբերգը կարծում է, որ այս Աշոտի հայրն է եղել
Օշին Օղրեցին, որի գոյության և ով լինելու մասին նա ոչ միայն չի
հաղորդում, այլ նաև պարզ չի դառնում այդ Օղրի ամրոցի տեղա-
կայման վայրը: Այդ անունով ամրոց և նման անունով իշխան մեզ
հայտնի չէ: Այնուամենայնիվ, Քոլլենբերգը անտեսում է նաև Հ.
Դարդելի տեղեկությունն այն մասին, որ Աշոտը Օշին Նղրեցու որ-
դին է եղել: Այս պարագայում, անշուշտ, ընդունելի է սկզբնաղբյու-
րի՝ այսինքն Դարդելի հաղորդած տեղեկություններն այն մասին,
որ Աշոտը եղել է Օշին Նղրեցու որդին: Այս դեպքում կարող է բա-
ցատրելի լինել Աշոտ իշխանի նկրտումը Հայոց գահի նկատմամբ:
Մայրական կողմից նա սերում էր Հեթումյանների Կոռիկոսյան ճյու-
ղից, իսկ հայրականից՝ Հեթումյանների Նղրյան, արքայական տոհ-
մից:
Սակայն, այստեղ հարցեր են ծագում, որոնք մնում են անպա-
տասխան: Առաջինն Օշին Նղրեցու անձի ճշտումն է: Նղրեցիների
արքայատոհմից մեզ Օշին անունով մեկ անձ է միայն հայտնի՝
Կոստանդին II-ի վաղամեռիկ որդին, որը մահացել էր 1356/1357 թ.:
Նույն թվականին մահացել է նաև Օշինի եղբայր Լևոնը: Կոստան-
դին II-ի երրորդ որդու՝ Հեթումի մասին ցավոք ոչինչ հայտնի չէ:
Քիչ հավանական կարող է լինել նաև Աշոտի՝ Բալդուին մարաջախ-
տի եղբայր Հեթումի որդիներ Ջոֆրի և Կոստանդին III Նղրեցիների
սերունդը լինելու հավանականությունը: Քանզի, բացի այն, որ
նրանց զավակ ունենալու մասին մեզ ոչինչ հայտնի չէ, ժամանա-

389 Նույն տեղում:

կային առումով ևս հնարավոր չէ Աշոտ իշխանի՝ նրանց թոռ լինելը: Ռուդտ Քոլլենբերգը, առաջ է քաշում մի հետաքրքիր վարկած, նշելով, որ 1376 թ. հետո հիշատակված վիճահարույց Կոստանդին թագավորը եղել է Կոստանդին II Նղրեցու երրորդ որդու որդին:[390] Եթե անգամ դա ընդունենք, այդ դեպքում նույնպես, նա չի կարող Օշին Նղրեցին լինել, քանզի չէր կարող ամուսնանալ իր մորաքրոջ՝ Մարիամ Կոռիկոսցու հետ (Կոստանդին II-ի կնոջ):

Սակայն Կոստանդին II-ը և Մարիամ Կոռիկոսցին ամուսնացել են միայն 1340 թ., մինչդեռ հայտնի է, որ Կոստանդինի ավագ որդի Լևոնը, ծնվել է 1338 թ. օգոստոսին: Այսպիսով, Կոստանդինը նախքան 1340 թ., ևս մեկ անգամ ամուսնացած է եղել, որի մասին աղբյուրները լռում են: Եվ միանգամայն հնարավոր է Օշինի ամուսնացած լինելն ու զավակներ ունենալը մինչև 1356 թ.՝ իր մահը: Այնուամենայնիվ, դա Օշին Նղրեցու անձը ճշտելու քիչ թե շատ հավանական միակ տարբերակն է: Օշին Նղրեցու ժառանգներ ունենալու մասին կարող է վկայել նաև XV դարի II կեսին Հռոմում մահացած Ալմերիկո Լուզինյան-Լոլլիի տապանագիրը, որտեղ նշվում է, որ նա եղել է Բալդուին Լուզինյանի որդին, որն իր հերթին Կոստանդին Հայոց թագավորի որդի Օշինի որդին էր:[391] Այստեղ, անշուշտ, շփոթ գոյություն ունի, քանզի Ալմերիկոն չէր կարող Օշին Նղրեցու թոռը լիներ: Լավագույն դեպքում նա կարող էր Օշինի ծոռը լինել: Անշուշտ, այդ ցանկի մեջ պակասում են մեկ կամ երկու անուններ: Բացի այդ, Կոստանդին II Հեթումյան Նղրեցին նույնացվել է Լուզինյանների հետ և դա զարմանալի չէ, քանզի Եվրոպայում առավել հասկանալի և ընդունելի էր Լուզինյանների տոհմանունը: Սակայն, այստեղ էականը Կոստանդին թագավորի որդու՝ Օշինի սերունդներ ունենալու փաստն է, որին Հ. Դարդելը, հավատարիմ մնալով Լուզինյաններին ապահովագրելու սկզբունքին, համարել

³⁹⁰ Rüdt Collenberg, p. 75.

³⁹¹ Հ. Վարդան Հացունի, Նորակերտ Հայ Լուսինեանններ, Բազմավէպ, 1955, թիւ 6–7, էջ 152–156:



էր անզավակ: Մի բան հաստատ է, որ Աշոտ իշխանը, որն, ըստ Հ. Դարդելի, բավական լուրջ հավակնություններ է ունեցել Հայոց գահի նկատմամբ, պետք է պատկանած լինի Նղրեցիների արքայատոհմին, որի մասին ակամայից նշում է նաև Հ. Դարդելը:[392] Անեն դեպքում Աշոտ Նղրեցու գահակալական նկրտումները չեն իրագործվում մեզ անհայտ պատճառներով, հավանական է, որ նա այլևս Կիլիկիա չի վերադառնում, քանզի նման ազնվատոհմիկ իշխանի վերադարձը հայրենիք, որը հայկական իշխող ավագանու կողմից ընկալվում էր որպես գահի հիմնական թեկնածու, կարող էր տհաճություններ պատճառել մամլուքյան արքունիքին:

Հարկ է նշել, որ Կիլիկյան Հայաստանի դիվանագիտական և քաղաքական միտքն առաջին իշխանական տների հաստատումից մինչև թագավորության անկումը, սերտորեն կապված է եղել միջնադարի ամենաառանցքային հարցերից մեկի՝ դավանաբանական խնդիրների հետ: Իշխող հոգևոր ու աշխարհիկ տերերի համար դիվանագիտությունը և հոգևոր ոլորտի խնդիրները միահյուսված էին: Դրանով էր պայմանավորված դավանաբանական հարցերում նրանց դիվանագիտական «զիջումներն» Արևմուտքին, որի գերնպատակը պետականության գոյության ապահովումն էր: Իրավիճակը կարճատև փոփոխություն կրեց միայն 1370-ական թթ., երբ Աշոտ Նղրեցին, որը գահի իրական հավակնորդներից մեկն էր, կատարեց նույն դիվանագիտական քայլը, այս անգամ, սակայն, տրամագծորեն հակառակ ուղղությամբ՝ ընդունելով մահմեդականություն: Այդ քաղաքականության որդեգրումը շարունակվեց նաև տրոշ իշխանների կողմից, որոնց թվում էին նաև վերը հիշատակված հինգ հայ իշխանները:

Հավատուրացության այդ փաստը Կիլիկիայում ընդունված կրոնա-քաղաքական դիվանագիտության մի մասն էր, ընդամենը՝

³⁹² Հ.Օ. Սեքուլյանը կարծում է, որ Աշոտ Նղրեցին Կոստանդին III-ի եղբորորդին էր (տե՛ս Վիեննայի Մխիթարեան թանգարանի Կոստանդին Գ-Լեւոն Ե դրամները– Քօրփուս Պոուկեան, Հանդէս Ամսօրեայ, 1971, թիւ 1–3, սյուն 81):

տրամաբանական շարունակությունը, երբ, պետականության շարունակականությունն ապահովելու այլ՝ ելք չտեսնելով, երկրի իշխող վերնախավի մի մասը դիմում է այդ ծայրահեղ քայլին:

Ուրացյալ իշխանների մեջ էր նաև, ինչպես վերը նշվեց, իշխան Վասիլը՝ թագապահ խորհրդի նախկին անդամը, Կապանցիների ազդեցիկ տոհմի ներկայացուցիչը, որն ուրացող իշխանների հետ մնում է Եգիպտոսում:

1405 թ. Գրիգոր Խլաթեցու «Մեկնության ծաղկաքաղ»-ում հիշատակվում է «Մեծազարմ իշխանաց իշխան պարոն Վասիլ՝ հանդերձ աստուածապարգեւ զաւակաւք իւրովք»:[393] Սա նույն Թորոս Կապանցի սպարապետի որդի, Լիպարիտ սպարապետի եղբայր՝ թագապահական խորհրդի նախկին ազդեցիկ անդամ Վասիլն էր, որը հավատափոխ լինելով, վերադարձել էր Կիլիկիա: Սակայն, դատելով հիշատակարանում մեջբերած բնորոշումից՝ Վասիլը վերադարձել էր նախնիների հավատին: Հետաքրքրական է նաև 1404 թ. Ասըլպեկ (Ասիլ բեկ) իշխանի հիշատակումը Կիլիկիայի իշխանական մեծ գաղթի ժամանակ: Հիշատակագիրը նշում է. «չորեքշաբթի գնաց Պարոն Ասըլպէկն եւ իրիցունք նոցա. Յովհաննէս եւ Վահան, Գրիգոր եւ Ստեփանոս...»:[394] Ընդ որում, Ասիլբեկի անունը հիշատակվում է թագավորի թոռան անունից հետո, ինչից կարելի է եզրակացնել, որ վերոհիշյալ Ասիլբեկը, առնվազն, ազդեցիկ իշխան է եղել: Ասիլ բեկը, նույն Վասիլ իշխանն է, որը մահմեդականություն ընդունելուց հետո՝ որպես պատվանուն, ընդունել է «բեկ» տիտղոսը, իսկ անվան սկզբի «Վ» տառը սղվել է, ինչպես հաճախ լինում է բառասկզբի բաղաձայնների հետ: Ասիլ բեկ-Վասիլի սերունդներին մենք հանդիպում ենք ավելի ուշ շրջանում և:[395]

[393] ԺԵ դարի հիշատակարաններ, h. Ա, (1401–1450 թթ.), էջ 55:

[394] Սիսուան, էջ 542:

[395] Հր. Աճառյանը կարծում է, որ Ասլ բէք անձնանունը նշանակում է «իսկական բեկ» (տե՛ս Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, h. Ա, Երևան, 1942, էջ



Իշխանական համակարգի հետ պահպանվեց նաև Հայոց եկե-
ղեցին: Գերյալ իշխանների հետ միասին, Կիլիկիա վերադարձավ
նաև աքսորյալ կաթողիկոս Պողոս Սսեցին, որը աթոռակալեց
մինչև 1382 թ.: Նրան հաջորդեց Թեոդորոս Բ Կիլիկեցին (1382–
1392 թթ.): Այս շրջանի Հայոց եկեղեցական համակարգում, բացա-
ռությամբ Աղթամարի կաթողիկոսության, այլ ազդեցիկ կենտրոն-
ներ չկային, սակայն, Սսի կաթողիկոսության իշխանությունը և ազ-
դեցությունն աստիճանաբար թուլանում էր:

Սսի նվաճումով մամլուքյան սուլթանությունը, այնուամենայ-
նիվ, նախկին թագավորության տարածքը չմիավորեց մեկ վարչա-
կան համակարգի մեջ: Սիսը, որպես առանձին նահանգային միա-
վոր, մտցվեց սուլթանության կազմի մեջ: Մինչ այդ, առանձին վար-
չական միավորներ էին ստեղծվել նաև Ադանա և Տարսոն քաղաք-
ների համար: Այսպիսով, Կիլիկիան որպես վարչական միավոր XIV
դարի երկրորդ քառորդին արդեն դադարել էր միասնական լինե-
լուց: Այն բաժանված էր սուլթանության ամիրությունների, կարա-
մանցի թուրքմենների և հայկական իշխանությունների միջև, որոնք
բոլորն էլ ընդունել էին մամլուքյան սուլթանի գերիշխանությունը:
Անընդմեջ ավարառությունների ու արշավանքների արդյունքում
Կիլիկիայի տնտեսությունը, մասնավորապես առևտուրն ու ար-
հեստները ծայրահեղ անկում ապրեցին:

Այս ամենի հետևանքով XIV դարի երկրորդ կեսին Կիլիկիայի
հայ բնակչության շրջանում սկսեց նկատվել մի նոր երևույթ, որը,
մինչ այդ, իրեն զգացնել էր տալիս նվազ չափով: Դա զանգվածա-
յին արտագաղթն էր: Արդեն 1360-ական թթ. հայերը սկսեցին զանգ-
վածաբար հաստատվել Միտիլենե ու Կրետե կղզիներում, որոնք
պատկանում էին Հիվանդախնամ ասպետներին և Վենետիկի հան-
րապետությանը: Առավել հավանական է, որ այստեղ գաղթած հա-
յերի ճնշող մասը եկել են Կիլիկիայից: Գաղթը, սակայն, առավել

224): Այստեղ առավել հավանական է Վասիլ Բեկից -> Ասիլ բեկի վերափոխման տարբերակը:

սպառնալի չափեր ընդունեց XV դարի սկզբին:

Մամլուքյան սուլթանությունը քայլ առ քայլ գնում էր հայ հոգևոր և քաղաքական վերնախավի ոչնչացման ճանապարհով: Ղ. Ալիշանը նշում է, որ 1390–1392 թթ. սուլթան Բարկուկը (իշխել է 1382 թ.-ից) նվաճում է Կիլիկիայի մեծ մասը,[396] որին հաջորդում է Թեոդորոս կաթողիկոսի և 16 հայ իշխանների սպանությունը: Իսկ մինչ այդ՝ 1382 թ., Բարսեղ պատրիարքի մահով, փաստորեն, դադարել էր գործել Հակոբիկ ասորական եկեղեցու թե՛ պատրիարքարանը, և թե՛ եկեղեցու գլխավոր կենտրոնը Սսում:[397]

Փաստորեն, Սիսն իր շրջակայքով, մինչև 1390–1392 թթ. կառավարվել է հայ իշխանների կողմից, որոնց նվաճել է Բարկուկը: Դա կարող է հաստատվել նրանով, որ Մելիք Օմարից առաջ չի հիշատակվում Սսի մամլուքյան որևէ կուսակալ: Իսկ 1390–1392 թթ. Սսի և նահանգի կառավարիչ է նշանակվում Մելիք-Օմարը, որը առավելապես հայտնի էր իր անգիջում և դաժան վարքագծով: Այս վերջինիս էլ ժամանակակիցները տալիս են «Սսոյ պիղծ» մակդիրը:[398] 1392 թ. Սսում նա դավադրաբար սպանում է Թեոդորոս Բ կաթողիկոսին և 16 հայ տանուտերերի:[399] Ըստ էության, վերջիններս եղել են իշխաններ, սակայն, ցավոք, պատմագիրը չի հաղորդում նրանց ով լինելու մասին: Կաթողիկոսի և այսքան մեծաթիվ իշխանների սպանությունը, ամենայն հավանականությամբ, հետևանք է եղել հայերի ըմբոստության փորձի, այլապես այդ ամենը կարվեր առավել զգուշորեն, մանավանդ, որ հայոց պետականության կորուստը Սսի շրջանում ոչ վաղ անցյալում էր տեղի ունեցել: Ըստ Թովմա Մեծոփեցու, սուլթանը շուտով այդ ոճրագործություն համար մահապատժի է ենթարկում Մելիք Օմարին: Թեոդորոս Բ-ին հաջորդեց Կարապետ Ա Կեղեցին (1390–1404 թթ.), որը կարծիք կա, որ, փորձում էր կաթողիկոսական աթոռը տեղափոխել Արևելյան Հայաստան:[400] Փաստորեն, արդեն XIV դարի վերջին տասնամյակում Կիլիկիայի հոգևորական վերնախավն անիմաստ էր համարում ընդհանրական աթոռի տեղակայումը Կիլիկիայում, որը հետևանք էր և՛ ուժգնացող ճնշումների, և՛ քաղաքական հեռատեսության: Այնուամենայնիվ, այդ ամենը վկայում է Կիլիկիայում կաթողիկոսական ընդհանրական աթոռի անապահովության մասին, որն աստիճանաբար կորցնում էր իր համահայկական նշանակությունը և հեղինակությունը:

Կիլիկիայում պահպանված հայկական ազնվականության մասին է վկայում նաև XV դարի սկզբին այդտեղ այցելած գերմանացի Յոհան Շիլդբերգերը «Սուրբ մըն ալ ունին, որ քաջ մըն էր, Սարգիս անունով... շատ մը զինուորներ եւ ազնուականներ անոր համար երեք օր ալ ծոմ կը պահին Յունուարի մեջ...»:[401] Յ. Շիլդբերգերը աշխատության հայերին առնչվող սկզբնական մասում նշել էր, որ «Հայաստան երեք թագաւորութիւններ կը պարունակէ, մեկը Թիֆ-

---

[396] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 560:

[397] Լ. Տէր-Պետրոսեան, Ասորիների դերը Հայկական Կիլիկիոյ մշակութային կեանքում, Բազմավէպ, 1987, թիւ 1–4, էջ 129:

[398] Բաբգէն Վարդապետ Թօփճեան, Կիլիկեան շրջան (1375–1441), վարդապետական աւարտաճառ, Անթիլիաս, 1965, էջ 42:

[399] Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն: Պատմութիւն Լանկ Թամուրի, աշխատասիրությամբ Լևոն Խաչիկյանի, Երևան, 1999, էջ 116:

[400] Բաբգէն Ա Աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ, Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ, Անթիլիաս 1939, էջ 35: Գ. Հարությունյանը իրավամբ նշում է, որ «Անկախ նրանից, որ հոգևոր նվիրապետը շարունակում էր ներկայանալ հայոց կաթողիկոսի տիտղոսով և աշխատում էր պահպանել նախկին վիճակը, (1292 թ. հետո – Դ.Թ.) կաթողիկոսությունը դանդաղորեն պարփակվում էր Կիլիկյան պետականության համակարգում...» (տե՛ս Աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունները Կիլիկյան Հայաստանում Հեթում II-ի գահակալման երկրորդ շրջանում (1293–1306 թթ.), Պատմության հարցեր, Տարեգիրք, 2009, 1, էջ 53): Դրա հետ մեկտեղ XIII դարավերջից արդեն Մեծ Հայքի հոգևոր և աշխարհիկ վերնախավի շրջանում խմորվում էր կաթողիկոսական աթոռը էջմիածին տեղափոխելու գաղափարը (տե՛ս Ստեփաննոս Օրբելյան, Ողբ ի ս. Կաթուղիկէ, հրատ. Կ. Կոստանյանցը, Թիֆլիս 1885 թ., էջ 48):

[401] Յովհաննէս Շիլթպերկէրի ուղեւորութիւնը ի Հայաստան, թարգմ. Հ. Ֆոկոլեան, Բազմավէպ 1959, թիւ 11–12, էջ 240 (այսուհետև՝ Յովհաննէս Շիլթպերկէր):

լիզ կը կոչուի, միւսը՝ Սիս, եւ երրորդը՝ Երզնկայ»:[402] Անկասկած հեղինակը վրացական թագավորությունը շփոթել է հայկականի հետ, իսկ Երզնկայում այդ շրջանում հայկական պետականություն չկար: Յ. Շիլդբերգերը քիչ հետո նշելով, որ Հայոց թագավորությունը հայերը կորցրել են մայրաքաղաքով՝ Սսով հանդերձ, միևնույն ժամանակ, ներկա ժամանակով է խոսում Հայոց թագավորության մասին:[403]

Հատկանշական է, որ Լևոն Լուզինյանից հետո Աշոտ Նղրեցին Հայոց գահի միակ թեկնածուն չի եղել: Սամուէլ Անեցու ժամանակագրության Շարունակողը 1376–1378 թթ. համարում է ոմն Կոստանդինի թագավորության սկիզբ:[404] Ժամանակագիրը տալիս է երկու թվական՝ փրկչական ՌՅՀԸ (1378 թ.) և հայկական ՊԻԵ (1376 թ.): Գտնում ենք առավել ստույգ կարող է լինել երկրորդ թվականը: Նշենք նաև, որ պահպանվել են նաև Կոստանդինի հատած դրամները:[405]

Ղ. Ալիշանը մեջբերելով Հակոբ Սսեցի ժամանակագրին, նույնպես տալիս է Կոստանդինի անունը, որպես Հայոց թագավոր, և ինչպես Սամուէլ Անեցու Շարունակողը գրում է, որ նա իշխեց 48 տարի և ապա անցավ Կիպրոս:[406]

Այս Կոստանդինը ևս պետք է պատկանած լիներ Նղրեցիների տոհմին: Նրա ծագման միակ հավանական տարբերակը, ինչպես Աշոտ Նղրեցու պարագայում, Կոստանդին II-ի թոռը լինելու հանգամանքն է: Հավանական է, որ Աշոտը և վերոհիշյալ Կոստանդինը

[402] Նույն տեղում:
[403] Նույն տեղում:
[404] Սամուէլ Անեցի, էջ 170:
[405] Bedoukian P., Coinage of Cilician Armenia. The American Numismatic Society. New York 1962, p. 410, տախտակ XLVIII:
[406] Սիսուան, էջ 543: Այս առումով անհասկանալի է թվում Ս. Պողոսյանի կարծիքը, ով փորձում է անեն կերպ ժխտել այս աղբյուրների տեղեկությունները (տե՛ս Ս. Պողոսյան, Կիլիկյան թագավորության անկման մասին, Բանբեր Երևանի Համալսարանի, 1974, 1, էջ 166–167):



եղբայրներ են եղել, Կոստանդին II-ի անդրանիկ որդու զավակները: Սակայն հնարավոր է նաև, որ Կոստանդինը եղած լինի Աշոտի հորեղբայր Հեթումի (Կոստանդին II-ի երրորդ որդու) տղան: Երբ 1375 թ. հետո հայոց թագավոր Լեւոն Լուզինյանը գերեվարվում է, ավագանու կողմից գահաժառանգ համարվող Աշոտ Նղրեցին չի վերադառնում հայրենիք, ապա օրինական կարող էր լինել Կիլիկիայում մնացած իր եղբոր կամ մոտ ազգականի՝ Կոստանդինի թեկնածությունը: Ցավոք, Կոստանդինի մասին տեղեկությունները չափազանց սուղ են: Մեզ հայտնի չեն նրա իշխանության տարիներ մանրամասները: Այնուամենայնիվ, Կոստանդինի իշխանությունը, չնայած ընդունված թագավոր տիտղոսին, կրել է իշխանապետի բնույթ: Դա է փաստում 1423 թ. մի վկայություն, որտեղ կաթողիկոսի հիշատակումից հետո նշվում է «Ի թագաւորութեան Հայոց պարոնաց»:[407] Կոստանդինը Հայոց պարոնների մեջ ընդաագիս պարոյնաց»: Կոստանդինը Հայոց պարոնների մեջ ընդամենը համարվել է ավագագույնը:

1413 թ. Կոստանդին Վահկացու պատվիրած ձեռագրի հիշատակարանում նշվում է. «Յիշխանութեան Հայոց պարոնացն պատակարանում Կարապետին եւ պարոն Թորոսին՝ որդիք պարոն Ասիլպարոն Կարապետին եւ պարոն Թորոսին՝ որդիք պարոն Ասիլպակին»:[408] Ասիլբեկը, որ Կիլիկիայից գաղթել էր դեռևս 1404 թ., իր հետ էր տարել որդիներին, որոնց մեջ բացակայում են Կարապետի և Թորոսի անունները: Այսպիսով, չնայած Վասիլը 1404 թ. հեռացել էր Կիլիկիայից, սակայն նրա հեղինակությունը և նախկին դիրքը որոշակիորեն պահպանվում են՝ ի դեմս Կիլիկիայում մնացած մյուս որդիների:

Ահա այս անջատ-անջատ իշխանությունների մեջ առանձնանում է գերակայի՝ Կոստանդին Նղրեցու իշխանությունը: Թագավորական իշխանության գոյությունը հաստատվում է այլ փաստերով ևս: Մամլուքյան սուլթան Աբու Նասրը 1415 թ. Կիլիկիայով անցնող առևտրականներին ապահովության երաշխիքներ տրամադրելու

[407] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Ա, էջ 309:
[408] Նույն տեղում, էջ 328–330:

խնդրանքով դիմում է Վենետիկի դոժին: Նա նշում է նաև Սսի կողմնակալի և վենետիկցիների դաշնակիցների՝ թագավորաբնակ հայերի մասին:[409] Այսպիսով, 1415 թ. Լեռնային Կիլիկիայում պահպանված հայկական պետականությունն ընկալվում էր որպես թագավորություն, որը դաշնակցային պարտավորություններ ուներ Վենետիկի Հանրապետության հետ: Այս ամենը գալիս է հաստատելու, որ Կոստանդին Նղրեցու իշխանությունը Լևոն Լուզինյանի թագավորության իրավահաջորդն էր համարվում ոչ միայն տեղի հայկական միջավայրում, այլև շրջակա պետությունների մոտ: Այլ բան է, որ այդ իշխանությունն իր հզորությամբ քիչ աղերսներ ուներ նախկին թագավորության հետ:

XIV դարի վերջին տասնամյակը և XV դարի առաջին տարիներն Առաջավոր Ասիայի պատմության իրավամբ ամենամռայլ ժամանակաշրջաններից էր: 1387 թ. սկսած մինչև 1403 թ. Լանկ Թամուրը չորս արշավանք կատարեց Առաջավոր Ասիա: 1394 թ. նա ընդհուպ մոտեցավ նաև Կիլիկիային՝ գրավելով Ուռհա (Եդեսիա) քաղաքը: Լանկ Թամուրի զորքերը 1401 թ. արշավանքի ընթացքում ներխուժեցին նաև Կիլիկիա:[410] Վերջինիս Սսի վրա կատարած արշավանքի մասին հիշատակվում է նրա 1401 թ. Ասորիք կատարած արշավանքի ընթացքում, որի ժամանակ նա և՛ ավերում, և՛ այրում է Սսի բերդը:[411] Կիլիկիան ավերելուց հետո նա անցավ Ասորիք, որտեղ ջախջախեց մամլուքյան սուլթանությանը: Մամլուքներին պարտության մատնելուց հետո Լանկ Թամուրը եռօրյա ավերի ենթարկեց Հալեպն ու Դամասկոսը:[412] Մամլուքյան սուլթան Ֆարա-

---

[409] Միսուան, էջ 228:

[410] Գ. Կիրակոսյան, Հայաստանը Լանկ-Թամուրի եվ թուրքմեն ցեղերի արշավանքների շրջանում, Երևան, 1997, էջ 67, Մ. Օրմանեան, սյուն. 2004:

[411] Միսուան, էջ 542:

[412] Թովմա Մեծոփեցի, Պատմագրություն, Լանկ Թամուրի արշավանքները Հայաստան, էջ 130, Հեթում Ախտուց տիրոջ և Վասիլ Մարաջախտի ժամանակագրությունները, էջ 196, Մ. Օրմանեան, սյուն. 2004, K. Setton., p. 490, Philipp Hitti. The Arabs, Chicago, 1949, p. 232.



ջը ստիպված ընդունեց նրա գերիշխանությունը:[413]

1402 թ. Կիլիկիայում տեղի է ունենում մի իրադարձություն, որն իր ծավալներով աննախադեպ էր: Ինչպես գրում է Մաղաքիա Դպիրը «Ի սոյն ժամանակի (1402 թ.), որ ետ բառնալոյ թագաւորութեանն Հայոց ի աստ... ժողովեցան թագաւորազունք եւ իշխանք եւ բազումք ի ժողովրդոց, մտեալ՝ ի նաւ՝ գնացին՝ ի Ֆրանկաստան»:[414] Այսպիսի զանգվածային գաղթ, որին մասնակցեին հասարակության ամենալայն շերտերը՝ սկսած հասարակ բնակչությունից մինչև թագավորական ծագում ունեցողները, առաջին անգամ էր լինում Կիլիկիայում: Սա, ըստ երևույթին, արդյունք էր թեմուրյանների կամ էլ ռամազանյան ցեղերի արշավանքների:

Կիլիկիայի հայությանն այս շրջանում առավել անհանգստացնող են եղել ռամազանյանները, քանզի Լանկ Թամուրը հետ էր դարձել: Ինչ վերաբերում է մամլուքյան սուլթանությանը, ապա այն ինչպես նշեցինք, պարտվել էր 1401 թ. Թամուրի դեմ պայքարում և նույնիսկ ընդունել էր նրա գերիշխանությունը, ուստի և ժամանակավորապես կորցրել էր իր ազդեցությունը տարածաշրջանում:

Դա հաստատվում է նաև 1404 թ. մի հիշատակարանից. «Մեծ ժողով եղեւ Կիլիկեցոցն ի դուռն Կարապետ կաթողիկոսին որ վասն գալստեանն Ռամազանին եւ այլ պատերազմաց, ծանծրացեալք՝ ի նեղութենէ, եւ տեսեալ զաւերումն իւրեանց երկրին եւ զզօրանալն անհաւատից, անցան յայնկոյս ծովուն տունս ԼՌ (երեսուն հազար)»: Ապա նշվում է, որ երեքշաբթի մեկնում է Կոստանդին թագավորի թոռ Կարապետը, չորեքշաբթի՝ Պարոն Ասըլպեկը, (Վասիլը – Դ.Թ.) իր ավագ որդիների հետ, ապա գրիչը շարունակում է «Եւ ոչ ոք մնաց ի մեծատանց եւ յիշխանաց, եւ ի պարոնաց, եւ ի թագաւորի ցեղիցն, ոչ այր եւ ոչ կին, ոչ արու եւ էգ.... Եւ յետ երթալոյն իշխանացն եւ մեծատանցն, ի Սիս մնացեալ աղքատք եւ

---

[413] B. Spuler. The Muslim World. Part II, The Mongol period, p. 78.

[414] Միսուան, էջ 542:

չքաւորք՝ որ ոչ ունէին զկարողութիւն փախչելոյ՝ եւտուն զՍիս»:[415] Փաստորեն Սիսը 1404 թ. նվաճվեց ռամազանյանների կողմից:[416]

Կիլիկիայում տեղի ունեցած արտագաղթն իր քանակով և վերնախավի մասնակցության առումով աննախադեպ էր: Այս արտագաղթն անշուշտ սկսած դեռևս արաբական տիրապետության շրջանից, իր նմանատիպ օրինակներն ուներ հայոց պատմության մեջ, սակայն Կիլիկիայից այդպիսի զանգվածային և որակապես առավել գործուն հայ բնակչության արտագաղթ առաջին անգամ էր լինում: Իհարկե, մենք հակված չենք լիարժեք ճշմարտություն համարել երեսուն հազար ընտանիք գաղթողների թիվը, քանզի գրեթե անհնար կլիներ այդքան մեծ բազմությանը՝ մոտ հարյուր հիսուն հազար մարդու անցումը ծովով Կիպրոս, Յոնիական Արքիպելագոս կամ մայրցամաքային Եվրոպա:[417] Այդ թիվը անհավանական են համարել նաև Մ. Օրմանյանը և Ա. Ալպոյաճյանը:[418]

Կարելի է հաստատապես պնդել, որ գաղթողների թիվը մի քանի տասնյակ հազարի է հասել, և որ առավել կարևոր է, ինչպես նշում է պատմիչը, հեռացողների մեջ էր երկրի վերնախավը՝ ազնվականությունը, երկրի առավել ունևոր խավերը, այսինքն՝ արհեստավորներն ու առևտրականները, և որ առավել վատթարն է՝ իշխող թագավորական ընտանիքի անդամը՝ արքայազն Կարապետը: Դա կարող էր վկայել միայն մի բանի մասին՝ երկրի, պետության նկատմամբ հասարակության մեջ իշխող անհույս իրավիճակից, հայկական իշխանական համակարգի անհեռանկարությունից, որոնց դեպքում միայն երկրի իշխող վերնախավը կարող է թողնել իր կալվածքները օտար ափերում անորոշ, սակայն ավել կամ պա-

[415] Նույն տեղում
[416] Մ. Օրմանեան, սյուն. 2007:
[417] Շիլդբերգերը XV դարի սկզբին գրում է. «Զիփեռնի (Կիպրոս) թագաւորը շատ մը հայ ազնուականներ ունի իր արքունիքին մէջ, որովհետեւ շատ մօտ են իրարու» (տե՛ս Բազմավէպ, Յովհաննէս Շիլթպերկէր, էջ 241):
[418] Մ. Օրմանեան, սյուն. 2007, Ա. Ալպօյաճեան, Պատմութիւն Հայ գաղթականութեան, հ. Բ, էջ 550:



կաս չափով ապահով գոյատևելու դիմաց: Հատկանշական է, որ Լանկ Թամուրի և ռամազանյանների արշավանքներից առաջ՝ 1400 թ., Կիլիկիայում, ըստ Ղ. Ալիշանի ժամանակագրական ցանկի, տեղի է ունենում սաստիկ հողմ, որը տևում է 30 օր,[419] որին էլ հաջորդում է սովը: Ըստ երևույթին դաշտային շրջաններում տեղի են ունենում հեղեղումներ, որի պատճառով էլ հացահատիկի և այլ մշակաբույսերի բերքը այդ տարի առավել պակաս է լինում: Դրան գումարվում են Լանկ-Թամուրի և ապա ռամազանյանների արշավանքները:

1402 թ. և 1404 թ. հիշատակվող երկու գաղթերը, մինևույն իրադարձության մասին են, քանզի հիշատակարանները գրեթե նույնն են, շփոթը առաջ է եկել հիշատակարաններից մեկի թվականի սխալ հիշատակումից: Ղ. Ալիշանը, իր ժամանակագրական ցանկը կազմելիս, ըստ երևույթին, նույնպես այդ կարծիքին է ունեցել, որտեղ գաղթի մեկ ընդհանուր թվական է նշում՝ 1403 թ.,[420] այսպիսով վերցնելով երկու հիշատակվող թվականների միջինը: Փաստորեն ունենք գաղթի երկու թվական և աղբյուրների սակավության պատճառով դժվար է պարզել իրականը: Սակայն, առավել հավանականը այս երեք թվականներից 1402 թ. է, քանզի դա անմիջականորեն հաջորդել է 1400 թ. երաշտին, ապա և 1401 թ. Լանկ-Թամուրի արշավանքին:

Ռամազանյաններին հաջողվում է մամլուքներից նվաճել Դաշտային Կիլիկիայի զգալի մասը, համենայն դեպս Տարսոնը մինչև 1415–1418 թթ. լինում է նրանց տիրապետության տակ: Անշուշտ, Ռամազանյանների գերիշխանությունը ընդունեցին նաև Լեռնային Կիլիկիայում պահպանված հայկական ինքնիշխան կազմավորումները: Ռամազանյանները սկսեցին միջամտել նաև Հայոց եկեղեցու գործերին: Այսպես, 1404 թ. Կարապետ Կեղեցի կաթողիկոսին գահընկեց անելու և Հակոբ Գ Սսեցուն հայոց հոգևոր հովիվ օծելու

[419] Սիսուան, Ցանկ ժամանակագրական, էջ 560:
[420] Նույն տեղում:

գործում մեծ եղավ Ռամազան ամիրի մասնակցությունը:[421]

Սակայն մամլուքների գերիշխանության կորուստը Կիլիկիայում կրում էր ժամանակավոր բնույթ և պայմանավորված էր միայն Լանկ Թամուրի արշավանքներով ու նրանից կրած պարտությամբ: Նմանատիպ թուլացում ապրեց նաև նորաստեղծ Օսմանյան սուլթանությունը, որը ոտքի կանգնեց Թամուրյանների պետության տրոհումից հետո:

Այս խառնակ ժամանակ շարունակվում էր Կոստանդինի իշխանությունը Լեռնային Կիլիկիայի շրջաններում: Արտաքին քաղաքական ստեղծված իրավիճակը խոսում էր Կոստանդինի իշխանության գոյատևման մասին: Այդ շրջանում՝ XV դարի առաջին տասնամյակում, նրան չէին կարող սպառնալ ո՛չ մամլուքյան սուլթանությունը, ո՛չ էլ նոր-նոր ոտքի կանգնող և իրենց ուշադրությունը դեպի Արևմուտք սևեռած օսմանյան թուրքերը:

Մինչ այդ սուլթանությունից Կոստանդինի ունեցած վասալական կախումը կամ չեզոքացվել էր կամ էլ կրում էր զուտ ձևական բնույթ: Համենայն դեպս, այդ շրջանում Լեռնային Կիլիկիայի հայկական իշխանություններին չէր սպառնում նաև Լանկ Թամուրը: Միակ իրական վտանգը այդ ժամանակ կարող էր գալ ռամազանյաններից, որոնց հետ հարաբերությունների մասին, ցավոք, աղբյուրներ գոյություն չունեն, սակայն կարելի է կարծել, որ նրանց հետ Կոստանդինը կարողացել է ինչ-ինչ հաշտության եզրեր գտնել: Այստեղ կարելի է համաձայնել Մ. Օրմանյանի այն տեսակետի հետ, որ Կիլիկիայի հյուսիսում ապաստանած հայ իշխանները, օգտվելով քաղաքական նոր իրավիճակից, համեմատաբար խաղաղ շրջան ապրեցին:[422]

Որոշ հայկական ինքնավարություններ գոյություն ունեին նաև Կիլիկիայի դաշտային շրջաններում: Դրա վկայությունն է XV դարի սկզբին Կիլիկիայով անցած իսպանացի աշխարհագիր Յոհաս Դես

---

[421] Մ. Օրմանեան, սյուն. 2017:
[422] Նույն տեղում, սյուն 1987:



Վիլլադեսի ներկայացրած դրոշակը: Այն նա ներկայացնում է որպես Տարսոն քաղաքի զինանշան:[423] Այդ փաստն էլ թուրք պատմաբան Ի. Հակկիին հիմք է տվել կարծելու, որ XV դարի առաջին քառորդում Տարսոնում նա հայկական ինքնավարություն է գոյություն ունեցել, որի հիմնավորումը, սակայն նորահայտ աղբյուրների կարիք ունի:[424]

Հենց այդ շրջանում՝ XV դարի առաջին տասնամյակում, բազմամարդ դարձան Տավրոսյան լեռներում գտնվող Հաճըն և Զեյթուն քաղաքները: Ընդհանրապես Սեյհան և Ջահան գետերի ակունքների շրջանն այդ ժամանակահատվածում առավել հայաշատ դարձավ, ինչի վկայությունն այդ քաղաքների վկայարաններն են սկսյալ այդ շրջանից:[425] Անշուշտ, ճիշտ չի լինի կարծել, որ այդ բնակավայրերը հիմնադրվեցին հենց այդ ժամանակ, քանի որ դրանք առավել վաղ շրջաններից գոյություն ունեին,[426] սակայն նրանց բազմամարդ և Լեռնային Կիլիկիայի աչքի ընկնող կենտրոններ դառնալը կապված է այդ ժամանակաշրջանի հետ:

Լեռնային Կիլիկիայի հարավից հայ բնակչության տեղաշարժը դեպի Տավրոսյան լեռնածերպեր տեղի է ունենում հետագայում ևս: Այնպես որ Լեռնային Կիլիկիայի հյուսիսում և շրջակայքում նոր հայաշատ բնակավայրերի առաջանալը կարող է հաստատել այն, որ նշված ժամանակաշրջանում Կիլիկիայի լեռնային շրջանները՝ Բարձրբերդը, Սեյհան (Վահկաբերդի շրջանը) և Ջահան գետերի վերնագավառները հարաբերական խաղաղության պայմաններում լիովին վերահսկվում էին Կոստանդինի և հայ իշխանների կողմից: Սակայն եթե Կիլիկիայի լեռնային շրջաններում Կոստանդինն ընդունվում էր որպես հայոց թագավոր, ապա թագավորի տիտղոսի

---

[423] Ա.Ն. Պատրիկ, Պատմական հայ դրոշները, Պատմա-բանասիրական հանդես, 1967, թիվ 1, էջ 166–169:
[424] Նույն տեղում:
[425] Զեյթունի մասին առաջին հիշատակումը տրվում է 1409 թ. (տես ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 98):
[426] Յ. Պօղոսեան, Հաճընի ընդհանուր պատմութիւնը, Լօս Անճէլըս, 1942, էջ 123:

ճակատագիրը մի փոքր այլ էր:
Լևոն Լուզինյանը, ինչպես նշվեց, մահացավ 1393 թ. նոյեմբե-
րին, Փարիզում:[427] Նրա մահից հետո Հայոց թագավոր տիտղոսը,
որպես իր ամենամերձավոր արյունակիցների, «օրինական կեր-
պով» անցավ Կիպրոսում իշխող Լուզինյան տոհմին: Ընդ որում,
դեռևս Լևոնի թագավորումից առաջ 1374 թ. Կիպրոսի արքա Պետ-
րոս II-ը, (1369–1382 թթ.) ի թիվս Կիպրոսի ու Երուսաղեմի թագա-
վորի տիտղոսների, իր թագի տիտղոսաթերթում ավելացրեց նաև
հայոց թագավորի տիտղոսը: Կիպրոսի հաջորդ թագավորը՝ Հակոբ
I-ը (1382–1398 թթ.) նույնպես հռչակվեց Հայոց թագավոր, այս ան-
գամ արդեն Լևոն Լուզինյանի անվանական գահակալության պայ-
մաններում: Փաստորեն, 1380-ական թթ. Հայոց թագավոր տիտղո-
սով երեք թագավորներ կային, որոնցից Լեւոնը համարվում էր օրի-
նական՝ օծված բոլոր անհրաժեշտ արարողություններով, սեփա-
կան հատված դրամներով, մյուսը՝ Հակոբ I էր, որի կողմից տիտղո-
սի սեփականացումը միջնադարյան իրավունքի տեսակետից ապօ-
րինի էր, և որի իրական իշխանությունը որպես հայոց թագավորի
սահմանափակվում էր թերևս Կոռիկոսի շրջակայքի մի շարք
շրջաններով: Երկրորդը Կիպրոսի Լուզինյաններն էին, որոնք հայոց
թագավոր տիտղոսը պահպանեցին մինչև սեփական թագավորութ-
յան կորուստը՝ 1473 թ.: Հայոց թագավորի տիտղոսը հետագայում
բաժին հասավ Պիեմոնտում իշխող Սավոյան ընտանիքին: Հաջոր-
դը Կոստանդինն էր, որն իրական ուժ ուներ հայոց թագավորի եր-
կիր համարվող Կիլիկիայում: Ընդ որում, հենց՝ XV դարի սկզբին,
երբ վերացել էր մամլուքյան իշխանությունը հնարավոր է, որ Կոս-
տանդինը տիրած լիներ նաև Սիսին իր շրջակայքով, որը փաստո-
րեն, նրան հնարավորություն կտար թողարկելու սեփական դրամ-

[427] Լևոնը մինչև կյանքի վերջը Եվրոպայում ընկալվում էր որպես Հայոց թագավոր, նույնիսկ պահպանվեցին Հայոց արքունիքի որոշ պաշտոններ, օրինակ 1384 թ. հիշատակվում է հայոց արքունիքի սենեշալ Յոհան դե Կուրսինին (տե՛ս Aloysius L. Tăutu, p. 70).



ները: Բացի այդ, մամլուք կուսակալների մասին մենք XIV դարի
վերջից ընդհուպ մինչև 1415 թ., այլևս հիշատակումներ չունենք:
Ուստի հնարավոր է որ Լանկ-Թամուրի հավանական արշավանքից
մինչև 1421 թ. միջակայքում Սիսը մի որոշ ժամանակ մնացած լի-
ներ Կոստանդինի իշխանության տակ:
1410 թ. երկրորդ կեսին Եգիպտոսի մամլուքյան սուլթանութ-
յունը նորից վերադառնում է տարածաշրջան: Լանկ Թամուրի քա-
ղաքական ասպարեզից հեռանալը, նրա հաջորդների կայսրությու-
նը պահպանելու անկարողությունը, օսմանյան թուրքերի Լանկ
Թամուրի հարվածներից վերականգնվելը և մամլուքյան սուլթա-
նության թուլացումը քաղաքական անկայուն իրավիճակ էր ստեղ-
ծել Առաջավոր Ասիայում ընդհանրապես և Կիլիկիայում մասնավո-
րապես: Դրանից, ինչպես նշեցինք, որոշակիորեն օգտվել էր Կոս-
տանդինը: Սակայն դրանից առավել մեծ օգուտներ էին քաղել
թուրքական երկու ցեղային միավորումները, կարամանցիները,
որոնց հաջողվել էր իրենց ենթարկել նախկին հայկական թագավո-
րության արևմտյան գավառները, և ռամազանյանները, որոնք հաս-
տատվել էին երկրի կենտրոնական շրջաններում: Եվ ահա 1420 թ.
մամլուքները վերանվաճում են Տարսոնը,[428] որից կարելի է ենթադ-
րել, որ նրանք մինչ այդ արդեն վերագրավել էին Ջահան և Սեյհան
գետերի հովիտները: Ղ. Ալիշանը, մեջբերելով Անանուն Կիլիկեցի
ժամանակագրին, իր ժամանակագրական ցանկում 1421 թ. դիմաց
գրում է. «Երկրորդ գաղթ Սսեցւոյ յայնկոյս ծովու»:[429] Դժվար է
պարզել, թե ինչ ծավալներ ընդունեց այն: Այն երկրորդ խոշոր
գաղթն էր վերջին քսան տարվա ընթացքում և կապված էր մամ-
լուքների հերթական արշավանքի ու Դաշտային Կիլիկիայում վե-
րահաստատվելու հետ: Աղբյուրների չափազանց սակավությունը,
ցավոք, թույլ չի տալիս հանգամանորեն ուսումնասիրել վերոհիշ-
յալ շրջանը :

[428] Սիսուան, էջ 561:
[429] Նույն տեղում, էջ 543:

1423–1424 թթ. մամլուքյան սուլթանը մեծ զորքով հարձակվում է Կոստանդինի վրա: Հայտնի չէ, թե սուլթանը միայն Կոստանդինին է թիրախ դարձրել իր այս հարձակման ժամանակ, թե՝ ոչ: Առավել հավանական է, որ արշավանքը կատարվել է Կիլիկիան ինչպես ռամազանյաններից, այնպես էլ Կոստանդինից վերջնականապես վերանվաճելու և իրեն ենթարկելու նպատակով:

Կոստանդինը դրան նախորդած շրջանում զերծ էր մնացել մամլուքյան գերիշխանությունից և միգուցե իր հզորությամբ սկսել էր անհանգստացնել մամլուքներին, որոնց Դաշտային Կիլիկիայում գտնվող տիրույթներում հայ բնակչությունը դեռևս մեծամասնություն էր կազմում: Իբրև մամլուքյան պետության համար Կոստանդինից եկող անհանգստության ապացույց կարող էր ծառայել այն փաստը, որ նրա բանակը գլխավորում էր անձամբ սուլթանը: Համեմատության համար նշենք, որ 1375 թ. Սսի գրավումը ղեկավարում էր Հալեպի ամիրը: Ղ. Ալիշանը մեջբերում է անհայտ աղբյուրը. «...եւ ասեն թէ թագաւորն ի Կիպրոս անցաւ, եւ ընդ նոսին բազում իշխանք, իւրաքանչիւր տոհմականօքն հանդերձ, զի եկն ի վերայ նոցա Սուլթանն Եգիպտոսի Մուզէֆէրն, եւ ոչ կարացին զդէմ ունել վասն որոյ 30 000 տուն անցան յայնկոյս ծովուն, որպէս ի վերագոյն գրեցաք...»,[430] սակայն այստեղ մի փոքր անճշտություն կա: Բանն այն է, որ Մուզեֆեր սուլթանը իշխել է 1421 թ., ընդ որում մի քանի ամիս, ուստի և բացառվում է նրա արշավելն այդ մի քանի ամսվա ընթացքում: Արշավանքը կատարել է Աշրաֆ Սեյֆ Ադ դին Բարս Բեյ սուլթանը, որի փոխարեն հեղինակը սխալմամբ նշել է Մուզեֆերի անունը:[431] Փաստորեն, ըստ Անանուն ժամանակագրի, Կոստանդինին, որն այդ ժամանակ առնվազն յոթանասունամյա ծերունի պետք է լիներ, չի հաջողվում դիմագրավել հակառակորդի ստվարաթիվ ուժերին, որի պատճառով էլ ստիպված հեռանում է

[430] Նույն տեղում:
[431] Стэнли Лэн –Пуль, Мусульманские династии, Москва 2004, стр. 63.



Կիպրոս:[432] Կարծում ենք, որ սուլթանի Լեռնային Կիլիկիա կատարած արշավանքը մաս էր կազմում Կիպրոս կատարած արշավանքի. 1424–1426 թթ. Կիպրոս ներխուժած մամլուքներին Յանուս թագավորն ուժերի լարման և հսկայական ռազմատուգանքի գնով կարողացավ հեռացնել կղզուց:[433] Ընդ որում մամլուքների դեմ կիպրական թագավորի վարած մարտերին մասնակցություն բերեց նաև տեղի ստվարացած հայ համայնքը:[434]

Ազգաբնակչության գաղթի փաստը 1421 թ. առավել փոքր չափերով, անշուշտ, կարող է իրական լինել, սակայն այն տեղի է ունեցել ոչ այնքան դեպի հարավ և արևմուտք, այլ՝ դեպի հյուսիս և հյուսիս-արևելք: Այսինքն՝ դեպի Կապանի, Վահկայի գավառ կամ Հաճըն և Ուլնիա-Զեյթունի շրջանները:[435] Հետագա դարերում և մասնավորապես XV դարում, հայ ազգաբնակչության աճը այս տարածքներում գալիս է վկայելու այդ փաստը:

XV դարի առաջին կեսը նպաստավոր չեղավ նաև Կիլիկիայում Հայոց կաթողիկոսության համար: 1441 թ. «Լուսաապաստանած Հայոց կաթողիկոսության համար: 1441 թ. «Լուսաապաստանած Հայոց կաթողիկոսության համար»

[432] XI–XVIII դդ. Անանուն ժամանակագրության մեջ 1496 թ. դիմաց նշված է, որ մահացավ Թորոս Հռոմկլայեցին՝ Օշին թագավորի որդին: Եղած տեղեկությունը սակայն հնարավորություն չի տալիս պարզելու վերոհիշյալ անձի ինքնությունը (տե՛ս ժամանակագրություն XI–XVIII դդ., էջ 273):
[433] Norman Housley, The later crusades, p. 196.
[434] Սիսուան, էջ 561:
